«ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ՈՐԱԿԻ ԱՊԱՀՈՎՄԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԿԵՆՏՐՈՆ»
ՀԻՄՆԱԴՐԱՄ



ՎԱՐԴԵՆԻՍԻ «ԲԱԴԵՅԱՆ» ՊԵՏԱԿԱՆ ՔՈԼԵՋ ՊՈԱԿ-Ի ԻՆՍՏԻՏՈՒՑԻՈՆԱԼ ՀԱՎԱՏԱՐՄԱԳՐՄԱՆ ՓՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ՋԵԿՈՒՅՑ

Երևան – 2025

ՆԱԽԱԲԱՆ

Վարդենիսի «Բադեյան» պետական քոլեջի (այսուհետ՝ ՎԲՊՔ կամ քոլեջ) ինստիտուցիոնալ հավատարմագրումն իրականացվել է հաստատության կողմից ներկայացրած դիմումի համաձայն: Ինստիտուցիոնալ հավատարմագրման գործընթացը համակարգում և իրականացնում է «Մասնագիտական կրթության որակի ապահովման ազգային կենտրոն» (ՈԱԱԿ) հիմնադրամը: Իր գործողություններում ՈԱԱԿ-ն առաջնորդվել է «ՀՀ կառավարության 2011թ.-ի հունիսի 30-ի N978-Ն որոշմամբ հաստատված ՀՀ մասնագիտական կրթական ծրագրեր իրականացնող ուսումնական հաստատությունների և դրանց մասնագիտությունների պետական հավատարմագրման» կարգով և 2011թ. հունիսի 30-ին հաստատված «ՀՀ մասնագիտական կրթության հավատարմագրման չափանիշները հաստատելու մասին» N959-Ն որոշմամբ: Գնահատումը կատարվել է ՀՀ ինստիտուցիոնալ հավատարմագրման 10 չափանիշներով:

Փորձաքննությունն իրականացրել է «Մասնագիտական կրթության որակի ապահովման ազգային կենտրոն» հիմնադրամի փորձագիտական խմբի ձևավորման կարգ»-ի պահանջներին համապատասխան ձևավորված անկախ փորձագիտական խումբը, որը բաղկացած է 4 տեղացի փորձագետներից: Հավատարմագրման գործընթացն իրականացվել է ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության ֆինանսավորմամբ: Ինստիտուցիոնալ հավատարմագրումը միտված է ոչ միայն որակի ապահովման արտաքին գնահատմանը, այլև հաստատության կառավարման և կրթական ծրագրերի որակի շարունակական բարելավմանը: Առանձանահատուկ շեշտադրվել է հաստատության և գործատուների հետ համագործակցությունը և դրա ազդեցությունը կրթության բովանդակության վրա:

Զեկույցը պարունակում է քոլեջի ինստիտուցիոնալ կարողությունների փորձագիտական գնահատման արդյունքները՝ ըստ ՀՀ մասնագիտական կրթության հավատարմագրման չափանիշների:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ....3
ՄՈՒՀ-Ի ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՀԱՄԱՏԵՔՍՏԸ....4
ԻՆՍՏԻՏՈՒՑԻՈՆԱԼ ԿԱՐՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՓՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ ԱՄՓՈՓՈՒՄ....5
ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ....12
ՓՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ԽՄԲԻ ԿԱԶՄԸ....12
ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ ԸՆԹԱՑՔԸ....12
ԳՆԱՀԱՏՈՒՄ՝ ԸՍՏ ՀԱՎԱՏԱՐՄԱԳՐՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԻ....15
I. ԱՌԱՔԵԼՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՆՊԱՏԱԿՆԵՐԸ....15
II. ԿԱՌԱՎԱՐՈՒՄՆ ՈՒ ՎԱՐՉԱՐԱՐՈՒԹՅՈՒՆԸ....18
III. ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԸ....22
IV. ՈՒՍԱՆՈՂՆԵՐԸ....27
V. ՊՐՈՖԵՍՈՐԱԴԱՍԱԽՈՍԱԿԱՆ ԵՎ ՈՒՍՈՒՄՆԱՕԺԱՆԴԱԿ ԿԱԶՄԸ....32
VI. ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԶԱՐԳԱՑՈՒՄԸ....36
VII. ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ ԵՎ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԸ....39
VIII. ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ....43
IX. ԱՐՏԱՔԻՆ ԿԱՊԵՐԸ ԵՎ ՄԻՋԱԶԳԱՅՆԱՑՈՒՄԸ....46
X. ՈՐԱԿԻ ՆԵՐՔԻՆ ԱՊԱՀՈՎՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԸ....49
ԳՆԱՀԱՏԱԿԱՆՆԵՐԸ՝ ԸՍՏ ՀԱՎԱՏԱՐՄԱԳՐՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԻ....53
ՀԱՎԵԼՎԱԾՆԵՐ....54
ՀԱՎԵԼՎԱԾ 1. ՓՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ԽՄԲԻ ԱՆԴԱՄՆԵՐԻ ԻՆՔՆԱԿԵՆՍԱԳՐԱԿԱՆՆԵՐ....54
ՀԱՎԵԼՎԱԾ 2. ՓՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ԱՅՑԻ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑԸ....56
ՀԱՎԵԼՎԱԾ 3. ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՎԱԾ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԻ ՑԱՆԿ....58
ՀԱՎԵԼՎԱԾ 4. ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՎԱԾ ՌԵՍՈՒՐՍՆԵՐ....59
ՀԱՎԵԼՎԱԾ 5. ՄՈՒՀ-Ի ԿԱԶՄԱԿԵՐՊԱԿԱՆ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ....60
ՀԱՎԵԼՎԱԾ 6. ՀԱՊԱՎՈՒՄՆԵՐԻ ՑԱՆԿ....61

ՄՈՒՀ-Ի ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՀԱՄԱՏԵՔՍՏԸ

ՄՈՒՀ-ի գործունեությունը և պատմությունը.

Մուհը հիմնադրվել է 1989թ.-ին՝ որպես «Վարդենիսի պոլիտեխնիկական տեխնիկում» անվանումով: Ուսումնական հաստատությունն այս տարիների ընթացքում մի քանի անգամ անվանափոխվել է: 2002թ.-ից ՀՀ ԿԳ նախարարի N 447-Մ հրամանով Վարդենիսի պոլիտեխնիկական տեխնիկումը վերանվանվել է որպես «Վարդենիսի պետական քոլեջ»: 2013թ.-ին ՀՀ ԿԳ նախարարի սեպտեմբերի 25-ի հրամանով «Վարդենիսի պետական քոլեջը» վերանվանվել է Վարդենիսի «Բադեյան» պետական քոլեջ[1]:

Քոլեջի գրանցման հասցեն՝ ՀՀ Գեղարքունիքի մարզի Վարդենիսի քաղաքում: Քոլեջն առաջին անգամ է անցնում ինստիտուցիոնալ հավատարմագրման գործընթաց:

ՄՈՒՀ-ի զարգացման ուղղությունները և կրթական ծրագրերը

Քոլեջում նախնական և միջնակարգ կրթության հիմքով սովորում է 331 ուսանող:

Քոլեջում դասավանդում են 66 դասախոս, որոնցից 58-ը ունեն բարձրագույն կրթություն, իսկ 8-ը՝ միջին մասնագիտական: Արձանագրվել են դեպքեր, երբ որոշ դասախոսների մասնագիտական որակավորումը չի համապատասխանում դասավանդվող մոդուլին, սակայն նրանք ունեն ավելի քան 10 տարվա փորձ և շարունակում են դասավանդել: Ներկայումս քոլեջում ներգրավված են 2 գործատու դասախոս և 2 շրջանավարտ-դասախոս:

Վարդենիսի «Բադեյան» պետական քոլեջում իրականացվում է միջին մասնագիտական 8 կրթական ծրագիր՝ «Բանկային գործ», «Համակարգչային գեղարվեստական նախագծում», «Սոցիալական աշխատանք», «Քույրական գործ», «Գործավարություն՝ օտար լեզվի իմացությամբ», «Հաշվողական տեխնիկայի և ավտոմատացված համակարգերի ծրագրային ապահովում», «Դեղագործություն», «Բուժական կոսմետոլոգիա» և նախնական մասնագիտական 9 կրթական ծրագրեր՝ «Համակարգիչների շահագործում», «Խոհարարական գործ», «Գյուղացիական (ֆերմերային) տնտեսության կազմակերպում», «Կարի արտադրության տեխնոլոգիա», «Եռակցման աշխատանքների տեխնոլոգիա», «Ոսկերչություն», «Յուղի, պանրի և կաթի արտադրության տեխնոլոգիա», «Վարսավիրական արվեստ և զարդային դիմահարդարում», «Հարդարման և շինարարական աշխատանքների իրականացում»:

Քոլեջի 341 շրջանավարտներից 118-ը շարունակում են ուսումը բուհերում, իսկ 113-ը աշխատում են, որոնցից 66-ը աշխատում են ստացած մասնագիտության ոլորտում: Զբաղվածության ցուցանիշները հատկապես բարձր են «Քույրական գործ» և «Վարսավիրական արվեստ և զարդային դիմահարդարում» մասնագիտությունների շրջանակներում, որտեղ յուրաքանչյուր ծրագրի շրջանակում 9 շրջանավարտ զբաղված են իրենց մասնագիտական ոլորտում:

[1] ՎԱՐԴԵՆԻՍԻ «ԲԱԴԵՅԱՆ» ՊԵՏԱԿԱՆ ՔՈԼԵՋ ԻՆՔՆԱՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ, ԷՋ 4-5

ԻՆՍՏԻՏՈՒՑԻՈՆԱԼ ԿԱՐՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՓՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ ԱՄՓՈՓՈՒՄ

Վարդենիսի «Բաղեյան» պետական քոլեջի ինստիտուցիոնալ կարողությունների փորձաքննությունն իրականացվել է «Մասնագիտական կրթության որակի ապահովման ազգային կենտրոն» հիմնադրամի փորձագիտական խմբի ձևավորման կարգ»-ի պահանջներին համապատասխան ձևավորված անկախ փորձագետների խմբի կողմից: Գնահատումը կատարվել է ՀՀ կառավարության 2011 թվականի հունիսի 30-ի N 959–Ն որոշմամբ հաստատված ինստիտուցիոնալ հավատարմագրման 10 չափանիշներով:

Գնահատումն իրականացնելիս փորձագիտական խումբը հաշվի է առել, որ քոլեջը միջին մասնագիտական ուսումնական հաստատություն է՝ իր սահմանված առաքելությամբ:

Փորձագիտական խումբը հաշվի է առել, որ Վարդենիսի «Բաղեյան» պետական քոլեջն առաջին անգամ է անցնում ինստիտուցիոնալ հավատարմագրում, ինչպես նաև այն, որ քոլեջը ներկայումս գտնվում է անցումային փուլում, որը հիմնականում պայմանավորված է մի քանի տարի ՄՈՒՀ-ի տնօրենի ընտրության չկայացմամբ և 2023 թ. նոր տնօրենի նշանակմամբ: Այս իրավիճակը ստեղծել է մի շարք մարտահրավերներ ինչպես կառավարման, այնպես էլ կրթական գործընթացների կազմակերպման առումով: Վերոնշյալ հանգամանքները ղեկավար կազմից պահանջել են մշակել հստակեցված անցումային ռազմավարություն՝ ուղղված առաջնահերթ խնդիրների լուծմանը:

Քոլեջի համար 2024-2025 թվականները դիտարկվում են որպես բեկումնային փուլ, որոնք ներառում են կառավարման և վարչարարության բարելավում, որակի ապահովման համակարգի ներդրում, կրթական ծրագրերի արդիականացում, աշխատաշուկայի պահանջների վերլուծություն, ուսանողների մոտ հետազոտական մտածողության զարգացում և այլն: Անցումային փուլը քոլեջի համար ոչ միայն մարտահրավեր է, այլև հնարավորություն՝ վերանայելու և վերաձևակերպելու որակի ապահովման քաղաքականությունը և ներդնելու տվյալահենք մոտեցումներ, որոնք կնպաստեն հաստատության կայուն զարգացմանը

Վարդենիսի «Բաղեյան» պետական քոլեջն ունի հստակ ձևակերպված առաքելություն, որն ամրագրված է 2025–2030 թթ. զարգացման ռազմավարական ծրագրում և համահունչ է ՈՒԱԾ-ին ու տարածաշրջանի աշխատաշուկայի կարիքներին: Ռազմավարական փաստաթղթում սահմանվել են հիմնարար ուղղություններ՝ կառավարման բարելավում, կրթական ծրագրերի արդիականացում, միջավայրի զարգացում և շահակիցների մասնակցություն, սակայն գործողությունների մի մասի ֆինանսական հիմնավորումը և արդյունքների գնահատման ցուցիչները դեռևս բացակայում են: Քոլեջը ռազմավարական կառավարումն իրականացնում է անցումային փուլի պայմաններում, որի արդյունքում ռազմավարական նպատակների, ստորաբաժանումների պլանների և հաշվետվությունների միջև կապը դեռևս լիարժեք ձևավորված չէ, իսկ մշտադիտարկման մեխանիզմները՝ ոչ ամբողջական:

ՎԲՊՔ-ում վերջին երկու տարիներին իրականացվել են կառավարման համակարգի բարեփոխումներ՝ հաստատվել է կառավարման կառուցվածքը, ձևավորվել են խորհուրդներ ու հանձնաժողովներ, մշակվել են պաշտոնի նկարագրեր, ռազմավարական և ընթացակարգային փաստաթղթեր: Քոլեջը որդեգրել է ՊԻԳԲ սկզբունքը: Հաշվի առնելով, որ քոլեջը գտնվում է անցումային փուլում, ՊԻԳԲ-ի շրջանակում առավել ակտիվորեն իրականացվում են պլանավորման և իրագործման փուլերը: Չնայած ՎԲՊՔ-ում իրականացված կառավարման բարեփոխումներին, վարչարարության որոշ գործընթացներ դեռևս թերի են: Մասնավորապես՝ ստորաբաժանումների միջև հորիզոնական

համագործակցությունը թույլ է արտահայտված, ինչը սահմանափակում է տեղեկատվության փոխանակումն ու համադրված գործողությունների իրականացումը: Աշխատանքային պլաններում գործողությունները հիմնականում ձևակերպված են ընդհանրական՝ առանց հստակ նպատակների, չափելի ցուցանիշների և վերջնարդյունքների, ինչի հետևանքով բարդանում է առաջընթացի գնահատումը, հաշվետվողականության ապահովումը և գործնական բարելավումների իրականացումը: Բացի այդ, թեև որոշ տվյալներ հավաքագրվում են, սակայն դրանց վերլուծությունն ու որոշումների վրա դրանց ազդեցությունը համակարգված չեն, ինչի արդյունքում քոլեջը չի կարողանում լիարժեք օգտագործել տեղեկատվությունը՝ հիմնավորված և տվյալահեն որոշումներ կայացնելու համար:

Քոլեջում որակի ապահովման համակարգի ներդրումը մեկնարկել է միայն 2023 թվականից՝ ներառելով պատասխանատուի գործառույթների ձևավորում, ՈՆԱ հանձնաժողովի ստեղծում և մի շարք փաստաթղթերի մշակում: Այնուամենայնիվ, համակարգը դեռ գտնվում է ձևավորման նախնական փուլում, ինչը պայմանավորված է քոլեջում առկա կառավարման անցումային փուլով, և արտահայտվում է պլանավորման թերիությամբ, գործիքակազմի սահմանափակ կիրառմամբ և շահակիցների մասնակի ներգրավմամբ: Արդյունքում համակարգը դեռ չի ապահովում տվյալների հիման վրա որոշումների կայացման լիարժեք իրականացում՝ սահմանափակելով ընթացիկ գործընթացների արդյունավետության բարելավման հնարավորությունները:

Քոլեջում իրականացվող կրթական ծրագրերը բազմազան են և հիմնականում համահունչ են աշխատաշուկայի պահանջներին. վերջին տարիներին ներդրվել են նոր մասնագիտություններ՝ շահակիցների առաջարկների հիման վրա, իսկ ծրագրերում կատարվել են մի շարք արդիականացումներ՝ ներառյալ պրակտիկայի, դասավանդման մեթոդների և ուսանողական առաջադրանքների ձևերը: Դասավանդման գործընթացում ընդգրկվում են ինտերակտիվ ու հետազոտական մեթոդներ, ներդրվել է տարբերակված գնահատման համակարգ, ուսանողներին տրամադրվում են նաև ստեղծագործական, վերլուծական և հետազոտական բնույթի առաջադրանքներ: Քոլեջը սկսել է իրականացնել կրթական ծրագրերի մշտադիտարկման մեխանիզմների ներդրման գործընթաց: Քոլեջը իրականացրել է մի շարք կրթական ծրագրերի բենչմարքինգ՝ համեմատելով դրանք այլ քոլեջների նմանատիպ ծրագրերի հետ և ստացել բարելավման համար կիրառելի արդյունքներ: Մտահոգիչ է, որ մշտադիտարկումը դեռևս գործնականում չի իրականացվում, ինչը կարող է սահմանափակել ծրագրերի շարունակական բարելավումը:

Քոլեջում ակնհայտ են պրոֆեսորադասախոսական կազմի կառավարման ու զարգացման ոլորտում համակարգային փոփոխությունների միտումները՝ ներդրվել են մասնագիտական առաջընթացի ապահովման, աշխատանքի գնահատման, մենթորության և կայունության վերաբերյալ կարգավորող փաստաթղթեր: Դասախոսների համար ձևավորվել են աջակցման և առաջխաղացման մեխանիզմներ՝ ներառյալ մենթորություն, փոխադարձ դասալսումներ, մեթոդական զեկուցումներ, անհատական մատյաններ և բազմաբնույթ գնահատման գործիքներ, ինչպես նաև իրականացվում են կարիքների վրա հիմնված վերապատրաստումներ՝ ներգրավելով տեղական ու միջազգային մասնագետների: Չնայած դրական միտումներին, գնահատման արդյունքները դեռևս կայուն կերպով չեն կիրառվում որոշումների կայացման, մասնագիտական աճի և վերապատրաստումների պլանավորման համար: Միևնույն ժամանակ, առկա են խնդիրներ՝ որոշ մասնագիտությունների դասախոսների սահմանափակ քանակ, ծանրաբեռնվածություն և դասախոսների թեկնածուների բազայի բացակայություն: Այս հանգամանքները ցույց են տալիս, որ անհրաժեշտ է ոչ միայն ամրապնդել դասախոսների

կառավարման առկա մեխանիզմները, այլև ապահովել կանխատեսելիություն՝ կադրային պլանավորման և մարդկային ռեսուրսների զարգացման հարցում:

Վարդենիսի «Բադեյան» պետական քոլեջը վերջին երկու տարիներին զգալիորեն բարելավել է նյութատեխնիկական բազան՝ լաբորատորիաների և լսարանների վերազինման, նոր տեխնիկայի և էլեկտրոնային գրադարանի ներդրման միջոցով: Քոլեջը գործնական ուսուցման նպատակով արդյունավետ համագործակցում է ոլորտային գործատուների հետ և քայլեր է ձեռնարկում ֆինանսական կայունության ապահովման համար՝ նոր քաղաքականությունների և ընթացակարգերի ներդրմամբ: Քոլեջի նոր ղեկավարության ջանքերով՝ 2024 թվականին մարվել են նախկինում կուտակված ֆինանսական պարտավորությունները, ինչն ապահովել է ֆինանսական կայունություն և ստեղծել բարենպաստ պայմաններ քոլեջի ռազմավարական նպատակների հետևողական իրականացման համար:

Քոլեջը ակտիվորեն աջակցում է ուսանողներին՝ սկսած մասնագիտական կողմնորոշումից մինչև կարիերայի ուղղորդում՝ կիրառելով տեղեկատվական միջոցառումներ, խորհրդատվություններ և ուսանողական խորհրդի ներգրավվածություն: Քոլեջը համակարգված կերպով վերհանում է ուսանողների կրթական կարիքները՝ հարցումների, քննարկումների և ՈւԽ-ի միջոցով, իսկ որոշ ուղղություններով արդեն ձեռնարկվել են բարելավման քայլեր: Չնայած առկա առաջընթացին, անհրաժեշտ է ամրապնդել ուսանողների նկատմամբ լրացուցիչ աջակցությունը՝ օրինակ՝ օտար լեզուների ու այլ հմտությունների խորացման դասընթացներով, բարելավել շրջանավարտների հետ կապի մեխանիզմները:

Քոլեջում հետազոտական գործունեությունը ռազմավարական առաջնահերթություն է՝ ներառված ռազմավարական ու կարճաժամկետ փաստաթղթերում, և ուսանողներն ներգրավված են տարբեր նախագծային, կիրառական և վերլուծական բնույթի առաջադրանքներում՝ մասնագիտական մոդուլների շրջանակում: Մշակվել են հետազոտական աշխատանքների կազմման ու գնահատման կանոնակարգեր և խրախուսման քաղաքականություն, սակայն վերջինս դեռևս լիարժեք չի գործարկվում, իսկ դասախոսական կազմը սահմանափակ ներգրավվածություն ունի հետազոտական գործընթացում:

Անհրաժեշտ է ուսանողների և դասախոսների մասնակցության ընդլայնում, ինչպես նաև հետազոտական բաղադրիչի համակարգված ամրագրում բոլոր ծրագրերում՝ հետազոտական հմտությունների խորացման ու ստեղծագործական կարողությունների զարգացման նպատակով: Կարևոր է ապահովել ուսանողների և դասախոսների լայն շրջանակի ներգրավվածությունը հետազոտական գործընթացներում, ինչպես նաև ապահովել հետազոտական բաղադրիչի ամբողջական ընդգրկումը բոլոր կրթական ծրագրերում՝ նպաստելով վերլուծական մտածողության և ստեղծագործական հմտությունների շարունակական ձևավորմանը:

Քոլեջը մշակել է միջազգայնացման քաղաքականություն և համագործակցում է մի շարք տեղական ու միջազգային գործընկերների հետ: Ներկայումս ընթանում են նոր միջազգային ծրագրերի մշակման ու հայտերի ներկայացման գործընթացներ, սակայն դրանք հիմնականում դեռ հաստատման կամ պլանավորման փուլում են և չունեն տեսանելի արդյունքներ: Միևնույն ժամանակ, ինչպես ուսանողների, այնպես էլ աշխատակիցների մոտ օտար լեզուների տիրապետման ցածր մակարդակը խոչընդոտում է միջազգային նախագծերին ակտիվ մասնակցությունը և արտասահմանյան փորձի լիարժեք կիրառումը քոլեջում:

Հաստատության ուժեղ կողմերն են.

1) Կառավարման համակարգի կառուցակարգման և փաստաթղթայնացման զգալի առաջընթացը։
2) Շահակիցների, այդ թվում՝ ուսանողների, աշխատողների և գործատուների, կառավարչական գործընթացներին ներգրավման մշակույթի ձևավորումը։
3) Կրթության որակի ներքին գնահատման և վերահսկման համակարգերի ներդրման ու կատարելագործման ուղղությամբ քայլերի իրականացումը։
4) Կրթական ծրագրերի արդիականացման և շուկայի պահանջներին համապատասխանեցման հետևողական գործընթացը։
5) Դասախոսական կազմի մասնագիտական զարգացման ծրագրերի ներդրման և իրականացման շարունակականությունը։
6) Նյութատեխնիկական բազայի վերանորոգման և արդիականացման նկատելի արդյունքները
7) Ուսանողական խորհրդատվության, աջակցման և հետադարձ կապի գործիքակազմի ընդլայնումը։
8) Արտաքին գործընկերների հետ համագործակցության և փորձի փոխանակման հնարավորությունների ընդլայնումը։
9) Ուսանողական ստեղծագործական և հետազոտական նախագծերի խրախուսման կայուն քաղաքականության ձևավորումը։
10) Միջազգայնացման և միջազգային ծրագրերի ներգրավման գործընթացի աշխուժացումը։

Հաստատության թույլ կողմերն են.

1) Ֆինանսական պլանավորման և ռեսուրսների բաշխման համակարգերի թերի զարգացումը։
2) Զարգացման ռազմավարական և աշխատանքային պլանների չափելիության և արդյունքային ցուցանիշների բացակայությունը։
3) Վերլուծական և հաշվետվողական գործառույթների լիարժեք չկիրառման խնդիրը։
4) Կրթական ծրագրերի մշտադիտարկման և բարելավման մեխանիզմների ոչ բավարար գործնական կիրառությունը։
5) Դասախոսների վերապատրաստման գործընթացում նրանց ընդգրկվածության անհամաչափությունը
6) Ֆիզիկական և սոցիալական միջավայրի որոշ ենթակառուցվածքային օղակների (ճաշարան, մարզադահլիճ, ներառական ենթակառուցվածք) բացակայությունը։
7) Տեղեկատվության հրապարակման, հանրային հաշվետվողականության և պաշտոնական կայքի բացակայությունը։
8) Համայնքի և հանրության հետ համագործակցության ու սոցիալական պատասխանատվության ուղղությամբ գործողությունների սահմանափակ լինելը։
9) ՄԿԾ-ներում միջազգային փորձի և բենչմարքինգի արդյունքների կիրառման սահմանափակ դրսևորումը։
10) Որակի ներքին ապահովման գործընթացների պարբերականության և համակարգվածության պակասը։

Խորհրդատվություններ.

Տվյալահենք կառավարում

1. Վերանայել ՌԾ պլան-ժամանակացույցը՝ հստակ սահմանելով յուրաքանչյուր գործողության ֆինանսավորման աղբյուրները (պետական բյուջե, գործընկեր

ծրագրեր, ներքին եկամուտներ և այլն) և վերանայելով իրականացվելիության ժամկետները՝ հիմնվելով առկա ռեսուրսների և գործառնական կարողությունների վրա։

2. Մշակել ռազմավարական նպատակների իրականացման ԳԱՑ-եր (առանցքային ցուցիչներ)՝ նպատակ ունենալով յուրաքանչյուր ռազմավարական ուղղության համար սահմանել կոնկրետ, չափելի, հասանելի, իրատեսական և ժամանակային սահմանում ունեցող արդյունքներ (SMART չափանիշով)՝ որպես շարունակական մոնիթորինգի հիմք։
3. Ապահովել շահակիցների շարունակական ներգրավվածությունը ռազմավարական գործընթացներում՝ կազմակերպելով պարբերական ֆոկուս-խմբային քննարկումներ, էլեկտրոնային հարցումներ և թեմատիկ հանդիպումներ, ինչպես նաև ստեղծելով ներգրավման ամփոփ հաշվետվություններ և առաջարկությունների վերլուծություն։
4. Վերլուծել և դասակարգել կարգավորող փաստաթղթերը՝ ստեղծելով փաստաթղթերի ցանկ ըստ գործառույթների և առաջնահերթության՝ պարզելու փաստաթղթերի կիրառելիությունը, վերացվելիք կամ միավորելիք փաստաթղթերը, և ներդնելով վերանայման պարբերականություն։
5. Վերանայել ստորաբաժանումների պլանների ձևաչափը՝ նախատեսելով ռազմավարական նպատակների հետ ուղիղ կապը, գործողությունների համար կոնկրետ չափելի ցուցիչներ և ակնկալվող վերջնարդյունքներ՝ ապահովելով արդյունքների գնահատման հնարավորությունը։
6. Ներդնել գործնական տվյալահավաքման և վերլուծության մեխանիզմներ կառավարման գործընթացներում՝ օրինակ՝ շրջանավարտների հետ առցանց հարցումներ, գործատուների հետ համատեղ վերլուծական հանդիպումներ, ոլորտի միտումների մշտադիտարկում և տվյալների ամփոփագիրների ձևավորում որոշումների կայացման համար։
7. Ապահովել ՊԻԳԲ ցիկլի ամբողջական կիրարկումը կառավարման գործընթացներում՝ ստորաբաժանումների մակարդակում ներդնելով պլանների գնահատման և բարելավման ենթաբաժիններ, պարբերական հաշվետվությունների ձևաչափեր և վերանայման ժամանակացույցեր։
8. Հստակեցնել ՈՒԱ համակարգի կառուցվածքը և գործառույթները՝ ներկայացնելով այն որպես հաստատության կառավարման հիմնական բաղադրիչ, սահմանելով դրա տեղը կազմակերպական կառուցվածքում, հստակ դերերը տարբեր մակարդակներում և պլանավորելով այն գործողությունների մասով։
9. Վերանայել ՈՆԱ հանձնաժողովի գործունեության կանոնակարգը՝ ներդնելով նիստերի անցկացման պարբերական ժամանակացույց (օր.՝ եռամսյակը մեկ), որոշումների արձանագրման և իրականացման վերահսկման մեխանիզմ, շահակիցների մասնակցության բաց և կառուցվածքային ձևեր։
10. Ներդնել շահակիցների ներգրավման գործողության պլան ՈՒԱ համակարգում՝ նախատեսելով գործատուների և ուսանողների ներկայացուցիչների կանոնավոր մասնակցություն ՈՆԱ նիստերին, առաջարկությունների արձանագրում, և պատասխան գործողությունների հետևում։

Որակավորումների արժանահավատ շնորհում

11. Ապահովել ՄԿԾ-ների մշտադիտարկման համակարգի ներդրում և պարբերական կիրառություն՝ զարգացնելով անհրաժեշտ գործիքներ և ցուցանիշներ, որոնք թույլ

կտան արդյունավետ հետևել կրթական ծրագրերի կատարողականին և կատարել հետադարձ կապի մեխանիզմներ։

12. Մշակել և ամրագրել բենչմարքինգի շարունակական գործընթացը՝ այն տարածելով բոլոր կրթական ծրագրերի շրջանակներում՝ որպես ծրագրերի արդիականացման գործիք։
13. Բարելավել դասախոսների մասնագիտական, մանկավարժական և մեթոդական պատրաստվածությունը՝ դասալսումների արդյունքների համապարփակ վերլուծության և արձանագրված խնդիրների վերացման նպատակով։
14. Կատարելագործել դասախոսական և ուսումնաօժանդակ կազմի կարիքների վերհանման մեխանիզմները՝ ապահովելով դրանց պարբերական և համակարգված կիրառում։
15. Ներգրավել գործատուներին և ոլորտի առաջատար մասնագետներին դասախոսների վերապատրաստման և փորձի փոխանակման գործընթացում։
16. Սահմանել դասախոսների խրախուսման և վարձատրության հստակ չափանիշներ՝ խթանելու համար մոտիվացիան և մասնագիտական առաջընթացը։
17. Ձևավորել դասախոսների թեկնածուների բազա՝ ապահովելով ուսումնական գործընթացի անխափան կազմակերպումը՝ կրթական ծրագրերի ընդլայնման կամ փոփոխման պայմաններում։
18. Ակտիվացնել լրացուցիչ ֆինանսական միջոցների ներգրավման գործընթացները՝ նյութատեխնիկական բազայի համալրման և կրթական ծրագրերի արդիականացման շարունակականությունը ապահովելու նպատակով։
19. Մշակել կրթական ծրագրերի ինքնաճախսածածկման հաշվարկի համակարգ, ներառելով ուսանողների թվաքանակի, մեկ ուսանողի հաշվով ծախսերի, աշխատավարձերի և նյութատեխնիկական ծախսերի տվյալները՝ ռեսուրսների արդյունավետ պլանավորման համար։

Երկարաժամկետ զարգացում

20. Զարգացնել շրջանավարտների հետ կապի համար նախատեսված թվային գործիքները՝ ապահովելով նրանց առավել ամբողջական իրազեկումը թափուր աշխատատեղերի և մասնագիտական հնարավորությունների մասին։
21. Իրականացնել լրացուցիչ դասընթացներ և ուսումնական նախաձեռնություններ՝ ուսանողների մասնագիտական կարողությունների զարգացման նպատակով։
22. Ներդնել յուրաքանչյուր կրթական ծրագրում հետազոտական բաղադրիչ և ձևավորել հետազոտական առաջադրանքների բազա՝ ապահովելու համար բոլոր ուսանողների մասնակցությունը հետազոտական աշխատանքներին։
23. Խթանել դասախոսների ներգրավվածությունը հետազոտական նախագծերում՝ նպաստելով նրանց մասնագիտական զարգացմանը։
24. Կիրառել համապատասխան մեխանիզմներ՝ հաշվետվողականության գործընթացը կանոնակարգելու և հաշվետվությունները նկարագրականից վերափոխելու վերլուծական ձևաչափի՝ գնահատելու իրականացված գործունեության արդյունավետությունը, վերհանելու խնդիրներն ու բարելավման անհրաժեշտ ուղղությունները։
25. Գործարկել և զարգացնել քոլեջի պաշտոնական կայքէջը, որտեղ բաց և թափանցիկ կերպով կներկայացվեն իրավական, կազմակերպչական փաստաթղթերը և ընթացիկ գործունեության արդյունքները՝ ապահովելով հանրային իրազեկվածության բարձր մակարդակ։

26. Բարձրացնել հետադարձ կապի արդյունավետությունը՝ ամրապնդելով շահակիցների ներգրավվածությունը և ապահովելով ստացված հաղորդագրություններին ժամանակին ու մանրամասն արձագանքելու գործընթացը:
27. Գնահատել և պլանավորել համայնքի հետ իրականացվող միջոցառումները՝ ելնելով տարածաշրջանի կարիքներից, մշակել դրանց արդյունավետության գնահատման մեխանիզմներ և ապահովել պարբերական ու համակարգված իրականացում:
28. Ընդլայնել և համակարգված ձևով զարգացնել միջազգային և տեղական գործընկերային կապերը՝ ապահովելով նախաձեռնությունների ծրագրային փուլից գործնական իրագործման անցումը և համատեղ նախագծերի իրական արդյունքներ:
29. Ապահովել արտաքին կապերի քաղաքականության և միջազգայնացման գործընթացների շարունակական գնահատում ու բարելավում՝ մշտապես վերլուծելով գործընկերության և միջազգային համագործակցության ազդեցությունը հաստատության զարգացման վրա:
30. Նպատակային ծրագրերով ու միջոցառումների միջոցով բարելավել ինչպես ուսանողների, այնպես էլ դասախոսական և վարչական կազմի օտար լեզուների իմացության մակարդակը՝ աջակցելով միջազգային նախագծերին մասնակցության արդյունավետությանը և հաստատության միջազգային տեսանելիության բարձրացմանը:

_____

Փորձագիտական խմբի ղեկավար
Գայանե Ավետիսյան

Օգոստոսի 15, 2025թ.

ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ

ՓՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ԽՄԲԻ ԿԱԶՄԸ

Վարդենիսի «Բադեյան» պետական քոլեջի ինստիտուցիոնալ կարողությունների արտաքին գնահատումն իրականացվել է հետևյալ փորձագիտական խմբի[2] կողմից.

1. **Գայանե Ավետիսյան**՝ Շիրակի պետական համալսարան, փորձագիտական խմբի ղեկավար։
2. **Մարինե Գալուբյան**՝ Արտաշատի համայնքապետարանի ԿՄՄԵ բաժնի գլխավոր մասնագետ, փորձագիտական խմբի անդամ։
3. **Մարինա Փոթիկյան**՝ ՀՀ ՆԳՆ կրթահամալիր, փորձագիտական խմբի անդամ։
4. **Դավիթ Հարությունյան**՝ Հայաստանի Եվրոպական համալսարան, փորձագիտական խմբի ուսանող անդամ։

Փորձագիտական խմբի կազմը համաձայնեցվել է ուսումնական հաստատության հետ:

Փորձագիտական խմբի աշխատանքները համակարգել է ՈՒԱԱԿ, Ինստիտուցիոնալ և ծրագրային փորձաքննության բաժնի մասնագետ **Լիանա Ալավերդյանը:**

Փորձագիտական խմբի բոլոր անդամները, այդ թվում՝ համակարգողը, ստորագրել են գաղտնիության և անկախության հայտարարագրեր:

ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ ԸՆԹԱՑՔԸ

Դիմում պետական հավատարմագրման համար

Վարդենիսի «Բադեյան» պետական քոլեջը պետական ինստիտուցիոնալ հավատարմագրում անցնելու համար 25.10.2024 թվականին ներկայացրել է սահմանված ձևաչափի դիմում-հայտ՝ լիցենզիայի և հրամանների կրկնօրինակներով: ՈՒԱԱԿ-ի քարտուղարությունն ուսումնասիրել է դիմում-հայտում ներկայացված տվյալները և կից փաստաթղթերը: Դիմում-հայտի ընդունման մասին որոշման կայացումից հետո 24.12.2024 թվականին Վարդենիսի «Բադեյան» պետական քոլեջի և ՈՒԱԱԿ-ի միջև կնքվել է պայմանագիր: Կազմվել և հաստատվել է հավատարմագրման գործընթացի իրականացման ժամանակացույցը:

Ինքնավերլուծություն

Հաշվի առնելով ուսումնական հաստատությունների՝ ինքնավերլուծություն իրականացնելու կարողությունների պակասը և քոլեջներում որակի ապահովման մշակույթի ձևավորման կարևորությունը՝ ՈՒԱԱԿ–ը 4-օրյա առցանց աշխատաժողովներ է իրականացրել: Աշխատաժողովների ընթացքում հավատարմագրվող ուսումնական հաստատություններին ներկայացվել են ինստիտուցիոնալ հավատարմագրման չափանիշների և չափորոշիչների մեկնաբանությունները ՄԿՈՒԻ հաստատությունների համար, ինստիտուցիոնալ հավատարմագրման հարցաշարը, ինքնավերլուծության ձևաչափը, SWOT վերլուծության իրականացման սկզբունքները և այլն:

[2] ՀԱՎԵԼՎԱԾ 1. ՓՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ԽՄԲԻ ԱՆԴԱՄՆԵՐԻ ԻՆՔՆԱԿԵՆՍԱԳՐԱԿԱՆՆԵՐ

Քոլեջին ընթացիկ աջակցություն տրամադրելու և ընթացիկ հարցերին պատասխանելու նպատակով կազմակերպվել են նաև միջանկյալ հանդիպումներ։

Վարդենիսի «Բադեյան» պետական քոլեջի ինստիտուցիոնալ կարողությունների ինքնավերլուծությունը ներկայացվել է 21.04.2025թ.: Ինքնավերլուծությունն իրականացվել է հաստատության աշխատակիցների՝ ղեկավար կազմի, վարչական, դասախոսական և ուսումնաօժանդակ համակազմի կողմից։

Նախապատրաստական փուլ

Փորձագիտական խումբը, ուսումնասիրելով ՄՈՒՀ-ի ինքնավերլուծությունը և ուղեկցող փաստաթղթերի փաթեթը, իրականացրել է նախնական գնահատում ըստ ձևաչափի՝ պատրաստելով լրացուցիչ ուսումնասիրման ենթակա անհրաժեշտ փաստաթղթերի, ինչպես նաև խնդիրների և հարցերի ցանկը՝ նշելով նաև համապատասխան ստորաբաժանումները կամ թիրախային խմբերը։ Այնուհետև փորձագիտական խումբն ամփոփել է նախնական գնահատման արդյունքները և կազմել փորձագիտական այցի պլան-ժամանակացույց[3]։

Նախնական այց

14.05.2025թ.առցանց հանդիպում է տեղի ունեցել Վարդենիսի «Բադեյան» պետական քոլեջը ղեկավար կազմի հետ։ Հանդիպմանը ներկա են գտնվել ՈՒԱԱԿ Ինստիտուցիոնալ և ծրագրային փորձաքննության բաժնի ղեկավարը, փորձագիտական խմբի ղեկավարը և համակարգողը։ Հանդիպման ընթացքում քոլեջի ղեկավար կազմին են ներկայացվել և նրանց հետ համաձայնեցվել փորձագիտական այցի պլան-ժամանակցույցը, ինչպես նաև քննարկվել և փոխհամաձայնեցված որոշումներ են կայացվել փորձագիտական այցի տեխնիկական, կազմակերպչական, տեղեկատվական հարցերի, հանդիպումների մասնակիցների վարքագծի և էթիկայի նորմերի վերաբերյալ։

Փորձագիտական այց

Փորձագիտական այցը տեղի է ունեցել 2025 թվականի մայիսի 25–28-ն ընկած ժամանակահատվածում։ Փորձագիտական այցը սկսվել և ավարտվել է քոլեջի ղեկավար կազմի հետ հանդիպումներով։ Հարցերի պարզաբանման նպատակով կազմակերպված ֆոկուս խմբային հանդիպումների՝ դասախոսներ, ուսանողներ և շրջանավարտներ, մասնակիցներն ընտրվել են նախօրոք տրամադրված ցանկից՝ ներկայացուցչականության սկզբունքով։ Առաջնորդվելով Փորձաքննության իրականացման ձեռնարկով՝ ժամանակացույցում ներառվել են փորձագետների կողմից նախատեսվող հանդիպումները բոլոր խմբերի հետ, ինչպես նաև դասալսումներ, ավարտական աշխատանքների պաշտպանության և պրակտիկաների, ռեսուրսերի դիտարկում[4], փաստաթղթերի դիտարկում[5] և այլն։ Փորձագիտական խմբի անդամները նաև մասնագիտական հանդիպումներ են ունեցել քոլեջի կողմից ներկայացված կրթական ծրագրերի պատասխանատուների, դասավանդող դասախոսների և ուսանողների հետ։

[3] ՀԱՎԵԼՎԱԾ 2. ՓՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ԱՅՑԻ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ
[4] ՀԱՎԵԼՎԱԾ 4. ՓՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ԽՄԲԻ ԿՈՂՄԻՑ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՎԱԾ ՌԵՍՈՒՐՍՆԵՐ
[5] ՀԱՎԵԼՎԱԾ 3. ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՎԱԾ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԻ ՑԱՆԿ

Չափանիշների վերաբերյալ վերջնական եզրակացության փորձագիտական խումբը հանգել է բոլոր անդամների քննարկումների և վերլուծությունների արդյունքում՝ մշտապես կիրառելով կոնսենսուսի սկզբունքը:

Փորձագիտական զեկույց

Փորձագիտական խմբի անդամները և ՈԱԱԿ համակարգողը պատրաստել են փորձագիտական զեկույցի նախնական տարբերակը, որը համաձայնեցվել է փորձագետների հետ: Նախնական զեկույցը տրամադրվել է քոլեջին 28.07.2025թ.: Զեկույցի նախնական տարբերակի վերաբերյալ քոլեջն արձագանք չի ներկայացրել: Փորձագիտական խումբը կազմել է փորձագիտական զեկույցի վերջնական տարբերակը, որը խմբի կողմից հաստատվել է 15.08.2025թ.-ին:



_____

Համակարգող
Լիանա Ալավերդյան

Օգոստոսի 15, 2025թ.

ԳՆԱՀԱՏՈՒՄ՝ ԸՍՏ ՀԱՎԱՏԱՐՄԱԳՐՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԻ

I. ԱՌԱՔԵԼՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՆՊԱՏԱԿՆԵՐԸ

ՉԱՓԱՆԻՇ: Մասնագիտական ուսումնական հաստատության (այսուհետ՝ ՄՈՒՀ) վարած քաղաքականությունն ու ծավալած գործունեությունը համապատասխանում են հաստատության որդեգրած առաքելությանը, որը համահունչ է ՀՀ կրթության որակավորումների ազգային շրջանակին:

Փաստեր

Վարդենիսի «Բադեյան» պետական քոլեջի (այսուհետ՝ ՎԲՊՔ) առաքելությունը սահմանված է 2025-2030 թվականների զարգացման ռազմավարական ծրագրում (ՋՌԾ)։ Քոլեջն առաջին անգամ է նախաձեռնում ռազմավարական ծրագրի մշակումը։ Քոլեջի առաքելությունն է՝ «ապահովել նախնական մասնագիտական (արհեստագործական) և միջին մասնագիտական կրթությամբ որակյալ մասնագետների պատրաստումն ու նրանց մրցունակության բարձրացումն աշխատաշուկայում, կրթական ծրագրերի համապատասխանեցումը երկրի սոցիալ--տնտեսական զարգացման և աշխատաշուկայի փոփոխվող պահանջներին, կրթության բովանդակության միջազգային չափանիշներին համադրելիությունը, ուսումնական գործընթացի թափանցիկությունը, ինչպես նաև մատչելիությունն և հավասարությունը»: Քոլեջը միջին մասնագիտական կրթություն է կազմակերպում ՈԱՇ-ի 4-րդ և 5-րդ մակարդակներին համապատասխան։

Զարգացման ռազմավարական ծրագրով սահմանված հիմնական նպատակադրումների առանցքում են՝

- կառավարման համակարգի բարելավումը,
- իրականացվող ՄԿԾ-ների վերանայումը և արդիականացումը,
- կրթական միջավայրի բարելավումը,
- անհրաժեշտ մասնագիտական որակներ ունեցող դասախոսական և ՈւՕ կազմի կատարելագործումը և գնահատման մեխանիզմները,
- հետազոտությունների իրականացման և զարգացման ապահովումը,
- համապատասխան ենթակառուցվածքների և ռեսուրսների մշտադիտարկումը և բարելավումը,
- պետության և հասարակության առջև հաշվետվողականության ապահովումը,
- արտաքին կապերի համակողմանի զարգացումը և ՎԲՊՔ-ի միջազգայնացման գործունեության ապահովումը,
- քոլեջի բոլոր գործընթացների շարունակական բարելավումը և կրթության որակի ներքին ապահովման մշակույթի ձևավորումը:

2025–2030 թթ. ռազմավարական ծրագրում ներկայացված են նպատակներից բխող խնդիրները և դրանց իրականացման նպատակով համապատասխան գործողությունները։

ՌԾ նպատակների իրագործման համար մշակվել է պլան-ժամանակացույց, որտեղ ներկայացված են իրականացման քայլերը, ժամկետները, պատասխանատուները, ֆինանսական հատկացումները, ակնկալվող արդյունքները և հաշվետվությունների տրամադրման եղանակները։ Միևնույն ժամանակ, հարկ է նշել որ պլան-ժամանակացույցում գործողությունների որոշ մասը չունի հստակ ֆինանսական հիմնավորում, իսկ ներկայացված ակնկալվող արդյունքները երբեմն չեն համապատասխանում իրականացման քայլերին։ Օրինակ՝ «Արդյունավետ գործունեության իրականացման նպատակով համապատասխան ենթակառուցվածքների և ռեսուրսների մշտադիտարկում և բարելավում» նպատակի շրջանակում գործողությունների թվում նշվում է քոլեջի չորրորդ հարկի սենյակների վերանորոգումը և բազմաֆունկցիոնալ

լսարանների ստեղծումը, որի ակնկալվող արդյունքը ձևակերպված է որպես «փափուկ հմտությունների զարգացում»՝ առանց հստակ գնահատման ցուցիչների: Փորձագիտական ուսումնասիրություններից պարզ դարձավ, որ ակնկալվող արդյունքների համար բացակայում են գործողությունների արդյունքների գնահատման հստակ, չափելի ցուցանիշները (ԳԱՑ-եր):

Նշված ռազմավարական նպատակների մի մասի ուղղությամբ արդեն իրականացվել են գործնական քայլեր: Մասնավորապես՝ կրթական գործընթացի իրականացման նպատակով համապատասխան ռեսուրսների բարելավում (շենքային և լսարանային պայմաններ), ձևավորվել են աշխատակիցների աշխատանքի արդյունավետության գնահատման և խրախուսման մեխանիզմներ, ինչպես նաև մշակվել են քաղաքականություններ՝ հետազոտական գործունեության համար նպաստավոր պայմանների ստեղծման նպատակով և այլն:

Քոլեջն ունի հաստատված «Որակի ապահովման գործընթացներում ներքին և արտաքին շահակիցների ներգրավման քաղաքականություն և կարգ» փաստաթուղթ, որով սահմանված են ներքին շահակիցները (ուսանողներ, աշխատակիցներ, վարչական և ուսումնաօժանդակ կազմ) և արտաքին շահակիցները (գործատուներ, շրջանավարտներ, դիմորդներ, ծնողներ, ՀԿ-ներ, համայնքապետարաններ և այլ շահագրգիռ կողմեր): ՌԾ մշակման փուլում իրականացվել են շահակիցների կարիքների վերհանում և խորհրդատվական հանդիպումներ՝ ներքին և արտաքին խմբերի մասնակցությամբ: Արտաքին շահակիցների կողմից ներկայացվել են կոնկրետ առաջարկներ, մասնավորապես՝ «World Vision»-ի կողմից՝ կարճաժամկետ ծրագրերի ներդրման, և «Աստղավարդ» ՀԿ-ի կողմից՝ միջնակարգ կրթության հիմքով միջին մասնագիտական կրթական ծրագրերի լիցենզավորման նախաձեռնության վերաբերյալ: Հարկ է նշել նաև, որ քոլեջի զարգացման ռազմավարական ծրագրում առաքելության և նպատակների ձևակերպումը հիմնված է ներքին և արտաքին գործոնների վերլուծության վրա, որը իրականացվել է SWOT մեթոդաբանությամբ:

Փորձագիտական այցի ընթացքում արձանագրվել է, որ շահակիցներն ընդհանուր առմամբ կիսում են քոլեջի որդեգրած առաքելությունը և ռազմավարական ուղղությունները: Քոլեջի գործունեությունն, ըստ փաստաթղթերի և փորձագիտական դիտարկումների, հիմնականում համահունչ է ԶՌԾ-ում ձևակերպված նպատակներին:

Հարկ է նշել նաև, որ քոլեջը գտնվում է անցումային փուլում, որը պայմանավորված է մոտ երեք տարի ՄՈՒՀ-ի տնօրենի ընտրության չկայացմամբ և 2023 թ. նոր տնօրենի նշանակումով: Փորձագիտական այցից պարզ դարձավ, որ քոլեջը մինչև 2023 թ. նոր տնօրենի ընտրությունը չի ունեցել հիմնարար փաստաթղթեր՝ ՌԾ և այլն:

Վարդենիսի Բաղեյան պետական քոլեջը տարածաշրջանում կատարում է կարևոր դեր՝ տրամադրելով այնպիսի մասնագիտական կրթություն, որը համահունչ է համայնքի սոցիալ-տնտեսական կարիքներին, հատկապես գյուղատնտեսության և սահմանամերձ բնակավայրերի համար պահանջված մասնագիտությունների ոլորտում: Ընդ որում, այն տարածաշրջանում միակ ուսումնական հաստատությունն է, որն ապահովում է նախնական մասնագիտական (արհեստագործական) կրթություն:

Ռազմավարության արդյունավետ իրագործումն ապահովելու նպատակով քոլեջում ներդրված է «ՌԾ վերանայման և գնահատման քաղաքականություն» փաստաթուղթը: Փորձագիտական այցի արդյունքում պարզ դարձավ, որ ստորաբաժանումների աշխատանքային պլանների և հաշվետվությունների կապը ռազմավարական նպատակների հետ դեռևս լիարժեք տեսանելի չէ: Հարկ է նշել, որ նշված պլաններն ու հաշվետվությունները կազմվել են մինչև 2025–2030 թթ. ռազմավարական ծրագրի հաստատումը:

Դատողություններ: Փորձագիտական խումբը դրական է գնահատում այն հանգամանքը, որ Վարդենիսի «Բաղեյան» պետական քոլեջը որդեգրել է հստակ ձևակերպված առաքելություն, որը համահունչ է ՈԱԾ-ին և արտացոլված է քոլեջի ռազմավարական փաստաթղթերում: Առաքելությունը վերահաստատում է քոլեջի ներդրումը մարզային աշխատաշուկայի պահանջներին համապատասխան մասնագետների պատրաստման գործում:

Դրական է գնահատվում նաև այն, որ քոլեջի գործողությունները համահունչ են իր առաքելությանը, իսկ ռազմավարական նպատակները՝ իրատեսական և կիրառելի: Ռազմավարական պլան-ժամանակացույցը, թեև ամրագրում է նպատակներին հասնելու գործողություններ, միևնույն ժամանակ բավարար հստակությամբ չի ներկայացնում դրանց ֆինանսական հիմնավորումները, ինչը որոշակիորեն սահմանափակում է ընթացիկ վերահսկման և գնահատման հնարավորությունները: Թեև պլան-ժամանակացույցում ընդգրկված են որոշ ակնկալվող արդյունքներ, սակայն դրանց գնահատման համար բացակայում են գործողությունների արդյունքների գնահատման հստակ, չափելի և համակարգված ցուցանիշները (ԳԱՑ-եր): Նման ցուցանիշների ներդրումը ռազմավարական կառավարման գործընթացում հնարավորություն կտա իրական ժամանակում վերահսկել ռազմավարական ծրագրի իրագործման ընթացքը, ապահովել հաշվետվողականություն և խթանել տվյալահեն որոշումների կայացումը:

Փորձագիտական խումբը կարևորում է նաև այն, որ ՌԾ մշակման գործընթացում իրականացվել է շահակիցների կարիքների վերհանում, իսկ քննարկումներն ու համագործակցությունները ապահովել են որոշակի առաջարկների ներառումը ռազմավարական փաստաթղթում: Սա նպաստում է ռազմավարական մոտեցումների խարսխմանը շահակիցների իրական ակնկալիքների վրա:

Փորձագիտական խումբը կարևորում է քոլեջի դերակատարումը տարածաշրջանում՝ որպես միակ հաստատություն, որը տրամադրում է նախնական մասնագիտական (արհեստագործական) կրթություն, ինչպես նաև գնահատում է կառույցում ռազմավարական կառավարումն ընդլայնելու և կայունացնելու ուղղությամբ կատարված առաջին քայլերը:

Փորձագիտական խումբը դրական է գնահատում քոլեջի կողմից ռազմավարական կառավարման սկզբունքների աստիճանական ներդրումը: Սակայն հարկ է նշել, որ ռազմավարության իրագործման գործընթացը դեռևս գտնվում է ձևավորման փուլում, և անհրաժեշտ է ապահովել ստորաբաժանումների պլանների և հաշվետվությունների համակարգված կապը ռազմավարական նպատակների հետ՝ նախանշելով հստակ գործողություններ, ժամկետներ և գնահատման չափանիշներ: Հարկ է նշել, որ վերոնշյալ գործընթացները պահանջում են շարունակական զարգացում և ինստիտուցիոնալացման հստակ մեխանիզմներ:

Եզրահանգում: Հաշվի առնելով, որ ՎԲՊՔ-ն ունի հստակ ձևակերպված և հրապարակային առաքելություն, որը համահունչ է ՀՀ կրթական ոլորտի ռազմավարական ուղղություններին և ՈԱԾ-ին, մշակել է ռազմավարական փաստաթուղթ՝ իրատեսական նպատակներով, ինչպես նաև ապահովել է դրա որոշակի համապատասխանեցումը շահակիցների կարիքներին և հաստատության ընթացիկ գործունեությանը՝ փորձագիտական խումբը գտնում է, որ ՎԲՊՔ-ն համապատասխանում է չափանիշ 1-ի պահանջներին*:*

Եզրակացություն: Փորձագիտական խումբը ՎԲՊՔ-ի ինստիտուցիոնալ կարողությունների համապատասխանությունը Չափանիշ 1-ի պահանջներին գնահատում է **բավարար:**

II. ԿԱՌԱՎԱՐՈՒՄՆ ՈՒ ՎԱՐՉԱՐԱՐՈՒԹՅՈՒՆԸ

ՉԱՓԱՆԻՇ: ՄՈՒՀ-ի կառավարման համակարգը, վարչական կառույցները և դրանց գործառումն արդյունավետ են և միտված են հաստատության առաքելության ու նպատակների իրականացմանը՝ պահպանելով կառավարման էթիկայի կանոնները:

Փաստեր

Վարդենիսի «Բադեյան» պետական քոլեջում կառավարման գործընթացը իրականացվում է տնօրենի, Կառավարման, Մանկավարժական և Տնօրենական խորհուրդների միջոցով: Կառավարման խորհուրդը, որն ունի 11 անդամ, հանդես է գալիս որպես քոլեջի կառավարման գործընթացների ակտիվ դերակատար: Խորհրդի կազմում ընդգրկված են նաև դասախոսների և ուսանողների ներկայացուցիչներ՝ ապահովելով ներառականություն ու բազմակարծություն: Փորձագիտական այցերի ընթացքում արձանագրվել է, որ խորհուրդը ակտիվ մասնակցություն է ունենում քոլեջի տարբեր գործընթացներում, այդ թվում՝ տնօրենի ընտրության, բյուջեի հաստատման, կրթական ծրագրերի և ստորաբաժանումների կանոնակարգերի քննարկման և հաստատման գործում: Բացի այդ, քոլեջի խորհուրդը մասնակցություն ունի նաև գործատուների հետ համագործակցության գործընթացում, ինչպես նաև առաջարկում է պրակտիկաների համապատասխան վայրեր: Մասնավորապես, քոլեջն աջակցություն է ստացել մարզպետարանի կողմից՝ GIZ-ի վերապատրաստման ծրագիրն իրականացնելու և ուսանողներին շրջակա գյուղերից քոլեջ տեղափոխելու համար տրանսպորտային միջոց տրամադրելու ուղղությամբ:

Խորհուրդներում ուսանողներն ու դասախոսները ցուցաբերում են նախաձեռնողականություն: Օրինակ՝ ուսանողների կողմից բարձրացվել է մարզադահլիճի բացակայության խնդիրը, որը ներկայումս քննարկման փուլում է: Խորհրդի որոշումների վերաբերյալ տեղեկատվությունն իրազեկվում է շահակիցներին՝ հիմնականում մանկավարժական խորհրդի նիստերի միջոցով:

Փորձագիտական այցից պարզ դարձավ, որ քոլեջում ձևավորվել են մի շարք հանձնաժողովներ՝ ներառյալ Որակի ներքին ապահովման, Դիպլոմների բաշխման և խոտանման, Կրթաթոշակների սահմանման և փոխատեղման, Իրավակարգապահական և այլ հանձնաժողովներ:

Փորձագիտական խումբը արձանագրում է, որ քոլեջը 2023 թվականից անցել է կառավարման և վարչարարության համակարգային փոփոխությունների փուլ՝ պայմանավորված նոր տնօրենի նշանակմամբ, ինչի արդյունքում 2024 թվականից մեկնարկել են մի շարք կառուցվածքային ու բովանդակային բարեփոխումներ: Այս փոփոխությունները ներառում են ռազմավարական պլանավորման մշակման մեկնարկ, կրթական գործընթացների արդիականացում, կառավարման տվյալահենք մոտեցումների աստիճանական ներդրում, ֆինանսական կառավարման համակարգի կայունացմանն ուղղված քայլեր և այլն:

Այս համատեքստում հարկ է նշել, որ 2024 թվականին առաջին անգամ հաստատվել է քոլեջի կազմակերպական կառուցվածքը, որը մինչ այդ փաստաթղթավորված չէր: Կառուցվածքը արտացոլում է հորիզոնական և ուղղահայաց կապերը: Փորձագիտական այցից պարզ դարձավ, որ հորիզոնական կապերը դեռևս լիարժեք չեն կիրառվում՝ ենթակառուցվածքների միջև փոխգործակցության տեսանկյունից: Փորձագիտական ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ կառավարման այս անցումային փուլում որոշ աշխատակիցներ կատարում են մեկից ավելի գործառույթներ. օրինակ՝ օտար լեզվի

ամբիոնի վարիչը միաժամանակ ղեկավարում է միջազգային ծրագրերի բաժինը՝ հասարակական հիմունքներով։

2023 թվականին բոլոր աշխատակիցների համար մշակվել և հաստատվել են միասնական ձևաչափով պաշտոնի նկարագրեր։ Դրանք պարունակում են պարտականությունները, իրավասությունները, պահանջվող կարողությունները և հաշվետվողականության շրջանակները։ Այնուամենայնիվ, մի շարք պաշտոնների նկարագրերում հստակ սահմանված չէ հաշվետվողականության ուղղությունը. մասնավորապես՝ բացակայում է կոնկրետ նշում այն մասին, թե ում է հաշվետու աշխատակիցը։ Օրինակ, Որակի ապահովման պատասխանատուի պաշտոնի նկարագրում բացակայում է նման հստակեցում։

2024թ. իրականացվել է նաև կառուցվածքային օպտիմալացում, որի արդյունքում կրճատվել են քոլեջի ղեկավարության կողմից մի շարք չհիմնավորված հաստիքներ՝ ներառյալ տնօրենի օգնականի, լաբորանտների և տեսատեխնիկի հաստիքները։

2024 թվականին հաստատությունը մշակել և ներդրել է «Ֆինանսների տնօրինման քաղաքականությունը և ընթացակարգը» փաստաթուղթը, որը միտված է քոլեջում կայուն ֆինանսական կառավարման համակարգի ձևավորմանը։

2025 թվականի նախահաշվի համաձայն՝ քոլեջի բյուջեի եկամուտների 95.12 %-ը կազմել են պետական ֆինանսավորումից ստացված մուտքերը, 2.65 %-ը՝ ուսանողների վարձավճարներից գոյացած միջոցները, իսկ 2.23 %-ը՝ տարեսկզբի մնացորդը։

2025 թվականի ֆինանսատնտեսական գործունեության նախահաշվի համաձայն՝ ընդհանուր ծախսերի 63,10%-ը բաժին է ընկնում աշխատավարձի ֆոնդին, 26,42 %-ը՝ ուսանողների կրթաթոշակներին, 1,01%-ը՝ գրասենյակային, լաբորատոր և այլ նյութերի ձեռքբերմանը, 0,18%-ը՝ աշխատակազմի մասնագիտական զարգացման ծառայություններին, 0,43%-ը՝ շենքերի և կառույցների ընթացիկ վերանորոգմանը, 1,23%-ը՝ վարչական սարքավորումներին, 0,12%-ը նախագծահետազոտական ծախսերին և այլն։

Եռամյա ժամանակահատվածի տվյալների համադրությունը (2023-2025թթ.) ցույց է տալիս, որ թեև 2025 թվականին աշխատավարձային ֆոնդը անվանական արժեքով աճել է՝ նախորդ տարվա համեմատ 4,41%-ով, սակայն դրա մասնաբաժինը ընդհանուր բյուջեում նվազել է՝ 67,87%-ից (2024թ.) դառնալով 63,10%։ Սա պայմանավորված է ընդհանուր բյուջեի աճով և այլ ոչ աշխատավարձային ֆոնդի կրճատմամբ։

Քոլեջի գործունեությունը կազմակերպվում է ռազմավարական՝ երկարաժամկետ և տարեկան՝ կարճաժամկետ պլանավորման սկզբունքով։ Մինչև 2025–2030 թթ. ռազմավարական ծրագրի պաշտոնական հաստատումը քոլեջը մշակել է մեկամյա կարճաժամկետ ռազմավարական ծրագիր, որը մեկնարկել է 2024 թվականի սեպտեմբերից՝ ընթացիկ գործընթացների կազմակերպման նպատակով։ Ծրագիրն ընդհանուր առմամբ համահունչ է 2025–2030 թթ. ռազմավարական ծրագրի նպատակներին։ Կարճաժամկետ ծրագրում բացակայում են առանձին ուղղություններ, մասնավորապես՝ որակի ապահովման, արտաքին կապերի և միջազգայնացման բաղադրիչները։ Նշված կարճաժամկետ ծրագրով ընդգրկված խնդիրների զգալի մասը 2024–2025 ուսումնական տարվա ընթացքում ստացել է իրականացման ընթացք։

Քոլեջի 2025–2030 թվականների ռազմավարական ծրագրի իրականացման նպատակով մշակվել է պլան-ժամանակացույց, որտեղ ձևակերպված են ռազմավարական նպատակներին հասնելու գործողությունները, դրանց իրականացման փուլերը և ֆինանսական հատկացումները։ Այնուամենայնիվ, հարկ է նշել, որ գործողությունների որոշ մասը չունի հստակ ֆինանսական հիմնավորում։ Պլան-ժամանակացույցում նշվում է, որ պլանավորված գործողությունների մեծ մասը ֆինանսական միջոցների կարիք չունի, սակայն կան որոշ ուղղություններ, օրինակ՝ գիտահետազոտական աշխատանքների

իրականացում և համացանցի հասանելիության ապահովում, որոնք պահանջում են ֆինանսավորում: Միևնույն ժամանակ, որոշ գործողությունների դեպքում, ինչպես օրինակ «ՊԴ և ՈւՕ կազմի աշխատավարձի բարձրացումը առնվազն 20%-ով», նշվում է, որ ֆինանսական հատկացումներ անհրաժեշտ չեն:

2023–2024 և 2024–2025 ուսումնական տարիների համար քոլեջի բոլոր ստորաբաժանումները կազմել են տարեկան աշխատանքային պլաններ: Մինչ այդ նման գործընթաց չի իրականացվել: Պլանները կազմված են միանման ձևաչափով՝ ընդգրկելով միջոցառումների ժամանակացույցը, պատասխանատուներին և կատարման նշումները: Միաժամանակ, բացառություն է կազմել մասնագիտական կողմնորոշման և կարիերայի ուղղորդման պատասխանատուի պլանը, որն, ի տարբերություն մյուսների, պարունակում է նաև միջոցառումների նպատակը, նկարագրությունը և ակնկալվող վերջնարդյունքը: Ամբիոնների պլաններում չեն առանձնացվել քոլեջի ռազմավարական ծրագրում սահմանված հիմնախնդիրները, իսկ գործողությունների ձևակերպումները հիմնականում ներկայացված են ընդհանրական ձևով: Օրինակ, Օտար լեզուների ամբիոնի պլանում ներառված են թեմատիկ միջոցառումներ, մշակութային այցեր, մասնագիտական զարգացում, իսկ Արհեստագործական ամբիոնի պլանում՝ բաց դասերի կազմակերպում և թեմաների քննարկում: Գործողությունների ակնկալվող վերջնարդյունքները չեն ներկայացվել հստակ չափելի ցուցիչներով:

Պլանավորման փաստաթղթերի վերլուծության արդյունքում արձանագրվել է, որ երկու տարվա ընթացքում ներկայացված բազմաթիվ գործողություններ կրկնվում են՝ առանց բովանդակային արդիականացման:

Անդրադառնալով ստորաբաժանումների միջև համագործակցությանը՝ հարկ է նշել, որ ինչպես աշխատանքային պլանների դիտարկումից, այնպես էլ փորձագիտական հանդիպումներից պարզ դարձավ, որ ստորաբաժանումների միջև գործնական համագործակցությունը թույլ է արտահայտված:

Ուսումնասիրությունների արդյունքում արձանագրվել է, որ քոլեջում կառավարումն իրականացվում է վերևից ներքև ուղղահայաց կառավարման մոդելով, մինչդեռ հաշվետվողականությունը կազմակերպվում է ներքևից վերև: Քոլեջի ստորաբաժանումների աշխատանքների վերահսկողության և մշտադիտարկման հիմնական մեխանիզմը հանդիսանում են կիսամյակային կտրվածքով ներկայացվող հաշվետվությունները: 2023 թվականից սկսած ներդրվել է հաշվետվությունների ներկայացման գործընթացը: Տնօրենի հաշվետվությունները կազմվում են ֆինանսական տարվա հիմքով՝ ընդգրկելով 2023 թվականի օգոստոսից դեկտեմբերը և 2024 թվականը: Դրանք հիմնականում նկարագրական են և կառուցված են ըստ հավատարմագրման տասը չափանիշների:

Փորձագիտական այցի արդյունքում պարզ դարձավ, որ քոլեջում ներդրվել է ինքնավերլուծության ձևաչափ, որը ստորաբաժանումները ներկայացնում են ուսումնական տարվա ավարտին՝ որպես հաշվետվության գործիք՝ գնահատելու իրենց գործունեությունն ու արդյունքները: Սակայն ստորաբաժանումների աշխատանքային պլաններում հստակ արդյունքների չափման ցուցիչների բացակայության հետևանքով հաշվետվություններում բացակայում է գործողությունների արդյունավետության և առաջընթացի վերլուծությունը:

Քոլեջի գործունեության վրա ազդող ներքին և արտաքին գործոնների վերլուծությունն իրականացվել է նաև նոր ռազմավարական ծրագրի շրջանակներում՝ կիրառելով SWOT մեթոդաբանությունը: Վերլուծության արդյունքում հստակեցվել են հիմնախնդիրները և դրանց լուծմանը միտված նպատակները, որոնք ներառվել են 2025–2030 թվականների Զարգացման ռազմավարական ծրագրում:

Ներքին գործոնների վերահանման նպատակով քոլեջում իրականացվում են ՈԱԿ-ի կողմից մշակած հարցումներ: Դրանք ներառում են «Ուսանողների բավարարվածությունը

քոլեջի ռեսուրսներից», «Շրջանավարտների ստացած կրթությունից բավարարվածությունը և գոհունակությունը», «Դասախոսական կազմի մասնագիտական, մեթոդական և կազմակերպական կոմպետենցիաների գնահատումը» և այլն: Արձանագրվել է, որ հարցումների արդյունքներն օգտագործվել են որոշ հիմնախնդիրների լուծման համար, օրինակ՝ միջոցառումների դահլիճի վերանորոգում, սպորտային տարածքի ստեղծում և այլն:

Քոլեջի արտաքին գործոնների ուսումնասիրությունն իրականացվում է հիմնականում կարիերայի կենտրոնի միջոցով՝ աշխատաշուկայի պահանջների վերլուծության, գործատուների հետ հարցումների և շրջանավարտների հետ հանդիպումների միջոցով: Այդ նպատակով 2024թ. ներդրվել է նաև «Արտաքին գործոնների ազդեցության և ռիսկերի գնահատման քաղաքականությունը և ընթացակարգերը» փաստաթուղթը, որը սահմանում է հնարավոր ռիսկերն ու դրանց կառավարման ուղիները:

Ինքնավերլուծության համաձայն՝ քոլեջը որդեգրել է ՊԻԳԲ մոտեցման կիրառումը: Փորձագիտական այցի ընթացքում արձանագրվել է, որ անցումային շրջանի պայմաններում քոլեջի գործընթացները դեռևս պլանավորման և իրագործման փուլերում են:

Քոլեջը չունի տեղեկատվության հավաքագրման, վերլուծության և կիրառման միասնական համակարգ: Չնայած կան առանձին նախաձեռնություններ (օր.՝ գործատուների հարցումներ, շրջանավարտների հետադարձ կապ), սակայն դրանց արդյունքների արդյունավետության գնահատման մեխանիզմներ մշակված չեն: Քոլեջը դեռևս չի գործարկել պաշտոնական կայքէջը. այն ներկայումս պատրաստման փուլում է: Առկա է ֆեյսբուքյան էջ, որտեղ հրապարակվում է ընթացիկ տեղեկատվություն՝ միջոցառումներ, սեմինարներ, ուսումնական գործընթաց: Միևնույն ժամանակ, բացակայում է տեղեկատվություն շրջանավարտների մասնագիտական հաջողությունների մասին, ինչպես նաև չկա տվյալների վերլուծության միջոցով կայացվող որոշումների հիմք:

Դատողություններ: Փորձագիտական խումբը դրական է գնահատում այն հանգամանքը, որ Վարդենիսի «Բադեյան» պետական քոլեջը վերջին երկու տարիներին որդեգրել է կառավարման համակարգի բարելավման և ինստիտուցիոնալ կայունացման ուղղությամբ շարժվող զարգացում: Արձանագրվել են կառավարման գործընթացների կառուցակարգման, կառուցվածքային վերանայման, և քաղաքականությունների մշակման միտումներ, ինչը վկայում է հաստատության՝ կազմակերպչական հասունացման փուլում լինելու մասին:

Դրական է, որ հաստատությունում ձևավորվել են ներքին կառավարման մարմիններ և հանձնաժողովներ, որտեղ ընդգրկված են շահակից խմբերի՝ մասնավորապես ուսանողների և դասախոսների ներկայացուցիչներ: Սա կարող է հիմք դառնալ մասնակցային և ներգրավող կառավարման մշակույթի կայացման համար:

Խումբը արձանագրում է, որ կարճ ժամանակահատվածում քոլեջը մշակել է բազմաբնույթ ռազմավարական և ընթացակարգային փաստաթղթեր՝ ներառյալ պաշտոնի նկարագրեր, կառուցվածք, ֆինանսների կառավարման քաղաքականություն, ինչպես նաև պլաններ: Սա վկայում է կառավարման բարեփոխումների գործնական մեկնարկի և հաստատության պատրաստակամության մասին: Սակայն, փաստաթղթերի մեծաքանակ ձևավորումը՝ առանց կիրառման և գնահատման մեխանիզմների զարգացած համակարգի, ստեղծում է վարչական ծանրաբեռնվածության և փաստաթղթայնորեն ձևական գործընթացների ձևավորման ռիսկ: Այդ առումով, նպատակահարմար է ներդնել փաստաթղթերի գործնական կիրառելիության նախնական գնահատման և պարբերական վերանայման մեխանիզմներ:

Խումբը կարևորում է ռազմավարական և տարեկան պլանների առկայությունը, սակայն արձանագրում է, որ ստորաբաժանումների աշխատանքային պլաններում

գործողությունները հիմնականում ձևակերպված են ընդհանրական կերպով՝ առանց հստակ նպատակների, չափելի ցուցանիշների և վերջնարդյունքների: Սա սահմանափակում է իրականացվող գործողությունների արդյունավետության գնահատման և բարելավման հնարավորությունը:

Դրական է նաև, որ քոլեջը սկսել է ուսումնասիրել ներքին և արտաքին գործոնները՝ իրականացնելով շահակիցների հարցումներ և տվյալների հավաքագրում: Այնուամենայնիվ, տեղեկատվության վերլուծության և որոշումների կայացման մեջ տվյալների կիրառման մեխանիզմները դեռևս համակարգված չեն, ինչը վկայում է կառավարման վրա ազդող տեղեկատվական հոսքերի կառավարման զարգացման անհրաժեշտության մասին:

Խումբը կարևորում է, որ քոլեջն որդեգրել է ՊԻԳԲ մոտեցման կիրառումը կառավարման գործընթացներում: Թեև ներկայումս այն հիմնականում կիրառվում է պլանավորման և իրականացման փուլերում, արձանագրվում են նաև որոշակի քայլեր գնահատման և բարելավման ենթահամակարգերի ձևավորման ուղղությամբ: Սա հիմք է տալիս ենթադրելու, որ ՊԻԳԲ մեթոդաբանական շրջանակի լիարժեք ներդրումը կարող է նպաստել կառավարման համակարգի շարունակական բարելավմանն ու որակապես կայուն զարգացմանը:

Եզրահանգում: Հաշվի առնելով, որ ՎԲՊՔ-ում վերջին երկու տարիների ընթացքում՝ անցումային փուլի շրջանակում, իրականացվել են կառավարման համակարգի կառուցակարգման և ներքին փաստաթղթայնացման ուղղությամբ մի շարք կարևոր բարեփոխումներ, ձևավորվել են կառավարման խորհուրդներ և հանձնաժողովներ, մշակվել և մասամբ ներդրվել են ռազմավարական և ընթացակարգային փաստաթղթերի փաթեթներ, սահմանվել են պլանավորման և հաշվետվողականության սկզբունքներ, ինչպես նաև արձանագրվել է միտում դեպի ՊԻԳԲ ցիկլի աստիճանական կիրառում՝ փորձագիտական խումբը գտնում է, որ ՎԲՊՔ-ն համապատասխանում է չափանիշ 2-ի պահանջներին*:*

Եզրակացություն: Փորձագիտական խումբը ՎԲՊՔ-ի ինստիտուցիոնալ կարողությունների համապատասխանությունը չափանիշ 2-ի պահանջներին գնահատում է **բավարար**:

III. ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԸ

ՉԱՓԱՆԻՇ: ՄԿԾ-ները համապատասխանում են հաստատության առաքելությանը, կազմում են հաստատության պլանավորման բաղկացուցիչ մաս և նպաստում են շարժունությանը և միջազգայնացմանը:

Փաստեր

Վարդենիսի «Բաղեյան» պետական քոլեջում իրականացվում է միջին մասնագիտական 8 կրթական ծրագիր՝

- «Բանկային գործ»,
- «Համակարգչային գեղարվեստական նախագծում»,
- «Սոցիալական աշխատանք»,
- «Քույրական գործ»,
- «Գործավարություն՝ օտար լեզվի իմացությամբ»,
- «Հաշվողական տեխնիկայի և ավտոմատացված համակարգերի ծրագրային ապահովում»,

- «Դեղագործություն»,
- «Բուժական կոսմետոլոգիա»

և նախնական մասնագիտական 9 կրթական ծրագրեր՝

- «Համակարգիչների շահագործում»,
- «Խոհարարական գործ»,
- «Գյուղացիական (ֆերմերային) տնտեսության կազմակերպում»,
- «Կարի արտադրության տեխնոլոգիա»,
- «Եռակցման աշխատանքների տեխնոլոգիա»,
- «Ոսկերչություն»,
- «Յուղի, պանրի և կաթի արտադրության տեխնոլոգիա»,
- «Վարսավիրական արվեստ և զարդային դիմահարդարում»,
- «Հարդարման և շինարարական աշխատանքների իրականացում»:

2024-2025 ուստարվանից ներդրվել են նոր մասնագիտական կրթական ծրագրեր՝ «Յուղի, պանրի և կաթի արտադրության տեխնոլոգիա» և «Սոցիալական աշխատանք» մասնագիտությունները: Վերջինիս ներդրման համար հիմք է հանդիսացել Միասնական սոցիալական ծառայության (ՄՍԾ) և տարբեր գործատուների առաջարկությունները: Հարկ է նշել, որ 2024-2025 ուսումնական տարում դիմորդներ չեն եղել «Բուժական կոսմետոլոգիա», «Ոսկերչություն», «Գործավարություն՝ օտար լեզվի իմացությամբ», «Դեղագործություն», «Քույրական գործ», «Խոհարարական գործ», «Կարի արտադրության տեխնոլոգիա», «Հարդարման և շինարարական աշխատանքների իրականացում» ՄԿԾ-նորով:

Փորձագիտական այցից պարզ դարձավ, որ ՄՈՒՀ-ի դասախոսական կազմը չի մասնակցում պետական կրթական չափորոշիչների կազմմանը և վերանայմանը:

Քոլեջում բացի հիմնական հանրակրթական առարկաներից և մասնագիտական մոդուլային ծրագրերից, ուսումնական պլաններում առկա են նաև առարկաներ, որոնք ներդրվել են ընտրովի ժամերի հաշվին: Օրինակ, «Բանկային գործ» մասնագիտական կրթական ծրագրում ներառված է «Ֆինանսական շուկա» մոդուլը, «Գյուղացիական (ֆերմերային) տնտեսության կազմակերպում» ծրագրում՝ «Բանջարաբուծություն» մոդուլը, իսկ «Համակարգչային գեղարվեստական նախագծում» մասնագիտության ծրագրում՝ «Մեդիագրագիտություն» մոդուլը: Մոդուլները ներդրվել են դասախոսների առաջարկությամբ:

Կրթական ծրագրերում փոփոխությունները կատարվում են ամբիոնի վարիչի, դասախոսների և ուսանողների կողմից ներկայացված առաջարկների հիման վրա: Օրինակ, «Համակարգչային գեղարվեստական նախագծում» ՄԿԾ-ում 2023 թվականին ներդրվել է «Ամպային տեխնոլոգիաների կիրառումը» մոդուլը (24 ժամ), որի առաջարկությունը ներկայացվել է ամբիոնի վարիչի կողմից: Եվս մեկ փոփոխություն տեղի է ունեցել 2024 թվականին, երբ «Համակարգչային գեղարվեստական նախագծում» մասնագիտության ՄԿԾ-ում «Համակարգչային վեկտորային գրաֆիկա» մոդուլը ամբողջությամբ վերանայվել և բարելավվել է՝ հաշվի առնելով ուսանողների առաջարկությունները՝ գործնական աշխատանքները նորարարական տեխնոլոգիաներով իրականացնելու նպատակով: Մասնավորապես, ուսանողների առաջարկությամբ գործնական աշխատանքներն այժմ իրականացվում են շաղափային հաստոցների միջոցով, իսկ էսքիզների պատրաստման համար ներմուծվել են «Inkscape» և «Sigma» ծրագրային փաթեթները: Բացի այդ, «Բանկային գործ» կրթական ծրագրի շրջանակում առաջարկվել է ՀԾ բանկային ծրագիրը փոխարինել առավել ճկուն LSBank համակարգով, սակայն փոփոխությունը դեռևս չի իրականացվել:

Ուսումնական պլաններում սահմանված են պրակտիկայի երեք տեսակներ՝ ուսումնական, արտադրական և նախաավարտական: «Համակարգչային գեղարվեստական նախագծում» կրթական ծրագրի ուսանողները պրակտիկա անցնում են երրորդից վեցերորդ կիսամյակներում՝ 16 շաբաթ տևողությամբ: «Գյուղացիական (ֆերմերային) տնտեսության կազմակերպում» կրթական ծրագրի ուսանողները անցնում են պրակտիկա հինգերորդ և վեցերորդ կիսամյակներում՝ 9 շաբաթ տևողությամբ: «Բանկային գործ» կրթական ծրագրում ուսումնական պլանով նախատեսված է, որ ուսանողները պրակտիկա անցնեն չորրորդից վեցերորդ կիսամյակներում՝ 20 շաբաթ տևողությամբ: Փորձագիտական այցի ընթացքում պարզ դարձավ, որ ուսանողները պրակտիկա են անցնում (արտադրական, նախաավարտական) վեցերորդ կիսամյակում, իսկ ուսումնական պրակտիկան անցկացնում են չորրորդ կիսամյակում՝ ուսումնասիրելով ընտրովի ներդրված «Ֆինանսական շուկաներ» մոդուլային ծրագիրը: Փաստաթղթերի ուսումնասիրության արդյունքում պարզ դարձավ, որ «Համակարգչային գեղարվեստական նախագծում» ՄԿԾ-ի շրջանակներում պրակտիկայի անցկացման վայրերը երկուսն են, «Գյուղացիական (ֆերմերային) տնտեսության կազմակերպում» ՄԿԾ-ի շրջանակներում՝ յոթը, իսկ «Բանկային գործ» ՄԿԾ-ի շրջանակներում՝ երեքը:

Քոլեջում առկա է պրակտիկայի օրագրի միասնական ձևաչափ, որում ներկայացվում է տեղեկատվություն պրակտիկայի անցկացման վայրի, կատարված աշխատանքի բնույթի մասին, ինչպես նաև ներառում է կազմակերպության և քոլեջի կողմից նշանակված պրակտիկայի ղեկավարների եզրակացությունը ու գնահատականը և սովորողի եզրակացությունը:

Դասախոսների համար մշակվել է դասավանդման, ուսումնառության և գնահատման մեթոդների ուղեցույց, որը ներառում է մեթոդների կիրառման մանրամասն նկարագրություններ: Քոլեջում դասավանդման մեթոդների ընտրության համար հաստատվել է միասնական մոտեցում: 2024 թվականին մշակվել է «Դասավանդման և ուսումնառության մոտեցումների և մեթոդների արդիականացման» քաղաքականությունը և ընթացակարգը: Դասավանդման գործընթացում կիրառվում են տարբեր մեթոդներ, այդ թվում՝ ցուցադրություն, մտագրոհ, «Պրիզմա» մեթոդ, դերային խաղեր և այլ ինտերակտիվ մոտեցումներ:

Դասալսումների և փորձագիտական հանդիպումների արդյունքում պարզ դարձավ, որ դասավանդման գործընթացում դասախոսները կարևորում են ուսանողների ստեղծագործական և հետազոտական մտքի զարգացմանը: Մասնավորապես, «Համակարգչային գեղարվեստական նախագծում» մասնագիտական կրթական ծրագրի շրջանակում ուսանողներին հանձնարարվում է 3D մոդելավորման ծրագրերի կիրառմամբ ստանալ առաջադրված պատկերի եռաչափ մոդել, ստեղծել գովազդային էջեր և այլն: «Համակարգչային գեղարվեստական նախագծում» մասնագիտության ուսանողները ունեն պորտֆոլիո, որը ներկայացնում է ուսանողի կողմից ողջ մոդուլի ընթացքում ձեռք բերված հմտություններն ու կարողությունները: «Բանկային գործ» կրթական ծրագրում ուսանողներին հանձնարարվում է վերլուծել ՀՀ տարածքում գործող բանկերի զարգացման միտումները և այլն: «Գյուղացիական (ֆերմերային) տնտեսության կազմակերպում» կրթական ծրագրում ուսանողներին հանձնարարվում է որոշել հողի կազմը, տիպը, ուսումնասիրել կաղամբի ճերմակաթիթեռի զարգացման փուլերը և այլն:

Հարկ է նշել, որ ուսանողներին հանձնարարվում են նաև ռեֆերատներ, կուրսային և հետազոտական աշխատանքներ: Կուրսային և հետազոտական աշխատանքների իրականացումը ներդրվել է 2024 թվականից: Ընդ որում, կուրսային աշխատանքները ներկայացվում են միայն «Բանկային գործ» կրթական ծրագրի ուսանողների կողմից, մինչդեռ հետազոտական աշխատանքները կատարվում են ուսանողների ցանկությամբ: Օրինակ՝ «Գյուղացիական (ֆերմերային) տնտեսության կազմակերպում» մասնագիտության ուսանողները իրականացրել են «Կաղամբի լվիճի կենսաէկոլոգիական առանձնահատկությունները», «Հողի էրոզիան և պայքարի միջոցառումները Վարդենիսի տարածաշրջանում» և այլ հետազոտական աշխատանքներ: «Բանկային գործ» կրթական ծրագրի ուսանողներին հանձնարարվել է «Գովազդի հոգեբանական ազդեցությունը սպառողի վրա» թեմայով հետազոտական աշխատանք, կոռուպցիայի ռիսկերի վերաբերյալ ռեֆերատ, «Բանկային գործի ռիսկերի կառավարման քաղաքականություն» թեմայով կուրսային աշխատանք: «Համակարգչային գեղարվեստական նախագծում» կրթական ծրագրի ուսանողներին հանձնարարվում են ռեֆերատներ, օրինակ՝ դիզայնի տարբեր տեսակների ուսումնասիրություն և այլն:

ՄՈՒՀ-ում առկա է «Ուսանողների գիտելիքների ստուգման, գնահատման և բողոքարկման» կարգ, ինչպես նաև «Գնահատման մեթոդների ուղեցույց»: Մոդուլային ծրագրերի ուսումնառության արդյունքներում ներկայացված է յուրաքանչյուր արդյունքի գնահատման ձևը, ինչպես նաև առկա է գնահատման սահմանված սանդղակ՝ ձևակերպված բաղադրիչներով: Մասնավորապես՝ հաճախումների համար ուսանողներին տրվում է մինչև 1 միավոր, գիտելիքների յուրացման, կարողությունների և հմտությունների գնահատման համար՝ մինչև 7 միավոր, իսկ ինքնուրույն անհատական աշխատանքի համար նախատեսված է 2 միավոր: Այս բաղադրիչների հիման վրա ուսանողի վերջնական գնահատականը կազմում է 10 միավոր: Գնահատման թերթիկների ուսումնասիրությունը ցույց տվեց, որ յուրաքանչյուր արդյունքի գնահատման համար առանձնացված են բանավոր հարցեր և տրվում է գործնական առաջադրանք: ՄՈՒՀ-ում սահմանված են նաև ընթացիկ գնահատման հստակ չափանիշներ: Մասնավորապես՝ յուրաքանչյուր միավոր ունի համապատասխան բնութագրիչ, որը հստակ ներկայացնում է գնահատման հիմքը: Բացի այդ, գնահատման համակարգում տարանջատված են տեսական պատասխանների և գործնական առաջադրանքների համապատասխան միավորային բաղադրիչները: Փորձագիտական այցից պարզ դարձավ, որ ընթացիկ գնահատումն իրականացվում է հարց ու պատասխանի, տարբեր բարդության առաջադրանքների միջոցով:

Փորձագիտական ուսումնասիրությունները ցույց տվեցին, որ քոլեջում 2024թ.-ից առկա է «Ուսանողների գիտելիքների ստուգման գնահատման և բողոքարկման կարգ»: Հարկ է նշել, որ դեռևս բողոքարկման դեպքեր չեն արձանագրվել:

Ուսանողները գնահատվում են նաև պրակտիկայի ընթացքում: Փորձագիտական այցից պարզ դարձավ, որ պրակտիկայի գնահատականը դրվում է քոլեջի կողմից նշանակված ղեկավարի կողմից, ինչը հիմնված է կազմակերպության կողմից նշանակված պրակտիկայի ղեկավարի բնութագրի վրա:

Բոլոր կրթական ծրագրերում ուսանողները հանձնում են պետական ամփոփիչ քննություններ, որոնց հարցատոմսերում առկա են և՛ տեսական գիտելիքները, և՛ գործնական հմտությունները ստուգող հարցեր, առաջադրանքներ: Նման մոտեցումը ընդունված և կիրառելի է բոլոր ՄԿԾ-ների շրջանակներում: 2024-2025 ուսումնական տարում նախատեսվում է անցկացնել երկու՝ հատուկ և ընդհանուր մասնագիտական մոդուլները ներառող պետական քննություններ:

ՄՈւՀ-ում առկա է «Բենչմարքինգի համեմատական վերլուծության իրականացման կարգ»: Քոլեջն իրականացրել է «Բանկային գործ», «Համակարգչային գեղարվեստական նախագծում», «Գյուղացիական (ֆերմերային) տնտեսության կազմակերպում», «Կարի արտադրության տեխնոլոգիա», «Խոհարարական գործ» և «Վարսավիրական արվեստ և զարդային դիմահարդարում» կրթական ծրագրերի բենչմարքինգ՝ համեմատելով և վերլուծելով դրանք նմանօրինակ մասնագիտություններ իրականացնող հայաստանյան քոլեջների ծրագրերի հետ: Բենչմարքինգի արդյունքում ՎԲՊՔ-ը համեմատել է մասնագիտական կրթական ծրագրերը, գործնական աշխատանքների կազմակերպումը, պետական քննությունների ձևաչափերը, մասնագիտական մոդուլների բովանդակությունը, ինչպես նաև պրակտիկաների կազմակերպման մոտեցումները: Այս վերլուծության արդյունքում քոլեջը նախատեսում է մի շարք տարրեր ներդնել ծրագրերում: Մասնավորապես՝ նախատեսվում է փոփոխել պետական քննությունների ձևաչափը, «Համակարգչային գեղարվեստական նախագծում» ՄԿԾ-ի շրջանակում «Վեկտորային գրաֆիկա» մոդուլի շրջանակում իրականացնել արդյունքների խմբավորում և այլն:

ՄՈւՀ-ում ՄԿԾ-ների մշտադիտարկման նպատակով 2024 թվականին ներդրվել է «Մասնագիտական կրթական ծրագրերի մշտադիտարկման և վերանայման» կանոնակարգ: Այնուամենայնիվ, ՄԿԾ-ների մշտադիտարկում քոլեջում դեռևս չի իրականացվել:

Դատողություններ: Փորձագիտական խումբը դրական է գնահատում Վարդենիսի «Բաղեյան» պետական քոլեջում իրականացվող միջին մասնագիտական և նախնական (արհեստագործական) կրթական ծրագրերի մասնագիտությունների բազմազանությունը և դրանց համապատասխանեցումը աշխատաշուկայի պահանջներին: Սա վկայում է քոլեջի պատրաստակամության և ջանքերի մասին՝ ապահովելու գործատուների կարիքներին համապատասխան մասնագետների պատրաստում:

Միևնույն ժամանակ, խումբը նպատակահարմար է համարում, որ աշխատաշուկայի փոփոխություններին արձագանքելու գործընթացը ձևավորվի որպես հաստատության բոլոր կրթական ծրագրերը ընդգրկող ինստիտուցիոնալ մոտեցում: Այս նպատակով անհրաժեշտ է զարգացնել մշտադիտարկման, հետադարձ կապի և ռազմավարական պլանավորման միավորված մեխանիզմներ, որոնք կապահովեն կրթական ծրագրերի շարունակական արդիականացումը և համակարգային բարելավումը՝ հիմնված տվյալների և շահակիցների պահանջների վերլուծության վրա:

Փորձագիտական խումբը դրական է գնահատում քոլեջում կիրառվող ինտերակտիվ մեթոդների ներդրման փորձը, որը դրական ազդեցություն է ունենում ուսանողների ստեղծագործական և հետազոտական մտքի զարգացման վրա: Միևնույն ժամանակ, գործընթացը դեռևս գտնվում է իրականացման փուլում, և փորձագիտական խմբի կարծիքով անհրաժեշտ է շարունակական և պլանավորված աշխատանք՝ ինտերակտիվ մեթոդների լիարժեք ներդրումն ու դրանց արդյունավետության գնահատումը ապահովելու համար:

Փորձագիտական խումբը դրական է գնահատում ուսանողներին տրվող առաջադրանքների բազմազանությունը, որոնք նպաստում են ուսանողների վերլուծական, ստեղծագործական և հետազոտական մտքի զարգացմանը: Ուսանողները ներգրավված են նաև հետազոտական աշխատանքներում:

Փորձագիտական խումբը դրական է գնահատում քոլեջում ներդրված ուսանողների գնահատման նոր քաղաքականությունը, որն առանձնանում է տարբերակված գնահատման մոտեցմամբ: Այս գործընթացը նպաստում է ուսանողների գիտելիքների և կարողությունների ավելի ճշգրիտ գնահատմանը:

Փորձագիտական խումբը կարևորում է ՄԿԾ-ների մշտադիտարկման անհրաժեշտությունը՝ նշելով, որ այս գործընթացի բացակայությունը կարող է խոչընդոտել

կրթական ծրագրերի արդյունավետության մշտական գնահատմանը և բարելավմանը: ՄԿԾ մշտադիտարկման համակարգի ներդրումը կարևոր նշանակություն ունի, այն կարող է ապահովել կրթական ծրագրերի համապատասխանությունը աշխատաշուկայի պահանջներին և նպաստել մասնագիտական կրթության շարունակական բարելավմանը: ՄԿԾ-ների պարբերական և համակարգված մշտադիտարկման իրականացումը կնպաստի կրթական ծրագրերի շարունակական արդիականացմանը:

Փորձագիտական խումբը դրական է գնահատում քոլեջի ջանքերը բենչմարքինգի կիրառման ուղղությամբ՝ համակարգելով և համեմատելով կրթական ծրագրերը նմանօրինակ հաստատությունների ծրագրերի հետ: Այս մոտեցումը հնարավորություն է տալիս կատարել համեմատական վերլուծություն և ճանաչել առկա ուժեղ կողմերը, ինչը կարևոր է կրթական ծրագրերի բարելավման համար: Այնուամենայնիվ, փորձագիտական խումբը նկատում է, որ բենչմարքինգի գործընթացի պարբերական իրականացման անհրաժեշտությունը կենսական նշանակություն ունի, իսկ դրա կիրառումը պետք է ընդգրկի բոլոր կրթական ծրագրերը:

Եզրահանգում: Հաշվի առնելով, որ Վարդենիսի «Բադեյան» պետական քոլեջը արդյունավետ կերպով իրականացնում է իր առաքելությանը համահունչ կրթական ծրագրեր, որոնք ուղղված են աշխատաշուկայի պահանջների բավարարմանը, և միևնույն ժամանակ ձեռնարկում է քայլեր դասավանդման ինտերակտիվ մեթոդների ներդրման ուղղությամբ, ուսանողներին տրամադրում է ստեղծագործական և ինքնուրույն մտածողություն զարգացնող առաջադրանքներ, ներդրել է տարբերակված գնահատման համակարգ, ինչպես նաև իրականացնում է գործողություններ կրթական ծրագրերի բենչմարքինգի ուղղությամբ՝ փորձագիտական խումբը գտնում է, որ ՎԲՊՔ-ն համապատասխանում է չափանիշ 3-ի պահանջներին:

Եզրակացություն: Փորձագիտական խումբը ՎԲՊՔ-ի ինստիտուցիոնալ կարողությունների համապատասխանությունը չափանիշ 3-ի պահանջներին գնահատում է **բավարար**:

IV. ՈՒՍԱՆՈՂՆԵՐԸ

ՉԱՓԱՆԻՇ: ՄՈՒՀ-ն ուսանողներին տրամադրում է համապատասխան աջակցություն՝ կրթական միջավայրի արդյունավետությունն ապահովելու նպատակով:

Փաստեր

Վարդենիսի «Բադեյան» պետական քոլեջը ուսանողների հավաքագրման և մասնագիտական կողմնորոշման նպատակով իրականացնում է բազմաբնույթ տեղեկատվական և խորհրդատվական միջոցառումներ, որոնք ներառում են հանրակրթական դպրոցներում այցեր, տեղեկատվական բուկլետների տրամադրում, «Բաց դռների օրեր», ինչպես նաև պարբերական հայտարարություններ քոլեջի ֆեյսբուքյան էջում: Այս գործընթացներում ներգրավված են քոլեջի Կրթության որակի պատասխանատուն, Մասնագիտական կողմնորոշման և կարիերայի ուղղորդման պատասխանատուն, Հանրակրթության բաժնի վարիչը, Ուսանողական խորհրդի ներկայացուցիչները և քոլեջի տնօրենը:

Փաստաթղթերի ուսումնասիրությունից պարզ դարձավ, որ վերջին տարիներին նկատվում է դիմորդների թվի աճ՝ հատկապես հետևյալ մասնագիտությունների գծով՝ «Գյուղացիական (ֆերմերային) տնտեսության կազմակերպում», «Համակարգչային գեղարվեստական նախագծում»: Ըստ քոլեջի ներկայացուցիչների՝ նման միտումը պայմանավորված է «Գյուղացիական տնտեսության կազմակերպում» մասնագիտության

դեպքում՝ պետական կրթաթոշակի տրամադրմամբ, իսկ «Համակարգչային գեղարվեստական նախագծում» մասնագիտության դեպքում՝ աշխատաշուկայում տվյալ ոլորտի մասնագետների նկատմամբ պահանջարկի աճով և հեռավար աշխատանքի հնարավորությունների ընդլայնմամբ։

Քոլեջում նախնական և միջնակարգ կրթության հիմքով սովորում է 331 ուսանող։

Վերջին հինգ տարիների վերլուծությունների արդյունքները ցույց են տալիս, որ ուսանողների դուրս մնալու հիմնական պատճառը անհարգելի բացակայություններն են։ 2024–2025 ուսումնական տարում դուրս մնացած ուսանողների տոկոսը կազմել է 3.2%։ Ինքնավերլուծության համաձայն՝ քոլեջում ձեռնարկվում են կանխարգելիչ միջոցառումներ՝ ուղղված անհարգելի բացակայությունների նվազեցմանը. մասնավորապես, կազմակերպվում են հանդիպումներ ուսանողների և նրանց ծնողների հետ՝ իրազեկման և պատասխանատվության բարձրացման նպատակով։

Քոլեջում ուսանողների կրթական կարիքների գնահատումն իրականացվում է կուրսղեկների ինստիտուտի, որակի ներքին ապահովման ստորաբաժանման և ՈւԽ-ի միջոցով։ Որպես ուսանողների կրթական կարիքների վերհանման մեխանիզմ են դիտարկվում կուրսղեկի ժամերը, անանուն հարցումները, ֆոկուս խմբային և բաց քննարկումները, ուսանողական խորհուրդը և բողոքների ու առաջարկությունների արկղը։ Անանուն հարցումների միջոցով վերհանվել է ուսանողների կարիքը՝ քոլեջի լաբորատորիաները տեխնոլոգիապես հագեցնելու ուղղությամբ, և քոլեջը համապատասխան քայլեր է ձեռնարկել, որի ուղղությամբ քոլեջը քայլեր է ձեռնարկել։

Ուսանողների կարիքների վերհանման գործընթացում կարևոր դերակատարում ունի ՈւԽ-ն, որը պարբերաբար հանդիպումներ է կազմակերպում քոլեջի տնօրինության հետ՝ քննարկելու խնդիրներ, ներկայացնելու կարծիքներ և առաջարկելու լուծման տարբերակներ։ Այնուամենայնիվ, հարկ է նշել, որ ՈւԽ-ի կողմից դեռևս կրթական կարիքի վերհանման փորձ չի կատարվել։

Քոլեջում իրականացվում են նախաքննական խորհրդատվություններ, որոնց համար սահմանվում է հստակ ժամանակացույց, որը համաձայնեցվում է ուսանողների և դասախոսների հետ։ Խորհրդատվությունների ավարտին լրացվում են գրանցման թերթիկներ, որոնք ներառում են թեմանները, մասնակցած ուսանողների անունները և հիմնական շեշտադրումները։ Գրանցման թերթիկը նպատակ ունի վերհանելու ուսանողների հիմնական կարիքները խորհրդատվական պարապմունքներում։

Փորձագիտական հանդիպումներից պարզ դարձավ, որ դասախոսները պատրաստակամ են աջակցելու ուսանողներին։ Ըստ քոլեջի կողմից իրականացված հարցումների՝ ուսանողները կարևորում են խորհրդատվական պարապմունքների իրականացումը, և նրանց 82% -ն ընդգրկված է այս պարապմունքներում։ Ուսանողների համար նախատեսված առանձին լրացուցիչ պարապմունքներ քոլեջում դեռևս չեն իրականացվում, մասնավորապես՝ օտար լեզուների կարողությունների զարգացման և այլ ուղղություններով։

Փորձագիտական այցից պարզ դարձավ, որ ուսանողներն ազատ են դիմելու վարչական անձնակազմին իրենց հուզող հարցերով։ Վարչական աշխատակազմին դիմելու հստակ ժամանակցույց քոլեջում առկա չէ։ Ըստ ինքնավերլուծության՝ ուսանողների 90-100%-ը տեղեկացված է իրեն վերաբերող վարչական ծառայությունների մասին, իսկ 85%-ը բավարարված է այդ ծառայություններից։

Ուսանողների և շրջանավարտների կարիերային նպաստելու նպատակով քոլեջում առկա է Մասնագիտական կողմնորոշման և կարիերայի ուղղորդման ստորաբաժանում։ Մասնագիտական կողմնորոշման և կարիերայի ուղղորդման պատասխանատուն կազմակերպում է աշխատանքային հնարավորությունների վերաբերյալ տեղեկատվության

տրամադրում, ինչպես նաև սեմինարներ, կլոր-սեղան քննարկումներ, ճանաչողական այցեր ու հանդիպումներ զբաղվածության տարածքային կենտրոնի ներկայացուցիչների և գործատուների հետ: Պատասխանատուն խթանում է ուսանողների մասնակցությունը տարբեր դասընթացների և մրցույթներին, որտեղ որոշ ուսանողներ հաջողություններ են գրանցել: Մասնավորապես՝ 2024 թվականին քոլեջի «Խոհարարական գործ» մասնագիտության ուսանողներից մեկը մասնակցել է «Armenian Chefs Association»-ի կողմից կազմակերպված «Հայաստանի երիտասարդ ուսանող-խոհարար մրցույթ 2024»-ին և ստացել միջազգային հավաստագիր:

Փորձագիտական այցից պարզ դարձավ, որ քոլեջը դեռևս չի կնքել համագործակցության համաձայնագրեր տարբեր կազմակերպությունների և հաստատությունների հետ՝ թափուր աշխատատեղերի վերաբերյալ տեղեկատվության փոխանակման նպատակով: Մասնագիտական կողմնորոշման և կարիերայի ուղղորդման պատասխանատուն պարբերաբար իրազեկում է շրջանավարտներին առկա թափուր աշխատատեղերի մասին, այնուամենայնիվ փորձագիտական այցից պարզ դարձավ, որ թափուր հաստիքների մասին տեղեկացվում են ոչ բոլոր շրջանավարտները: Շրջանավարտների հետ կապը հիմնականում իրականացվում է հեռախոսազանգերի միջոցով: Հարկ է նշել, որ քոլեջում ներկայում ընթացքի մեջ է շրջանավարտների տվյալների բազայի ձևավորման գործընթացը:

Մասնագիտական կողմնորոշման և կարիերայի ուղղորդման պատասխանատուն իրականացրել է իր գործունեության արդյունքների վերլուծություն, որի ընթացքում ներկայացվել են վերջին տարիներին քոլեջի շրջանավարտների զբաղվածության տվյալները: Ըստ այդ տվյալների՝ 341 շրջանավարտներից 118-ը շարունակում են ուսումը բուհերում, իսկ 113-ը աշխատում են, որոնցից 66-ը աշխատում են ստացած մասնագիտության ոլորտում: Զբաղվածության ցուցանիշները հատկապես բարձր են «Քույրական գործ» և «Վարսավիրական արվեստ և զարդային դիմահարդարում» մասնագիտությունների շրջանակներում, որտեղ յուրաքանչյուր ծրագրի շրջանակում 9 շրջանավարտ զբաղված են իրենց մասնագիտական ոլորտում:

Ուսանողներին հետազոտական աշխատանքներում ներգրավելու նպատակով հանձնարարվում են ռեֆերատներ, նախագծային-հետազոտական առաջադրանքներ, ինչպես նաև գործնական առաջադրանքներ, որոնք պարունակում են հետազոտական բաղադրիչ: Մասնավորապես՝ «Գյուղացիական (ֆերմերային) տնտեսության կազմակերպում» մասնագիտության ուսանողներին տրվում են ձկների արհեստական բեղմնավորման գործնական առաջադրանքներ: «Բանկային գործ» ՄԿՕ-ի շրջանակում ուսանողներին հանձնարարում են կատարել ՀՀ բանկային համակարգի համեմատական վերլուծություն և այլն:

Ուսանողների իրավունքների պաշտպանության համար քոլեջում գործում է Ուսանողական խորհուրդ: ՈւԽ-ն իր կողմից նախատեսվող միջոցառումներն ամրագրում է տարեկան աշխատանքային պլաններում՝ նշելով նախատեսված միջոցառումների կատարման ժամկետները և դրանց նպատակները: ՈւԽ հաշվետվությունը ներկայացվում է ուսանողներին: ՈւԽ նիստերն արձանագրվում են: Փորձագիտական այցի ընթացքում պարզ դարձավ, որ Ուսանողական խորհուրդը կազմել է սեփական բյուջե՝ հիմնված ուսանողների կազմակերպած հանգանակությունների վրա, և այս բյուջեով նախատեսվում է ձեռք բերել թենիսի սեղան՝ ուսանողների նախաձեռնությամբ:

ՈւԽ-ն ընդգրկում է 77 ակտիվ ուսանողի, որոնցից խորհրդի նախագահը ընտրվում է փակ գաղտնի քվեարկությամբ, իսկ անդամները՝ կուրսերում ակտիվ մասնակցություն ցուցաբերած ուսանողներից: Խորհրդի անդամները ներգրավված են քոլեջի կառավարման գործընթացներում՝ ընդգրկվելով Իրավակարգապահական հանձնաժողովում, Կոլեգիալ

կառավարման հանձնաժողովում և Կառավարման խորհրդում: ՈՒԽ-ն համակարգում և պլանավորում է խորհրդի կազմի համալրումը, ֆոնդի ստեղծումը, ուսանողների խնդիրների և առաջարկությունների հավաքագրումը, տոնակատարությունների կազմակերպումը, սեմինար-քննարկումների և սպորտային, մշակութային միջոցառումների անցկացումը: Մասնավերապես՝ 2024-2025 ուսումնական տարում ՈՒԽ-ն իրականացրել է նախագահի ու անդամների ընտրություն, երկու անդամներ ներգրավվել են Կոլեգիալ կառավարման խորհրդում, ստեղծվել ու համալրվել է ՈՒԽ-ի ֆոնդը, կազմակերպվել են Նոր տարվա և Սուրբ Զատիկի տոնակատարություններ, անցկացվել է պրեզենտացիա գլոբալ տաքացման թեմայով՝ խթանելով առաջին կուրսեցիների ակտիվությունը, թիմային հմտություններն ու ուսանողական կյանքին ինտեգրումը, ինչպես նաև կազմակերպվել են «Դասախոսը՝ որպես մենթոր» և «Գենդերային հավասարություն. Ֆեմինիզմ» թեմաներով սեմինար-քննարկումներ և գրադարանի ասմունքի ցերեկույթներ:

Փորձագիտական այցի ընթացքում պարզ դարձավ, որ Քոլեջի Ուսանողական խորհուրդը համագործակցում է նաև այլ ուսումնական հաստատությունների՝ մասնավորապես Վարդենիսի բժշկա-հումանիտար քոլեջի ՈՒԽ-ի և Վարդենիսում գործող չորս հիմնական դպրոցների աշակերտական խորհուրդների հետ: Այս համագործակցության շրջանակներում նախատեսվում են բանավեճ-քննարկումներ և այլ համատեղ նախաձեռնություններ: Դրան զուգընթաց, Վարդենիսի բժշկա-հումանիտար քոլեջի հետ համագործակցության շրջանակներում կազմակերպվել է «Սթրեսի կառավարում» թեմայով քննարկում, որի բանախոսը եղել է Վարդենիսի «Բաղեյան» պետական քոլեջի ուսանող:

ՈՒԽ-ի նախաձեռնությամբ 2024-2025 ուսումնական տարում ստեղծվել է բողոքների և առաջարկությունների արկղ, որը պլանավորվում է բացել յուրաքանչյուր կիսամյակ: ՈՒԽ-ն նաև ուսանողների շրջանում հայտնաբերել է սեփական մարզադահլիճ ունենալու պահանջ, ինչի արդյունքում քոլեջի բակում ստեղծվել է ժամանակավոր սպորտային հրապարակ: Ուսանողների առաջարկով ՈՒԽ-ն նախատեսում է կազմակերպել արդիական թեմաներով դասընթացներ, մասնավորապես՝ կինեմատոգրաֆիայի, մշակութային մենեջմենթի և այլ ուղղություններով:

Փորձագիտական ուսումնասիրությունները ցույց տվեցին, որ նիստերի ընթացքում ուսանողների իրավունքների խախտման կամ պաշտպանությանն ուղղված հարցեր չեն քննարկվել: ՈՒԽ-ի աշխատանքների վերաբերյալ իրազեկման միջոցառումները ակտիվ են, իսկ անդամները պարբերաբար շրջայցեր են կատարում լսարաններում՝ ապահովելով ուսանողների հետ անմիջական հաղորդակցություն:

Քոլեջում գործող կրթական, խորհրդատվական և այլ օժանդակ ծառայությունների արդյունավետությունը գնահատվում է հարցաթերթիկների, հանդիպումների և քննարկումների միջոցով:

Դատողություններ: Փորձագիտական խումբը դրական է գնահատում Վարդենիսի «Բաղեյան» պետական քոլեջի կողմից իրականացվող ընդունելության, հավաքագրման և մասնագիտական կողմնորոշման բազմազան և նպատակային քայլերը, որոնց միջոցով քոլեջը արդյունավետորեն ներկայացնում է իր կրթական հնարավորությունները և ապահովում դիմորդների նախնական տեղեկատվություն:

Փորձագիտական խումբը դրական է գնահատում քոլեջի կողմից ուսանողների կրթական կարիքների համակարգված գնահատման մեխանիզմների առկայությունը, որոնք ներառում են տարբեր ստորաբաժանումների մասնակցությունը: Անանուն հարցումների, ֆոկուս խմբային քննարկումների և բողոքների արկղի գործարկումը նպաստում է ուսանողների կարիքների ճշգրիտ հայտնաբերման ու դրանց լուծման համար նպատակային քայլերի իրականացմանը:

Փորձագիտական խումբը կարևորում է Ուսանողական խորհրդի դերակատարությունը ուսանողների խնդիրների և առաջարկությունների համակարգված ներկայացման գործում, այնուամենայնիվ փորձագիտական խումբը գտնում է, որ կրթական կարիքների վերհանումը դեռևս ամբողջովին չի ձևավորվել և դրա առավել համակարգված ու ընդլայնված մշակումը՝ ուսանողների լայն շրջանակի պահանջները լիարժեք ընդգրկելու նպատակով, կարող է նպաստել ուսանողների աջակցության արդյունավետության բարձրացմանը:

Փորձագիտական խումբը դրական է համարում նաև նախաքննական խորհրդատվությունների իրականացումը, ինչպես նաև դասախոսների ցուցաբերած պատրաստակամությունը՝ աջակցելու ուսանողների կրթական կարիքների բավարարմանը: Միևնույն ժամանակ, խումբը դիտարկում է, որ ուսանողների օտար լեզուների իմացության մակարդակի բարելավման նպատակով հավելյալ դասընթացների կազմակերպումը կարող է էականորեն խթանել քոլեջի միջազգայնացմանը միտված գործընթացները:

Կրթական, խորհրդատվական և օժանդակ ծառայությունների արդյունավետության գնահատման մեխանիզմները խթանում են ուսանողական ձայնի լսելիությունը և նպաստում խնդիրների հայտնաբերման ու լուծման գործընթացին, սակայն անհրաժեշտ է շարունակական և նպատակային քայլերի իրականացում՝ ուսանողական կարիքների լիարժեք սպասարկման համար:

Փորձագիտական խումբը դրական է համարում քոլեջի Կարիերայի ստորաբաժանման գործունեությունը, որը ուսանողների համար կազմակերպում է մրցույթներ, քննարկումներ, ճանաչողական այցեր և այլ կրթական միջոցառումներ: Խումբը նաև կարևորում է Կարիերայի պատասխանատուի ջանքերը շրջանավարտների հետ կապ պահպանելու և նրանց պարբերաբար թափուր աշխատատեղերի մասին տեղեկացնելու ուղղությամբ: Այնուամենայնիվ, փորձագիտական խումբը տեսնում է անհրաժեշտություն կարիերայի ստորաբաժանման և շրջանավարտների կապի մեթոդների բարելավման՝ ինչը կնպաստի բոլոր շրջանավարտների լիարժեք իրազեկմանը և ներգրավվածությանը:

Դրական է, որ ուսանողների հետազոտական կարողությունների զարգացման նպատակով քոլեջում ձեռնարկվել են գործուն քայլեր: Այնուամենայնիվ, փորձագիտական խումբը գտնում է, որ անհրաժեշտ է ապահովել գործընթացի շարունակականությունը, ընդլայնել կիրառման շրջանակ, որպեսզի հետազոտական տարրերը ընդգրկվեն բոլոր կրթական ծրագրերում և բոլոր ուսանողների մասնակցությամբ:

Փորձագիտական խումբը դրական է գնահատում այն հանգամանքը, որ քոլեջում գործում է ուսանողների իրավունքների պաշտպանության նպատակով գործող ուսանողական ներկայացուցչական մարմին՝ Ուսանողական խորհուրդը: Դրական է նաև, որ ՈւԽ-ը հանդես է գալիս նախաձեռնող դերակատարությամբ՝ ներկայացնելով ուսանողների կարիքներից բխող առաջարկություններ, կազմակերպելով բովանդակային միջոցառումներ, ինչպես նաև համագործակցելով այլ ուսումնական հաստատությունների ուսանողական խորհուրդների և դպրոցական կառույցների հետ: Այս մոտեցումը ամրապնդում է ուսանողակենտրոն միջավայրը՝ կրթական գործընթացում ուսանողի ձայնի արժևորումը դարձնելով իրականություն:

Դրական է, որ կրթական, խորհրդատվական և օժանդակ ծառայությունների արդյունավետության գնահատման մեխանիզմները հնարավորություն են տալիս արձագանքել ուսանողների կարիքներին, սակայն անհրաժեշտ է շարունակական պարբերականություն և գնահատման գործիքների զարգացում՝ ծառայությունների որակի բարելավման ապահովման նպատակով:

Եզրահանգում: Հաշվի առնելով, որ ՎԲՊՔ-ն ունի ուսանողների հավաքագրման և կրթական կարիքների վերհանման հստակ մեխանիզմներ, քայլեր է ձեռնարկում կարիերայի կենտրոնի և շրջանավարտների հետ համագործակցության, ինչպես նաև խթանում է Ուսանողական խորհրդի ակտիվ գործունեությունը, փորձագիտական խումբը գտնում է, որ ՎԲՊՔ-ն համապատասխանում է չափանիշ 4-ի պահանջներին:

Եզրակացություն: Փորձագիտական խումբը ՎԲՊՔ-ի ինստիտուցիոնալ կարողությունների համապատասխանությունը չափանիշ 4-ի պահանջներին գնահատվում է **բավարար**:

V. ՊՐՈՖԵՍՈՐԱԴԱՍԱԽՈՍԱԿԱՆ ԵՎ ՈՒՍՈՒՄՆԱՕԺԱՆԴԱԿ ԿԱԶՄԸ

ՉԱՓԱՆԻՇ: ՄՈՒՀ-ի առաքելությանը հասնելու և ՄԿԾ-ների նպատակներն իրականացնելու համար հաստատությունն ապահովված է անհրաժեշտ մասնագիտական որակներ ունեցող պրոֆեսորադասախոսական և ուսումնաօժանդակ կազմով:

Փաստեր

Ըստ ՄՈՒՀ-ի 2025-2030թթ. ՌԾ-ի՝ Քոլեջն իր առջև նպատակադրել է «ՄԿԾ-երի իրականացման համար անհրաժեշտ մասնագիտական որակներ ունեցող դասախոսական, ուսումնաօժանդակ կազմով ապահովում և անձնակազմի շարունակական կատարելագործման և գնահատման մեխանիզմների ապահովում»: Դասախոսական կազմի ընտրությունն իրականացվում է «Պրոֆեսորադասախոսական և ուսումնաօժանդակ կազմի աշխատանքի ընդունման և ազատման կանոնակարգի» համաձայն: Թափուր հաստիքների համալրման համար հայտարարվում են մրցույթներ, սակայն վերջին երեք տարիներին մրցույթ չի անցկացվել՝ թափուր հաստիքների բացակայության պատճառով: Մրցույթն իրականացվում է բանավոր հարցազրույցի միջոցով, որից հետո մրցութային հանձնաժողովի քվեարկությամբ ընտրվում է լավագույն թեկնածուն: Վերջին մեկ տարվա ընթացքում քոլեջում աշխատանքի են անցել երեք նոր աշխատակից՝ մեկ արտադրական ուսուցման վարպետ, մեկ պրակտիկ ոլորտի մասնագետ, որը համակարգում է «Դեղագործություն» մասնագիտության կրթական ծրագրի պրակտիկան, ինչպես նաև մեկ այլ աշխատակից, որը համակարգում է «Բանկային գործ» մասնագիտության պրակտիկան: Այս աշխատակիցները չեն ընտրվել մրցութային ընթացակարգով, այլ ընդունվել են հարցազրույցի հիման վրա:

Ըստ կրթական ծրագրերի դասախոսի առջև դրված հստակ պահանջներ առկա են, որոնք սահմանված են «Մասնագիտական կրթական ծրագրերի արդյունավետ իրականացման համար մանկավարժական կազմի մասնագիտական որակներին ներկայացվող հստակ պահանջների կարգում», որտեղ քոլեջի մանկավարժական կազմի համար սահմանվել են մասնագիտական, մանկավարժական և կազմակերպչական կոմպետենցիաներ:

Քոլեջում դասավանդում են 66 դասախոս, որոնցից 58-ը ունեն բարձրագույն կրթություն, իսկ 8-ը՝ միջին մասնագիտական: Միաժամանակ, արձանագրվել են դեպքեր, երբ դասավանդողի մասնագիտական որակավորումը չի համապատասխանում տվյալ մոդուլին, սակայն այդ դասախոսներն ունեն ավելի քան 10 տարվա աշխատանքային փորձ և շարունակում են դասավանդել քոլեջում: Ներկայումս քոլեջն ունի 2 գործատու դասախոս: Փորձագիտական այցից պարզ դարձավ, որ շրջանավարտ-դասախոսները նույնպես 2-ն են:

Փորձագիտական ուսումնասիրություններից պարզ դարձավ, որ դասախոսական կազմը նվազագույնը 1 մոդուլ/առարկա է դասավանդում, իսկ առավելագույնը՝ 12:

Փորձագիտական այցից պարզ դարձավ, որ քոլեջն ունի նաև «Սկսնակ դասավանդողների խրախուսման և մասնագիտական առաջընթացի ապահովման քաղաքականություն և ընթացակարգեր» փաստաթուղթը, որտեղ ներկայացված են մասնագիտական առաջընթացի մեխանիզմներն ու խրախուսման ձևերը, ինչպես նաև «Մենթորության քաղաքականությունը»: Փորձագիտական այցի ընթացքում պարզ դարձավ, որ սկսնակ դասախոսներին ցուցաբերվում է մենթորություն ամբիոնի վարիչների և փորձառու դասախոսների կողմից՝ դասավանդման մեթոդների ընտրության, դասերի կառուցման նպատակով, ինչպես նաև պրակտիկաների կազմակերպման և կրթական ծրագրերին ծանոթացման ուղղությամբ: Մենթորության շրջանակում իրականացվում են դասալսումներ, ինչպես նաև սկսնակ դասախոսները հաճախում են փորձառու գործընկերների դասերին՝ փորձի փոխանակման և մասնագիտական հմտությունների զարգացման նպատակով:

2024թ.-ին քոլեջում հաստատվել է «Մանկավարժական կազմի մասնագիտական որակների և աշխատանքի գնահատման ընթացակարգեր» կանոնակարգը՝ համաձայն որի դասախոսական կազմի աշխատանքի արդյունավետությունը գնահատվում է ըստ հետևյալ մեթոդների. ինքնագնահատում, ուսանողների կողմից հարցումների միջոցով գնահատում, մենթորություն և գործընկերային գնահատում, վարչական փաստաթղթերի առկայության գնահատում, դասալսումներ:

Դասախոսական կազմի գործունեությունը գնահատելու ու բարելավելու նպատակով քոլեջը 2024-2025թթ. ներդրել է «Դասախոսի մանկավարժամեթոդական աշխատանքների գրառումների և վերլուծության անհատական մատյանը»: Փորձագիտական այցից պարզ դարձավ, որ մատյանում դասախոսը տարեկան կտրվածքով ներկայացնում է իր կողմից կատարվող աշխատանքների և հանձնարարությունների պլանավորումը, կատարված գործունեության ինքնավերլուծությունը, ինչպես նաև ուսանողների առաջադիմության տվյալները: Տարվա վերջում տնօրենը, հիմք ընդունելով մատյանում ներկայացված տեղեկատվությունը՝ դասախոսի աշխատանքը գնահատում է սահմանված չափորոշիչների հիման վրա (20 միավորանոց սանդղակով): Վերջնական գնահատման արդյունքների հիման վրա դասախոսներին նախատեսվում է տրամադրել նաև հավելավճար: Փորձագիտական այցի ընթացքում պարզ դարձավ, որ վերջնական գնահատում դեռևս չի իրականացվել:

Քոլեջում առկա է դասալսումների և փոխադարձ դասալսումների ժամանակացույց, ինչպես նաև մշակված է դասալսումների անցկացման միասնական ձևաթերթ: Սակայն փորձագիտական այցի ընթացքում պարզ դարձավ, որ դասալսումները տարբեր դեպքերում արձանագրվում են տարբեր ձևաչափերով: Քոլեջում փոխադարձ դասալսումներն իրականացվում են ներքին լավ փորձը տարածելու նպատակով: Դասալսումների արդյունքում հիմնականում որպես ուժեղ կողմեր ընդգծվում են գործնական կարողությունների զարգացումը և ինտերակտիվ ուսուցման մեթոդների կիրառումը, իսկ որպես բարելավման ենթակա կողմեր՝ ուսումնական ռեսուրսների սահմանափակ լինելը և ուսանողների պասիվ մասնակցությունը:

Քոլեջի 2025թ. նախահաշվի և բյուջեի ուսումնասիրությունից պարզ դարձավ, որ քոլեջը ֆինանսական միջոցներից բյուջեի 0,18-ը հատկացրել է դասախոսական կազմի մասնագիտական զարգացմանն ուղղված միջոցառումներին, վերապատրաստումներին:

ՎԲՊՔ-ի մանկավարժական կազմը հաճախ մասնակցում է մասնագիտական վերապատրաստումների, որոնք իրականացվում են միջազգային կազմակերպությունների կողմից ֆինանսավորվող ծրագրերի շրջանակում, օրինակ՝ World Vision, GIZ և այլք: Քոլեջի

մանկավարժական կազմի մասնագիտական զարգացման հաջորդ կարևոր ուղղությունն է ՀՀ ԿԳՄՄՆ-ի կողմից իրականացվող ՄԿՈՒ մանկավարժների պարտադիր ատեստավորումը: 2024 թվականին քոլեջի 12 դասախոս և արտադրական ուսուցման վարպետներ մասնակցել են վերապատրաստմանը և անցել պարտադիր ատեստավորման փուլը («Ծրագրավորման հիմունքներ», «Վեբ դիզայն» և այլն): Այնուամենայնիվ, հարկ է նշել, որ մասնագիտական վերապատրաստման հնարավորություններ դեռևս չեն ընդգրկում բոլոր մասնագիտական կրթական ծրագրերի դասախոսներին:

Քոլեջի դասախոսները պարբերաբար մասնակցում են ՄԿՈՒՋԱԿ-ի կողմից իրականացվող մեթոդական վերապատրաստումներին՝ տարեկան միջինը 10-12 դասախոս:

Դասախոսական կազմի զարգացման նպատակով քոլեջում իրականացվում են կարիքների վերհանում և մասնագիտական վերապատրաստման միջոցառումներ: Մասնավորապես՝ «Դասախոսների կոմպետենցիաների գնահատման» հարցման արդյունքներով արձանագրվել է, որ դասախոսական կազմի 53.1%-ը ունի մասնագիտական վերապատրաստման կարիք: Այս արդյունքների հիման վրա հրավիրվում են համապատասխան ոլորտում փորձառու և առաջատար պրակտիկ մասնագետներ՝ քոլեջում վարպետաց դասեր անցկացնելու նպատակով: Օրինակ՝ 2024–2025 ուսումնական տարվա ընթացքում քոլեջը հրավիրել է մի շարք մասնգետների, այդ թվում՝ «ՎՏԲ-Հայաստան Բանկ» ՓԲԸ Մարտունու մասնաճյուղի և «ԱԿԲԱ ԲԱՆԿ» ԲԲԸ-ի Վարդենիսի մասնաճյուղի կառավարիչներին, Մարտունու ITArm Academy ծրագրավորման կենտրոնի հիմնադիր-տնօրենին, ինչպես նաև ՀՀ Էկոնոմիկայի նախարարության Գյուղատնտեսական խորհրդատվության և նորարարությունների վարչության պետին:

Փորձագիտական այցի ընթացքում պարզ դարձավ, որ դասախոսները յուրաքանչյուր կիսամյակ ամբիոնի շրջանակում իրականացնում են մեթոդական զեկուցումներ: Մասնավերապես՝ «Ֆորմալ և ոչ ֆորմալ կրթաձևերի համադրումը», «Եռաչափ գրաֆիկայի սկզբունքները» և այլն:

2024թ. քոլեջում ներդրվել է «Դասախոսական կազմի կայունության քաղաքականություն և ընթացակարգեր» փաստաթուղթը: Փաստաթուղթը նպատակ ունի ապահովել դասախոսական կազմի կայունությունը՝ սահմանելով մի շարք ռազմավարական քայլեր, այդ թվում՝ արդարացի վարձատրություն և հավելավճարների տրամադրում, վերապատրաստումների և մասնագիտական միջոցառումների աջակցություն և այլն: Ներկայումս քոլեջում դասավանդողների միջին տարիքը 38 է: Հարկ է նշել, որ քոլեջում դասավանդող 66 դասախոսներից համատեղությամբ աշխատում են 6-ը: Այնուամենայնիվ, փորձագիտական այցից պարզ դարձավ, որ քոլեջում դեռևս չի գործում դասախոս թեկնածուների բազա:

Փորձագիտական այցից պարզ դարձավ, որ «Գյուղացիական (ֆերմերային) տնտեսության կազմակերպում» մասնագիտական կրթական ծրագրի մասնագիտական մոդուլները դասավանդում են 2 դասախոս: «Համակարգչային գեղարվեստական նախագծում» մասնագիտության գծով ներգրավված է 5 դասախոս, իսկ «Բանկային գործ» ՄԿԾ-ի շրջանակում դասավանդում են 4 դասախոս:

2024–2025 ուսումնական տարում խրախուսվել են թե՛ դասախոսները, թե՛ ամբիոնի վարիչները, թե՛ ստորաբաժանումների ղեկավարները՝ դրամական պարգևավճարների կամ շնորհակալագրերի ձևաչափով: Սակայն դեռևս պարգևատրման որոշումները կայացվում են տվյալ պահին՝ իրավիճակից ելնելով, առանց սահմանված ընթացակարգի:

Քոլեջի հաստիքային վարչական աշխատակիցները իրենց վարչական գործառույթների իրականացմանը զուգընթաց ներգրավված են նաև դասավանդման գործընթացներում: Մասնավորապես՝ Մասնագիտական կողմնորոշման և կարիերայի

ուղղորդման պատասխանատուն դասավանդում է «Համակարգչային գեղարվեստական նախագծում» ՄԿՕ-ում և այլն։

Փորձագիտական այցից պարզ դարձավ, որ քոլեջը փորձում է ապահովել դասախոսական կազմի մասնագիտական առաջընթացը, մասնավորապես 2024թ. ստեղծել է «Դասախոսական կազմի մասնագիտական առաջընթացի ապահովման քաղաքականությունը և ընթացակարգը», որտեղ նշված է, թե ինչ քաղաքականություն պետք է վարել դասախոսական կազմի մանկավարժական, մասնագիտական որակավորումը անհրաժեշտ մակարդակի վրա պահելու և նրանց մասնագիտական առաջընթացն ապահովելու համար։ Նկատվում են նաև մասնագիտական առաջընթացի օրինակներ՝ մասնավորապես, երբ մեթոդիստը նշանակվել է մասնագիտական կրթության բաժնի վարիչ, դասախոսը դարձել է ամբիոնի վարիչ և այլն։

Հարկ է նշել, որ ուսումնաօժանդակ և վարչական կազմերի ներկայացուցիչների գործառույթները սահմանվում են պայմանագրերով և պաշտոնների նկարագրերով։

Դատողություններ:

Փորձագիտական խումբը դրական է գնահատում այն հանգամանքը, որ ՎԲՊՔ-ում վերջին տարիներին ակնհայտ են պրոֆեսորադասախոսական կազմի զարգացմանն ուղղված միտումները։ Մշակվել և ներդրվել են մի շարք կարգավորող փաստաթղթեր՝ մասնագիտական առաջընթացի ապահովման, աշխատանքի գնահատման, մենթորության և կայունության ապահովման վերաբերյալ։ Այս փաստաթղթերը ձևավորում են դասախոսական կազմի կառավարման ավելի համակարգված հիմք։

Քոլեջում ներդրված է մենթորության համակարգը սկսնակ դասախոսների համար, որը գործնականում իրականացվում է փորձառու դասախոսների և ամբիոնի վարիչների միջոցով։ Փոխադարձ դասալսումների և մեթոդական զեկուցումների համակարգը կարող է նպաստել դասավանդման որակի և մասնագիտական համագործակցության խթանմանը։ Խումբը նպատակահարմար է համարում միավորել և ձևաչափել այս գործողությունները՝ որպես շարունակական մասնագիտական զարգացման համակարգի բաղադրիչ։

Դրական է, որ քոլեջը ներդրել է «Դասախոսի մանկավարժամեթոդական աշխատանքների անհատական մատյան» համակարգը՝ դասախոսների գործունեության պլանավորման և վերլուծության նպատակով։ Այն կարող է հիմք հանդիսանալ պարբերական գնահատման և զարգացումների արձանագրման համար։ Խումբը նպատակահարմար է համարում բարելավել տվյալների վերլուծության մեխանիզմը՝ մատյանում ներառված տեղեկատվության օգտագործմամբ։

Քոլեջի գնահատման մոտեցումներում ընդգրկված են բազմազան մեթոդներ (ինքնագնահատում, ուսանողների կարծիք, մենթորություն և այլն), սակայն դասախոսների գնահատման արդյունքների կիրառությունը դեռևս կայունացված չէ։ Խումբը նպատակահարմար է համարում ներդնել կանխատեսելի և հստակ ընթացակարգ՝ գնահատման արդյունքների հիման վրա վերապատրաստման պլանների, խրախուսման և կարիերային աճի կապակցությամբ։

ՎԲՊՔ-ն փորձում է խրախուսել դասախոսական կազմի մասնագիտական զարգացումը՝ կազմակերպելով վերապատրաստումներ միջազգային և տեղական գործընկերների միջոցով, ինչպես նաև իրականացնելով մասնագետների ներգրավում վարպետաց դասերի նպատակով։ Խումբը կարևորում է վերապատրաստումների հասանելիության ընդլայնումը՝ հատկապես այն ոլորտներում, որտեղ կարիքներ են արձանագրվել՝ հիմնվելով կարիքների վերհանման տվյալների վրա։

Չնայած կատարված քայլերին, որոշ մասնագիտությունների դասավանդման համար ներգրավված են սահմանափակ թվով դասախոսներ, ինչը կարող է ավելորդ ծանրաբեռնվածության պատճառ դառնալ։ Խումբը նպատակահարմար է համարում

ձևավորել դասախոսական կազմի պոտենցիալ թեկնածուների բազա, ինչը կբարձրացնի դասախոսների ներգրավման պլանավորման կանխատեսելիությունը:

Եզրահանգում: Հաշվի առնելով, որ քոլեջն ապահովված է համապատասխան մասնագիտական կարողություններ ունեցող դասախոսական և ուսումնաօժանդակ կազմով, իրականացվում են դասալսումներ դասավանդման արդյունավետությունը գնահատելու նպատակով, սկսնակ դասախոսների համար իրականացվում են աջակցության միջոցառումներ, քոլեջն ունի կայուն դասախոսական կազմ, առկա են մասնագիտական առաջընթացի դեպքեր՝ փորձագիտական խումբը գտնում է, որ քոլեջը համապատասխանում է չափանիշ 5-ի պահանջները:

Եզրակացություն: Փորձագիտական խումբը ՎԲՊՔ-ի ինստիտուցիոնալ կարողությունների համապատասխանությունը չափանիշ 5-ի պահանջներին գնահատում է **բավարար**:

VI. ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԶԱՐԳԱՑՈՒՄԸ

ՉԱՓԱՆԻՇ: ՄՈՒՀ-ն ապահովում է հետազոտական գործունեության իրականացումը և կապն ուսումնառության հետ:

Փաստեր

Վարդենիսի «Բադեյան» պետական քոլեջում հետազոտական գործունեությունը ռազմավարական առաջնահերթություն է, ինչը արտացոլված է 2025-2030թթ. զարգացման ծրագրում, ինչպես նաև 2024-2025թթ. կարճաժամկետ ծրագրում: «Հետազոտության ոլորտում ՎԲՊՔ-ի ռազմավարություն միջնաժամկետ և կարճաժամկետ պլանավորումները» փաստաթղթում ամրագրված է, որ հետազոտական աշխատանքներով զբաղվող ուսանողների թիվը տարեկան պետք է աճի 30%-ով, իսկ իրականացվող հետազոտական նախագծերի քանակը տարեկան չպետք է նվազի 10-ից:

2024 թվականին քոլեջում մշակվել է փաստաթղթային հիմք, որը կարգավորում է հետազոտական աշխատանքի կազմակերպման հիմնական սկզբունքները, ուղղություններն ու ընթացակարգերը, ինչպես նաև խրախուսման մեխանիզմները: Սահմանվել են նաև հետազոտական աշխատանքների (ռեֆերատ, կուրսային, ինքնուրույն և նախագծային աշխատանքներ) պատրաստման, ներկայացման և գնահատման կարգեր: Առաջադրանքների գնահատման չափանիշներն առավել մանրամասն շարադրված են «Հետազոտական աշխատանքների կազմման և ներկայացման կարգ և ուղեցույցում»:

Քոլեջում հետազոտական բաղադրիչը ներառված է մասնագիտական մոդուլների կազմում՝ որպես ուսումնառության անբաժանելի մաս: Բոլոր կրթական ծրագրերի շրջանակում առկա է անհատական գործնական աշխատանքների ու առաջադրանքների հաստատված ցանկ: 2024-2025 ուսումնական տարվանից սկսած, քոլեջում հետազոտական բաղադրիչը դիտարկվում է որպես ուսանողների ստեղծագործական գործունեության հիմք: Օրինակ՝ «Բանկային գործ» ՄԿԾ-ի շրջանակում ուսանողներին հանձնարարում են վերլուծել դրամի փոխարժեքի փոփոխությունների ազդեցությունը Հայաստանի ներմուծման և արտահանման կառուցվածքի վրա, իսկ «Գյուղացիական (ֆերմերային) տնտեսության կազմակերպում» մասնագիտության ուսանողները կաթիլային ոռոգման իրականացման համար չափում են բույսերի խոնավության օպտիմալ քանակությունը ողջ վեգետացիոն ժամանակաշրջանի ընթացքում, որոշում են բույսի արմատների ինտենսիվ շնչառությունը հողի էրոզիայի կանխարգելման նպատակով: «Համակարգչային գեղարվեստական նախագծում» մասնագիտությամբ ուսանողները կատարում են առաջադրանքներ էրգոնոմիկայի և նորարարական դիզայնի ուղղությամբ: Հարկ է նշել, որ քոլեջում իրականացվող գործնական առաջադրանքներն ընդգրկում են հետազոտական բաղադրիչ:

Փաստաթղթերի ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ որոշ հետազոտական տարրեր ներառված են ուսանողների ինքնուրույն աշխատանքներում, սակայն ռեֆերատներում հետազոտական ուսումնասիրությունը երբեմն բացակայում են: Ընդ որում, ռեֆերատներում և ինքնուրույն աշխատանքներում սովորաբար առկա են եզրակացությունները և աղբյուրների հղումները:

Մասնագիտական մոդուլների շրջանակում ուսանողները կատարում են ինչպես անհատական, այնպես էլ թիմային նախագծային-հետազոտական առաջադրանքներ, որոնք ներառում են վերլուծական և նորարարական տարրեր: Օրինակ՝ «Գյուղացիական տնտեսության կազմակերպում» մասնագիտության ուսանողը իրագործել է «Հիբրիդ-20»-ի ստացման ծրագիրը ճագարաբուծության ոլորտում՝ իրականացնելով 10 ցեղատեսակների խաչասերում, որի արդյունքում ստացել է ավելի դիմացկուն և Վարդենիսի կլիմայական պայմաններին հարմարվող ցեղատեսակ: «Համակարգչային գեղարվեստական նախագծում» մասնագիտության ուսանողները կատարել են 3D մոդելավորման ծրագրերի համեմատական վերլուծություն, իրականացրել իրական 3D մոդելների ստեղծում, ինչպես նաև մեկ այլ ուսանողի կողմից ստեղծվել է քոլեջի գրադարանի համար վեբկայք և հեռախոսային հավելված: «Բանկային գործ» ծրագրի ուսանողը կատարել է տնտեսական աճի համակողմանի վերլուծություն Հայաստանի և Վարդենիս համայնքի մակարդակով: Փորձագիտական ուսումնասիրություններից պարզ դարձավ, որ դեռևս ոչ բոլոր ուսանողներն են ներգրավված հետազոտական աշխատանքներում, սակայն քոլեջի կողմից ներդրված խրախուսման մեխանիզմների արդյունքում ուսանողների շրջանում նկատվում է ակտիվություն՝ հետազոտական աշխատանքներում ներգրավվելու ուղղությամբ:

Հետազոտական աշխատանքների թեմաները նախապես ներկայացվում են ամբիոնին, ապա քննարկվում ու հաստատվում մանկավարժական խորհրդում: Թեմաները ընտրվում են հիմնականում կրթական ծրագրերին համապատասխան ոլորտներից, բայց ներառվում են նաև արտածրագրային՝ հատկապես գյուղատնտեսական ուղղվածության թեմաներ: Աշխատանքների իրականացումն ուղղորդում է դասախոսը, իսկ ներկայացումը և պաշտպանությունը կազմակերպվում են տնօրենի կողմից ստեղծված հանձնաժողովի մասնակցությամբ, որտեղ ընդգրկված են նաև գործատուներ կամ ակադեմիական գործընկերներ:

Ինքնուրույն անհատական աշխատանքի գնահատման համակարգում ռեֆերատները կազմում են 0,5 միավոր, շնորհանդեսները (սահիկաշարով կամ

ցուցահանդեսի ներկայացմամբ)՝ ևս 0,5, իսկ հետազոտական աշխատանքը՝ 1 միավոր, ընդհանուր՝ 2 միավոր 10 միավորանոց սանդղակում:

Գնահատման գործընթացն իրականացվում է սահմանված ձևաթղթով, որտեղ ուշադրություն է դարձվում թեմայի արդիականության հիմնավորմանը, կատարման ինքնուրույնությանը, վերլուծական բաղադրիչներին, աշխատանքների ներկայացման որակին և համագործակցությանը:

Փորձագիտական այցից պարզ է դարձավ, որ դասախոսները դեռևս չեն մշակել ձեռնարկներ կամ մեթոդական ուղեցույցներ իրենց գործունեության արդյունքում: Դասախոսական կազմը նաև մեծամասամբ հետամուտ չէ մասնագիտական ոլորտում ուսումնասիրելու միջազգային փորձը: Քոլեջում ներդրված է «Հետազոտական աշխատանքների խրախուսման քաղաքականություն» փաստաթուղթը, որտեղ ամփոփված են խրախուսման սկզբունքները և ընթացակարգերը՝ հետազոտական գործունեության խթանման նպատակով, որը դեռևս չի գործում:

Դատողություններ: Փորձագիտական խումբը դրական է գնահատում այն հանգամանքը, որ Վարդենիսի «Բադեյան» պետական քոլեջն իր ռազմավարական փաստաթղթերում հետազոտական գործունեությունը դիտարկում է որպես հիմնարար առաջնահերթություն: Այս մոտեցումը հիմք է դնում թե՛ ուսանողների ստեղծագործական կարողությունների զարգացման, թե՛ նորարարական լուծումների ձևավորման համար: Գովելի է, որ քոլեջում մշակվել են հետազոտական աշխատանքի կազմակերպման և գնահատման հստակ սկզբունքներ, ինչպես նաև խրախուսման կարգեր, որոնք ապահովում են գործընթացի կանոնակարգվածությունը և արդյունքների արտացոլումը:

Ուսանողներին տրվող հետազոտական առաջադրանքները՝ վերլուծական, ճանաչողական և ստեղծագործական տարրերով, նպաստում են ուսանողների քննադատական մտածողության, պրակտիկ հմտությունների և մասնագիտական մոտեցումների ձևավորմանը: Մասնագիտական մոդուլներում նման բաղադրիչների ընդգրկումը խթանում է կրթական ծրագրերի և հետազոտական աշխատանքի փոխկապակցված զարգացումը:

Գնահատելի է, որ քոլեջում կիրառվում է տարբեր ձևաչափերի հետազոտական գործունեություն՝ սկսած ռեֆերատներից, կուրսային և նախագծային աշխատանքներից մինչև իրական արտադրական և կիրառական խնդիրների լուծում: Այնուամենայնիվ, անհրաժեշտ է շարունակաբար ապահովել ուսանողների ինքնուրույն աշխատանքի մակարդակի բարձրացումը, ինչպես նաև հետազոտական բաղադրիչի առավել համակարգված արտացոլումը բոլոր տիպի աշխատանքներում, ինչը կնպաստի նրանց հետազոտական և վերլուծական հմտությունների խորացմանը:

Դրական է գնահատվում նաև, որ քոլեջում ներդրված են հետազոտական աշխատանքների գնահատման հստակ չափանիշներ, ինչը ապահովում է արդյունքների թափանցիկ և արդար գնահատումը՝ նպաստելով ուսանողների պատասխանատվության ու ինքնակրթության զարգացմանը:

Փորձագիտական խումբը կարևորում է, դասախոսական կազմի հետազոտական աշխատանքներում ներգրավվածությունը, ինչը կարող է խթանել նրանց կողմից ուսումնառության նյութերի, ձեռնարկների և մեթոդական ուղեցույցների մշակումն ու ներդրումը կրթական գործընթացում: Միևնույն ժամանակ, խումբը գտնում է, որ խրախուսման մեխանիզմների գործարկումը: Հետազոտական նախաձեռնությունների խթանմանն ուղղված ներդրված քաղաքականությունը և խրախուսման ձևերը կնպաստեն դասախոսների ակտիվ ներգրավմանը հետազոտական գործընթացներում, ինչպես նաև ստեղծագործական, վերլուծական բաղադրիչների համաչափ ներդրմանը բոլոր կրթական ծրագրերում:

Եզրահանգում: Հաշվի առնելով, որ քոլեջը նշանակալի քայլեր է ձեռնարկել ստեղծագործական և հետազոտական մոտեցումների ներդրման ուղղությամբ, ուսանողները ներգրավվում են նախագծային, կիրառական և վերլուծական բաղադրիչներ պարունակող հետազոտական աշխատանքներում, ուսումնական գործընթացում խրախուսվում են ուսանողների ինքնուրույն ուսումնասիրությունները և նորարարական լուծումների առաջադրումը՝ փորձագիտական խումբը գտնում է, որ քոլեջը համապատասխանում է չափանիշ 6-ի պահանջները:

Եզրակացություն: Փորձագիտական խումբը ՎԲՊՔ-ի ինստիտուցիոնալ կարողությունների համապատասխանությունը չափանիշ 6-ի պահանջներին գնահատում է **բավարար**:

VII. ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ ԵՎ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԸ

ՉԱՓԱՆԻՇ: ՄՈՒՀ-ն ունի անհրաժեշտ ռեսուրսներ՝ ուսումնական միջավայրի ստեղծման և սահմանված առաքելության ու նպատակների արդյունավետ իրականացման համար:

Փաստեր

Քոլեջը 2025-2030թթ. ՌԾ-ում, որպես խնդիրներ դիտարկել է՝ «Քոլեջում իրականացվող մասնագիտությունների կրթական ծրագրերի պահանջներին համապատասխան ուսումնական ու աշխատանքային միջավայրի շարունական բարելավումը, ուսումնական, գիտական և մյուս ռազմավարական ուղղություններով արդյունավետ գործունեության իրականացման համար անհրաժեշտ ֆինանսական ռեսուրսների ապահովումը, առողջության և անվտանգության պահպանմանն ուղղված ծառայությունների բարելավումը»:

Քոլեջն ունի երկու մասնաշենք, սակայն ուսումնական գործունեությունն ամբողջությամբ կազմակերպվում է հիմնական՝ չորս հարկանի մասնաշենքում, որի ընդհանուր մակերեսը կազմում է 2362 քառակուսի մետր: Երկրորդ մասնաշենքը կապիտալ վերանորոգման կարիք ունի: Մասնաշենքում գործող են 29 լսարան, այդ թվում՝ 3 համակարգչային լսարան, որոնցից մեկը՝ ԱՐՄԱԹ ինժեներական և ռոբոտաշինության լաբորատորիան է, իսկ մյուս երկուսը վերանորոգվել և կահավորվել են «Երիտասարդության զբաղվածության» ծրագրի կողմից՝ ՌԴ ֆինանսավորմամբ (2023թ.): Համակարգչային լսարաններում առկա են 38 համակարգիչ, 2 շարժական պրոյեկտոր, 2 նոութբուք, որոնք տեխնիկական տեսանկյունից ամբողջությամբ համապատասխանում են ժամանակակից պահանջներին:

Քոլեջում գործում են 8 լաբորատորիաներ՝ նախատեսված հետևյալ կրթական ծրագրերի համար. «Եռակցման աշխատանքների տեխնոլոգիա», «Խոհարարական գործ», «Վարսավիրական գործ», «Ոսկերչություն», «Կարի արտադրության տեխնոլոգիա», «Յուղի, պանրի և կաթի արտադրության տեխնոլոգիա», «Գյուղացիական (ֆերմերային) տնտեսության կազմակերպում», ինչպես նաև բժշկական մասնագիտությունների («Դեղագործություն» և «Քույրական գործ»), կենսաբանության և քիմիայի համար նախատեսված լաբորատորիաներ: 2024 թվականին կենսաբանության և քիմիայի լաբորատորիան վերազինվել է նյութերով, մուլյաժներով, փորձանոթներով և այլ անհրաժեշտ պարագաներով:

Վերջին տարիներին քոլեջը համալրվել է նոր գույքով և տեխնիկայով. մասնավորապես, եռակցման աշխատանքների լաբորատորիան 2024 թվականին վերանորոգվել է Միավորված ազգերի կազմակերպության զարգացման ծրագրի (ՄԱԶԾ) «Երիտասարդության զբաղվածության» ծրագրի միջոցով, համալրվել երկու տեսակի

եռակցման ապարատներով, անկյունային հղկող մեքենայով, մամլակներով, անվտանգության պարագաներով: 2025 թվականին «SKY» ակումբի նախաձեռնությամբ կարի լաբորատորիայի համար ձեռք են բերվել կարի մեքենա, օվերլոկ, արտադրական սեղան, կտորներ և այլ պարագաներ՝ ընդհանուր 9 կարի մեքենա: Սակայն հարկ է նշել, որ «Յուղի, պանրի և կաթի արտադրության տեխնոլոգիա» կրթական ծրագրի համար նախատեսված լաբորատորիան դեռևս չի համալրվել անհրաժեշտ ռեսուրսներով, ինչի արդյունքում գործնական դասերի որոշ մասը անցկացվում է գործատուի մոտ: Քոլեջում առկա չէ ֆիզիկայի լաբորատորիա, ինչի հետևանքով ֆիզիկայի դասերն անցկացվում են տեսական ձևաչափով:

Քոլեջը չունի ճաշարան և մարզադահլիճ, սակայն բարեկարգել է բակը և ստեղծել ժամանակավոր սպորտային հրապարակ, ինչպես նաև անհրաժեշտության դեպքում օգտագործում է հարակից հիմնական դպրոցի մարզադահլիճը: Փորձագիտական այցից պարզ դարձավ, որ նախատեսվում է համապատասխան տարածքի հատկացում մարզադահլիճի կառուցման համար:

Գործնական, տեսական և պրակտիկ պարապմունքների իրականացման համար քոլեջը պարբերաբար օգտվում է ոլորտային գործատու կազմակերպությունների ռեսուրսներից: Մասնավորապես, «Դեղագործություն» և «Քույրական գործ» մասնագիտությունների կրթական ծրագրերի շրջանակում քոլեջը համագործակցում է «Վարդենիս ԲԿ», «Վարդենիսի կայազորային հոսպիտալ» և «Վարդենիսի շուրջօրյա մասնագիտացված խնամքի կենտրոն» կազմակերպությունների հետ, ապահովելով ուսանողների մասնագիտական փորձառությունը գործատուի աշխատանքային միջավայրում:

Քոլեջի գրադարանում առկա է շուրջ 3470 միավոր գրականություն, այդ թվում՝ 2530 միավոր գեղարվեստական, 347 միավոր ռուսերեն, 180 միավոր անգլերեն, 413 միավոր մասնագիտական և մեթոդական գրականություն, ինչպես նաև 97 թվայնացված գիրք: Փորձագիտական այցի ընթացքում արձանագրվել է, որ քոլեջում ուսանողների նախաձեռնությամբ, հետազոտական աշխատանքի շրջանակում, ստեղծվել է էլեկտրոնային գրադարան: Այն հնարավորություն է տալիս օգտվել մասնագիտական գրականությունից, աուդիո գրքերից, ինչպես նաև տեղեկանալ գրքերի առկայությանը՝ ըստ ցանկի: Էլեկտրոնային գրադարանը ամբողջապես նախատեսվում է գործարկել 2025–2026 ուսումնական տարում:

Փորձագիտական այցից և ռեսուրսների դիտարկումից պարզ դարձավ նաև, որ քոլեջն իրականացրել է լսարանային ֆոնդի վերանորոգումներ, որոշ բարելավումներ: Քոլեջի միջոցներով և «SKY NET» ակումբի ծրագրի շրջանակներում 2025 թվականին վերանորոգվել է 2 լսարան, վերազինվել է ժամանակակից ինտերակտիվ ռեսուրսներով՝ գույք, տեխնիկա և այլ ուսումնաօժանդակ ռեսուրսներ: Լսարաններից մեկը գործում է որպես ինտերակտիվ Smart լսարան, որը հագեցած է սմարթ գրատախտակով և պրոյեկտորով: 2024 թվականին ՄԱՋԾ «Երիտասարդության զբաղվածություն» ծրագրի շրջանակներում վերանորոգվել և կահավորվել է Քոլեջի նիստերի դահլիճը:

2023 թվականի սեպտեմբերին քոլեջը ունեցել է ֆինանսական խնդիրներ, ներառյալ կուտակված պարտավորություններ և չվճարված աշխատավարձեր: 2024 թվականին լիազոր մարմնի կողմից տրամադրվել է լրացուցիչ ֆինանսավորում պարտավորությունների մի մասը մարելու նպատակով, իսկ մնացած՝ պետբյուջեի պարտքը վճարվել է քոլեջի սեփական միջոցներից: 2024 թվականի ավարտին քոլեջը այլևս ֆինանսական պարտավորություններ չի ունեցել: 2024 թվականի օգոստոսին ներդրվել է «Ֆինանսական ռեսուրսների տնօրինման և բաշխման» քաղաքականություն և

ընթացակարգ, որոնք սահմանում են ֆինանսների կառավարման արդյունավետ համակարգի կառուցումը՝ ուղղված ռազմավարական նպատակների իրականացմանը:

2025 թվականի ֆինանսատնտեսական գործունեության նախահաշվի համաձայն՝ ծախսերի 63,10%-ը բաժին է ընկնում աշխատավարձի ֆոնդին, 26,42 %-ը՝ ուսանողների կրթաթոշակներին, 1,01%-ը՝ գրասենյակային, լաբորատոր և այլ նյութերի ձեռքբերմանը, 0,18%-ը՝ աշխատակազմի մասնագիտական զարգացման ծառայություններին, 0,43%-ը՝ շենքերի և կառույցների ընթացիկ վերանորոգմանը, 1,23%-ը՝ վարչական սարքավորումներին, 0,12%-ը՝ նախազգաստեղծական ծախսերին և այլն: Քոլեջի բյուջեի եկամուտների 95,12%-ը կազմում են պետական ֆինանսավորման մուտքերը, 2,65%-ը՝ ուսանողների վարձավճարներից մուտքերը, իսկ 2,23%-ը՝ տարեսկզբի մնացորդը: Վերջին տարիներին ուսման վարձի փոփոխություն չի արձանագրվել:

Քոլեջը չի իրականացրել կրթական ծրագրերի համար պահանջվող նվազագույն ռեսուրսների հաշվարկ:

Դրամաշնորհային ծրագրերի մասնակցության և այլ ֆինանսավորման մոդելների կիրառման դեպքեր քոլեջում առկա չեն, բացառությամբ մեկանգամյա կարճաժամկետ դասընթացի («Խոհարարական գործ»), որի շրջանակում խոհարարական լաբորատորիան վերազինվել է նոր սարքավորումներով:

Քոլեջում փաստաթղթաշրջանառության գործընթացների կազմակերպման նպատակով ներդրվել է Microsoft Access ծրագիրը, որը հնարավորություն է տալիս կառավարել փաստաթղթեր և իրականացնել տվյալների հավաքագրում և պահպանություն միավորված տվյալների բազայի միջոցով:

Քոլեջն ունի կենտրոնական ջեռուցման համակարգ, պահակակետ, տեղադրված են 5 տեսանկարահանող սարքավորումներ, հակահրդեհային համակարգ, տարհանման պլաններ բոլոր հարկերում: Սակայն կրակմարիչներ առկա են ոչ բոլոր հարկերում: Քոլեջն ունի բուժկետ, որի ծառայություններից օգտվողների 82%-ը գոհ է:

Քոլեջում ներկայումս չկան հենաշարժողական խնդիրներ և առանձնահատուկ կարիք ունեցող ուսանողներ, բացակայում են թեքահարթակները:

2024-2025 թթ. Քոլեջն իրականացրել է առկա ռեսուրսներից բավարարվածության հարցումներ վարչական, ուսումնաօժանդակ կազմի, ինչպես նաև դասախոսների և ուսանողների շրջանում, որոնց արդյունքների համաձայն ներքին շահակիցները ընդհանուր առմամբ գոհ են շենքային պայմաններից, համակարգիչների քանակից, լսարանների հագեցվածությունից և գրադարանից: «Ուսանողների կողմից քոլեջի ռեսուրսներից բավարարվածության» հարցման տվյալներով՝ ուսանողների 88%-ը բավարարված են առկա ռեսուրսներով:

Դատողություններ: Փորձագիտական խումբը կարևորում է, որ Վարդենիսի «Բադեյան» պետական քոլեջն ընդհանուր առմամբ ապահովված է ժամանակակից նյութատեխնիկական բազայով, որը բավարար հիմք է կրթական ծրագրերի արդյունավետ իրականացման և սահմանված վերջնարդյունքների ձեռքբերման համար: Դրական է, որ վերջին տարիներին ձեռնարկվել են զգալի քայլեր լաբորատորիաների, լսարանների և համակարգչային տեխնիկայի արդիականացման և վերազինման ուղղությամբ: Խումբը կարևորում է նաև ուսանողական նախաձեռնությամբ ստեղծված էլեկտրոնային գրադարանը, որը դիտարկվում է որպես ժամանակակից ուսումնական միջավայրի զարգացման կարևոր բաղադրիչ:

Գնահատելի է, որ քոլեջը համագործակցում է ոլորտային գործատու կազմակերպությունների հետ, որոնց ռեսուրսները ներգրավվում են կրթական գործընթացում: Այս համագործակցությունը հնարավորություն է տալիս ուսանողներին

գործնական հմտությունների ձևավորման, մասնագիտական փորձի ձեռքբերման և աշխատաշուկայի պահանջներին համապատասխան կրթություն ստանալու համար:

Դրական է, որ քոլեջում պարբերաբար իրականացվում են լսարանային և լաբորատոր բազայի վերանորոգման ու համալրման աշխատանքներ: Այնուամենայնիվ, ընդգծվում է, որ «Յուղի, պանրի և կաթի արտադրության տեխնոլոգիա» մասնագիտության լաբորատորիան դեռևս լիարժեք չի հագեցած անհրաժեշտ սարքավորումներով, իսկ ֆիզիկայի լաբորատորիան ընդհանրապես բացակայում է, ինչը որոշակիորեն սահմանափակում է տվյալ կրթական ուղղությունների լիարժեք իրականացումը: Բացի այդ, առկա չէ մշտական ճաշարան և մարզադահլիճ, ինչը կարող է ազդեցություն ունենալ ուսանողների առօրյա կյանքի և առողջ ապրելակերպի ապահովման վրա: Փորձագիտական խումբը դրական քայլեր է դիտարկում քոլեջի կողմից իրականացված բակի բարեկարգումն ու սպորտային հրապարակի ստեղծումը, ինչպես նաև կից դպրոցի մարզադահլիճի ժամանակավոր օգտագործման հնարավորությունը, որոնք նպաստել են ուսումնական միջավայրի բարելավմանը և ուսանողների ֆիզիկական ակտիվության խթանմանը:

Փորձագիտական խումբը դրական է գնահատում, որ քոլեջը կարողացել է արդյունավետ կառավարել և մարել նախորդ տարիների ֆինանսական պարտավորությունները՝ ապահովելով ֆինանսական կայունություն: Խումբը գնահատում է ֆինանսական ռեսուրսների բաշխման համար նոր քաղաքականությունների ու ընթացակարգերի ներդրումը, սակայն արձանագրում է, որ ֆինանսական համակարգը մեծապես կախված է պետական ֆինանսավորումից, իսկ այլ ֆինանսավորման աղբյուրների բացակայությունը սահմանափակում է եկամուտների բազմազանությունն ու կայունությունը: Խումբը կարևորում է կարճաժամկետ մասնագիտական ծրագրերի հնարավոր ընդլայնումը՝ որպես լրացուցիչ ֆինանսական միջոցների ներգրավման գործիք: Նման ծրագրերը կարող են ոչ միայն նպաստել ֆինանսական հոսքերի դիվերսիֆիկացիային, այլև ընդլայնել կրթական ծառայությունների շրջանակը՝ բավարարելով աշխատաշուկայի փոփոխվող պահանջները:

Փորձագիտական խումբը գտնում է, որ կրթական ծրագրերի ինքնաճախսածածկման մակարդակի հստակ գնահատման բացակայությունը խոչընդոտում է ֆինանսների արդյունավետ պլանավորմանը, քանի որ այն սահմանափակում է ռեսուրսների բաշխման հիմնավորված որոշումների կայացման հնարավորությունը:

Խումբը գտնում է, որ թեև քոլեջում դեռևս չկան հենաշարժողական խնդիրներ ունեցող կամ առանձնահատուկ կարիքներով ուսանողներ, սակայն թեքահարթակների և ներառականության համար անհրաժեշտ պայմանների բացակայությունը կարող է սահմանափակել կրթության մատչելիությունը ապագայում: Ներառական կրթության ապահովմանն ուղղված քայլերը կարևոր են բոլոր ուսանողների լիարժեք մասնակցությունն ապահովելու համար:

Փորձագիտական խումբը դրական է գնահատում քոլեջում փաստաթղթաշրջանառության թվայնացման ուղղությամբ իրականացված առաջին քայլերը: Microsoft Access ծրագրի միջոցով իրականացվող գործընթացները հնարավորություն են տալիս կազմակերպել տվյալների որոշակի տեսակների կառավարում, պահպանություն և որոնում: Միևնույն ժամանակ, փորձագիտական խումբը գտնում է, որ անհրաժեշտ է ներքին փաստաթղթաշրջանառության ամբողջական և միասնական համակարգի ներդրում՝ գործընթացների առավել համակարգային կազմակերպումն ապահովելու նպատակով:

Եզրահանգում: Հաշվի առնելով Քոլեջում առկա նյութատեխնիկական բազայի համապատասխանությունը կրթական ծրագրերի արդյունավետ իրականացման պահանջներին, ուսանողներին գործնական հմտություններ փոխանցելու ուղղությամբ

գործատուների մասնագիտական և նյութատեխնիկական ռեսուրսների ներգրավումը, վերջին տարիներին իրականացված վերազինման և բարելավման աշխատանքները, որոնք ունեն շարունակական բարելավման և արդիականացման միտում, ինչպես նաև ֆինանսական գործընթացների նկատմամբ հետևողական և նպատակային մոտեցումը փորձագիտական խումբը գտնում է, որ քոլեջը համապատասխանում է չափանիշ 7-ի պահանջները:

Եզրակացություն: Փորձագիտական խումբը ՎԲՊՔ-ի ինստիտուցիոնալ կարողությունների համապատասխանությունը չափանիշ 7-ի պահանջներին գնահատում է **բավարար:**

VIII. ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

ՉԱՓԱՆԻՇ: ՄՈՒՀ-ն իր տրամադրած կրթության, իրականացրած հետազոտության և օգտագործած ռեսուրսների համար հաշվետու է պետությանը և հասարակությանը:

Փաստեր

Հասարակական պատասխանատվության գործընթացները ամրագրված են 2025-2030 թթ ՌԾ-ի նպատակում՝ «Քոլեջի կողմից տրամադրած կրթության, իրականացրած հետազոտությունների և օգտագործած ռեսուրսների համար պետության և հասարակության առջև հաշվետվողականության ապահովում»:

Փորձագիտական ուսումնասիրությունները ցույց տվեցին, որ ՄՈՒՀ-ում ընդհանուր առմամբ գործում է ներքևից վերև հաշվետվողականության մեխանիզմը: Այնուամենայնիվ, փորձագիտական այցից պարզ դարձավ, որ այդ մեխանիզմի կիրառումը երբեմն լիարժեք չի գործում, մասնավորապես պաշտոնների անձնագրերում հիմնականում նշված չէ, թե ում է հաշվետու տվյալ աշխատակիցը կամ ստորաբաժանումը: Թեև ստորաբաժանումները ներկայացնում են կիսամյակային և տարեկան հաշվետվություններ, սակայն դրանց ներկայացման գործընթացի համար հստակ ձևաչափ, բովանդակային պահանջներ և ժամկետներ սահմանված չեն: Հաշվետվողականության ընդհանուր կառուցվածքային սխեման նույնպես բացակայում է:

Տարբեր ստորաբաժանումների տարեկան հաշվետվությունները հիմնականում ունեն նկարագրական բնույթ: Դրանց մեջ ներկայացվում են իրականացված գործողությունները՝ առանց արդյունավետության վերլուծության կամ առկա խնդիրների հստակ արձանագրման: Օրինակ՝ SS ամբիոնի հաշվետվությունում ներառված են ամբիոնի նիստերի որոշումները, դասախոսների կողմից իրականացված աշխատանքները, վերապատրաստումները և կատարված հետազոտական աշխատանքների թվաքանակը, մինչդեռ ուսումնամեթոդական աշխատանքների գծով տնօրենի տեղակալի հաշվետվությունում գործողությունները ներկայացված են պարզապես թվարկմամբ՝ օրինակ՝ «կազմել եմ պրակտիկաների ժամանակացույցը», «վերահսկել եմ ուսանողների և դասախոսների հաճախումները», կամ ներկայացված են ուսանողների առաջադիմության տվյալները՝ ըստ կուրսերի:

Բոլոր ստորաբաժանումների կատարած աշխատանքների վերաբերյալ կուտակված տեղեկատվության և մասնակի վերլուծության հիման վրա տնօրենի կողմից կազմվել է 2024 թվականի գործունեության ներքին գնահատման հաշվետվություն, որտեղ ներկայացված են հավատարմագրման 10 չափանիշներին համապատասխան ձեռքբերումները: Սակայն փաստաթղթերի ուսումնասիրությունը վկայում է, որ այդ հաշվետվություններում

բացակայում են խնդիրների վերհանմանը և դրանց հիման վրա բարելավման գործողությունների մշակմանը վերաբերող վերլուծություններ։

Քոլեջում ներդրվել է ինքնավերլուծության մեխանիզմ, որի շրջանակում ստորաբաժանումները ուսումնական տարվա ավարտին ներկայացնում են հիմնականում SWOT վերլուծության ձևաչափով կառուցված հաշվետվություններ, որոնք ամփոփվում են եզրակացություններով և առաջարկություններով։

Հարկ է նշել, որ կարիերայի ուղղորդման պատասխանատուն եռամսյա հաշվետվություններ է ներկայացնում նաև ՀՀ ԿԳՄՍ նախարարությանը, որտեղ ներկայացվում են տվյալներ շրջանավարտների զբաղվածության, ինչպես նաև կարիերային նպաստող միջոցառումների անցկացման վերաբերյալ։

2024 թվականին քոլեջը ներդրել է «Հրապարակային տեղեկատվության տարածման քաղաքականություն և ընթացակարգեր» փաստաթուղթը, որի նպատակն է ապահովել քոլեջի գործունեության թափանցիկությունն ու հաշվետվողականությունը՝ հանրությանը և շահակիցներին։ Քոլեջն ապահովում է գործընթացների թափանցիկությունը և հասանելիությունը հասարակությանը՝ որպես տեղեկատվական հարթակ օգտագործելով Ֆեյսբուք սոցիալական ցանցը, որտեղ պարբերաբար ներկայացվում են ընդունելության, միջոցառումների, արտալսարանային դասերի, սեմինարների մասին տեղեկություններ։ Քոլեջը մշակել է նաև բուկլետներ և ուսանողի ուղեցույց՝ ուսանողների և հանրության իրազեկվածությունը բարձրացնելու նպատակով։ Քոլեջը դեռևս չունի պաշտոնական կայքէջ, սակայն փորձագիտական այցից պարզ դարձավ, որ կայքէջը պատրաստվել է քոլեջի դասախոսի կողմից և նախատեսվում է ապագայում գործարկել այն։ Քոլեջի փաստաթղթային բազան դեռևս բաց հասանելի չէ հանրությանը։

Հետադարձ կապի համար քոլեջը կիրառում է Ֆեյսբուքյան էջի հաղորդագրությունների համակարգն ու էլեկտրոնային փոստի հասցեն, սակայն փորձագիտական ուսումնասիրությունները ցույց տվեցին, որ ստացված հաղորդագրություններին արձագանքելու և արդյունավետ երկխոսության կազմակերպման գործընթացը բավարար հետևողականությամբ չի իրականացվում։

Փորձագիտական այցի ընթացքում պարզ դարձավ, որ քոլեջը ձեռնարկում է որոշակի քայլեր հասարակությանը գիտելիքների և արժեքների փոխանցման ուղղությամբ։ Մասնավորապես, 2025 թվականին «SKY» ակումբի նախաձեռնությամբ «Կարի արտադրության տեխնոլոգիա» կրթական ծրագրի լաբորատորիան համալրվել է նոր նյութատեխնիկական ռեսուրսներով՝ կարի մեքենա, օվերլոկ, կտորներ և գործվածքներ, որոնց օգտագործմամբ ուսանողները պատրաստել են էկոպայուսակներ համայնքի բնակիչների համար, ինչպես նաև՝ զինվորների համար զրահաբաճկոններ և քնապարկեր։

«Սուրբ Զատկի» տոնի առթիվ քոլեջի ուսանողներն իրականացրել են համայնքին ուղղված նախաձեռնություն՝ ներկայացնելով ազգային խոհանոցի ավանդական ուտեստներ՝ որպես մշակութային արժեքների տարածման և համայնքի հետ կապի ձևավորման ձևաչափ։

Փորձագիտական այցից պարզ դարձավ, որ նախկինում քոլեջում իրականացվել է կարճաժամկետ դասընթաց «Խոհարարական գործ» մասնագիտությամբ, սակայն ներկայումս նմանատիպ դասընթացներ չեն իրականացվում։ Միևնույն ժամանակ, իրականացվող միջոցառումները, ըստ փորձագիտական ուսումնասիրությունների, չունեն հստակ պլանավորվածություն, և դրանց արդյունավետությունը դեռևս չի գնահատվում քոլեջի կողմից։

Դատողություններ: Փորձագիտական խումբը գտնում է, որ թեև քոլեջի ռազմավարական ծրագրերում հստակ արձանագրված է հաշվետվողականության ապահովման նպատակն ինչպես պետության, այնպես էլ հասարակության առջև, գործող

մեխանիզմները դեռևս ամբողջությամբ չեն ապահովում այդ նպատակների համարժեք իրագործումը: Փորձագիտական խումբը գտնում է, որ հաշվետվողականության համակարգի ամբողջական և կառուցվածքային ձևավորված չլինելը հանգեցնում է նրան, որ առկա մեխանիզմները չեն ապահովում հաշվետվողականության գործընթացի նպատակային, թափանցիկ և արդյունավետ իրականացումը: Այս իրադրությունը կարող է պայմանավորել որոշումների կայացման և վերահսկողության թուլացումը:

Չնայած այն հանգամանքին, որ քոլեջում արդեն ներդրվել են ինքնավերլուծության և հաշվետվությունների ներկայացման որոշակի մեխանիզմներ, փորձագիտական խումբը արձանագրում է, որ հաշվետվություններն այժմ հիմնականում կրում են նկարագրական բնույթ՝ սահմանափակվելով միայն իրականացված գործողությունների թվարկմամբ: Այս փաստը հանգեցնում է նրան, որ հաշվետվություններում բացակայում է իրականացված գործունեության արդյունավետության գնահատումը և խնդիրների համակողմանի վերլուծությունը: Նման մոտեցումը, իր հերթին, կարող է խոչընդոտել տվյալահեն և հիմնավորված որոշումների կայացմանը, պլանավորման արդիականացմանը:

Փորձագիտական խումբը դրական է գնահատում այն հանգամանքը, որ քոլեջն ունի ֆեյսբուքյան ակտիվ էջ, որն ապահովում է հանրության շարունակական իրազեկումը ընդունելության, տարբեր միջոցառումների և ուսումնական գործընթացի որոշ քայլերի մասին՝ նպաստելով որոշակի թափանցիկություն: Այնուամենայնիվ, պաշտոնական կայքէջի բացակայությունն ու միայն սոցիալական հարթակում տեղեկատվության հրապարակումը չեն ապահովում տեղեկատվության ամբողջականությունն ու համակարգված մատչելիությունը: Փորձագիտական խումբը կարևորում է այն, որ քոլեջը գնահատել է պաշտոնական կայքէջի անհրաժեշտությունը և արդեն իսկ քոլեջի ներքին ռեսուրսների ներուժով մշակել է համապատասխան կայքը: Կայքէջի գործարկումը և իրավական փաստաթղթերի թափանցիկ ներկայացումը կապահովեն հանրության համար լիարժեք ու համակարգված տեղեկատվության մատչելիություն՝ նպաստելով թե՛ քոլեջի գործունեության թափանցիկության բարձրացմանը, թե՛ հանրային վստահության ձևավորմանը:

Փորձագիտական խումբը կարևորում է, որ, չնայած քոլեջում առկա են հասարակության հետ հետադարձ կապի որոշ միջոցներ, այդուհանդերձ արձագանքման գործընթացում հետևողականության պակասը սահմանափակում է շահակիցների հետ արդյունավետ երկխոսությանը:

Միևնույն ժամանակ, փորձագիտական խումբը կարևորում է, որ համայնքի հետ համագործակցության և մշակութային արժեքների տարածման առանձին նախաձեռնություններն, իրենց հերթին, կարող են էական ազդեցություն ունենալ թե՛ ուսումնական հաստատության ճանաչելիության, թե՛ համայնքային զարգացման վրա: Այդուհանդերձ, իրականացվող միջոցառումների պլանավորվածության և արդյունավետության գնահատման բացակայությունը էապես սահմանափակում է դրանց ազդեցությունն ու զարգացման ներուժը: Այս համատեքստում կարևոր է նաև, որ քոլեջը գնահատի տարածաշրջանի կարիքները և, ելնելով այդ գնահատումից, պլանավորի և ակտիվացնի համայնքային ու մշակութային միջոցառումները՝ ապահովելով դրանց նպատակային և շարունակական իրականացումը:

Եզրահանգում: Հաշվի առնելով, որ քոլեջում հաշվետվողականության համակարգը չունի ամբողջական և կառուցվածքային ձևավորում, հաշվետվությունները հիմնականում նկարագրական են և չեն ներառում արդյունավետության վերլուծություն, տեղեկատվության հրապարակման և թափանցիկության մակարդակը սահմանափակ է, հետադարձ կապը շահակիցների հետ բավարար կազմակերպված չէ, համայնքային նախաձեռնությունների

պլանավորումն ու գնահատումը բացակայում են՝ փորձագիտական խումբը գտնում է, որ քոլեջը չի համապատասխանում չափանիշ 8-ի պահանջները։

Եզրակացություն: Փորձագիտական խումբը ՎԲՊՔ-ի ինստիտուցիոնալ կարողությունների համապատասխանությունը չափանիշ 8-ի պահանջներին գնահատում է **անբավարար:**

IX. ԱՐՏԱՔԻՆ ԿԱՊԵՐԸ ԵՎ ՄԻՋԱԶԳԱՅՆԱՑՈՒՄԸ

ՉԱՓԱՆԻՇ: Արտաքին կապերի միջոցով ՄՈՒՀ-ը խրախուսում է փորձի փոխանակումը և զարգացումը՝ նպաստելով հաստատության միջազգայնացմանը:

Փաստեր

ՎԲՊՔ-ի արտաքին կապերը և միջազգայնացումը կազմում են 2025–2030 թվականների երկարաժամկետ ռազմավարական ծրագրի նպատակներից մեկն է՝ «Տեղական և միջազգային այլ հաստատությունների հետ արտաքին կապերի համակողմանի զարգացման և ՎԲՊՔ-ի միջազգայնացման գործունեության ապահովումը»։

2024 թվականին հաստատությունում ընդունվել է «Արտաքին կապերի և միջազգայնացման քաղաքականությունը, ընթացակարգերը և մեխանիզմները» փաստաթուղթը, որը միտված է քոլեջի արտաքին կապերի ամրապնդմանն ու միջազգայնացման ռազմավարական ուղղությունների իրագործմանը։ Այս գործունեությունը համակարգում է միջազգային ծրագրերի բաժինը, որի գործառույթներն իրականացնում է օտար լեզուների ամբիոնի վարիչը՝ հասարակական հիմունքներով։

Հաստատությունը տարբեր կրթական ծրագրերի շրջանակներում համագործակցում է շուրջ 40 տեղական գործընկերների հետ։ ՄՈՒՀ-ն ունի գործատու գործընկերներ բոլոր կրթական ծրագրերի շրջանակներում, որոնց հետ համագործակցության շրջանակներում հատատությունը կազմակերպում է ուսանողների պրակտիկաները։ ՄՈւՀ-ի խոշոր գործատու-գործընկերներից են «ՎՏԲ-Հայաստան Բանկ»-ը, «Վարդան Երանոսյան» ՍՊԸ-ն, «World Vision»-ը, «Վարդենիսի շուրջօրյա մասնագիտացված խնամքի կենտրոն»-ը և այլ կազմակերպություններ։ Փորձագիտական այցի ընթացքում արձանագրվել է, որ քոլեջում պարբերաբար կազմակերպվում են հանդիպում-քննարկումներ տեղական կազմակերպությունների հետ՝ կրթական ծրագրերի արդիականացման, գործատու-կրթություն կապի ամրապնդման և աշխատաշուկայի պահանջներին հետևելու նպատակով։

Բացի այդ, քոլեջը համագործակցում է մի շարք այլ ուսումնական հաստատությունների հետ՝ այդ թվում Երևանի ինֆորմատիկայի պետական քոլեջի, Ստեփանավանի գյուղատնտեսական քոլեջի, Սևանի բազմագործառույթային պետական քոլեջի, Երևանի թիվ 1 արհեստագործական ուսումնարանի, Մեհրաբյանի անվան բժշկական քոլեջի և Վարդենիսի բժշկա-հումանիտար քոլեջի հետ։ Համագործակցությունը հիմնականում իրականացվում է ոչ ֆորմալ ձևաչափով և ուղղված է մասնագիտական կրթական ծրագրերի (ՄԿԾ) բենչմարքինգին՝ լավագույն փորձի փոխանակման նպատակով։

2024–2025 ուսումնական տարվա ընթացքում քոլեջը հրավիրել է մի շարք մասնագետների, այդ թվում՝ «ՎՏԲ-Հայաստան Բանկ» ՓԲԸ Մարտունու մասնաճյուղի և «ԱԿԲԱ ԲԱՆԿ» ԲԲԸ-ի Վարդենիսի մասնաճյուղի կառավարիչներին, Մարտունու ITArm Academy ծրագրավորման կենտրոնի հիմնադիր-տնօրենին, ինչպես նաև ՀՀ էկոնոմիկայի

նախարարության Գյուղատնտեսական խորհրդատվության և նորարարությունների վարչության պետին:

Վերջին տարիներին քոլեջը համալրվել է նոր գույքով և տեխնիկայով. մասնավորապես, եռակցման աշխատանքների լաբորատորիան 2024 թվականին վերանորոգվել է Միավորված ազգերի կազմակերպության զարգացման ծրագրի (ՄԱԶԾ) «Երիտասարդության զբաղվածության» ծրագրի միջոցով: 2025 թվականին «SKY» ակումբի նախաձեռնությամբ կարի լաբորատորիայի համար ձեռք են բերվել կարի մեքենա և այլ սարքավորումներ: Քոլեջում առկա երկու համակարգչային լսարանները վերանորոգվել և կահավորվել են «Երիտասարդության զբաղվածության» ծրագրի կողմից՝ ՌԴ ֆինանսավորմամբ (2023թ.):

Միջազգային կապերի զարգացման ուղղությամբ Վարդենիսի «Բաղեյան» պետական քոլեջը 2024 թվականից քայլեր է ձեռնարկում ակտիվացնելու իր մասնակցությունն «Էրազմուս+» ծրագրի շրջանակում: 2025 թվականի փետրվարին քոլեջը ՀՀ ԿԳՄՍ նախարարության և «Կրթության քաղաքականության և կառավարման հայկական կենտրոն»-ի հետ համագործակցությամբ ներկայացրել է նոր ծրագրային հայտ «Էրազմուս+» ծրագրի շրջանակում:

Քոլեջը մասնակցել է նաև Եվրոպական ուսուցման հիմնադրամի (ETF) կողմից կազմակերպված «Նայելով դեպի կանաչ ու թվային ապագա» և «Նախագծի մշակում» թեմաներով վեբինարներին, որոնցում ներգրավված են եղել ՄԿՈՒ համակարգի ներկայացուցիչներ:

2023 թվականին քոլեջի տնօրենի նախաձեռնությամբ ձեռք է բերվել համագործակցության պայմանավորվածություն Էստոնիայի Վալգա քաղաքի «Վալգամա» քոլեջի հետ, որը վերաբերում է «Սոցիալական աշխատանք», «Խոհարարական գործ» և «Եռակցման աշխատանքների տեխնոլոգիա» մասնագիտությունների գծով մասնագիտական կրթական ծրագրերի բենչմարքինգի իրականացմանը: Բացի այդ, Ռիգայի «State Ltd. Riga Technical School of Tourism and Creative Industry»-ի հետ քննարկվել են փորձի փոխանակման ծրագրեր՝ մի շարք մասնագիտությունների գծով: Նշված նախաձեռնությունները դեռ գտնվում են պլանավորման փուլում, և դրանց շրջանակում դեռևս հստակ արդյունքներ չեն արձանագրվել:

2024 թվականին Շվեդիայի պատվիրակության կողմից ՀՀ-ում գործակցող վեց քոլեջների թվում ընտրվել է նաև Վարդենիսի «Բաղեյան» պետական քոլեջը: Համագործակցության արդյունքում մշակվել է միասնական ծրագրային հայտ, որը 2024 թվականի փետրվարին ներկայացվել է EUROVETA-ին: ՎԲՊՔ-ն ներգրավված է «Skills and Experience for Prosperity» (SEP) ծրագրում՝ իրականացվող Erasmus+ KA2 համագործակցային գործընկերության շրջանակում: Ծրագրի նպատակն է՝ աջակցել մասնագիտական կրթության և ուսուցման համակարգի բարելավմանը՝ հատկապես գյուղական համայնքներում երիտասարդների հմտությունների և գործնական փորձի զարգացման միջոցով: Ծրագիրը գտնվում է հաստատման գործընթացում և ներկայումս իրականացվում են նախապատրաստական աշխատանքներ՝ գործընկեր կազմակերպությունների միջև համագործակցության և ծրագրի բաղադրիչների հստակեցման ուղղությամբ:

Փաստաթղթային ուսումնասիրությունները վկայում են, որ քոլեջում ուսանողների անգլերենի տիրապետման մակարդակը 48,57% է, իսկ դասավանդողների և վարչական աշխատողների մոտ՝ 48,85%: Փորձագիտական այցի ընթացքում պարզ դարձավ, որ օտար լեզվի իմացության մակարդակի գնահատումն իրականացվել է դասախոսների և ուսանողների շրջանում իրականացված հարցման միջոցով, որի ընթացքում նրանք ինքնուրույն նշել են օտար լեզվի տիրապետման իրենց մակարդակը: Այնուամենայնիվ,

չնայած ՄՈՒՀ-ի արտաքին կապերի ընդլայնման միտումներին, գործնականում օտար լեզուների իմացության բարձրացման ուղղությամբ լրացուցիչ քայլեր առկա չեն։

Դատողություններ: Փորձագիտական խումբը կարևորում է, որ Վարդենիսի Բաղեյան պետական քոլեջը միջազգայնացման ու արտաքին կապերի զարգացմանն ուղղված ռազմավարական նպատակները հստակ ամրագրել է իր երկարաժամկետ ծրագրային փաստաթղթերում։ Այս հանգամանքը փաստում է, որ քոլեջը գիտակցում է միջոլորտային համագործակցության և միջազգային գործընկերության կարևորությունը՝ հաստատության զարգացման ու արդիականացման տեսանկյունից։

Դրական է գնահատվում, որ քոլեջում ձևավորվել է արտաքին կապերի և միջազգայնացման քաղաքականություն, սահմանվել են համապատասխան ընթացակարգեր և մեխանիզմներ։ Սա հնարավորություն է տալիս նպատակային և համակարգված ձևով մոտենալ գործընկերային կապերի ընդլայնման գործընթացին՝ և՛ տեղական, և՛ միջազգային հարթակներում։

Խումբը նաև ընդգծում է, որ քոլեջը հաստատուն կապեր է հաստատել ոչ միայն տեղական գործատուների և կազմակերպությունների, այլև մի շարք ուսումնական հաստատությունների հետ։ Միջազգային համագործակցության ուղղությամբ ևս նկատվում են ակտիվացման միտումներ։ Չնայած այն հանգամանքին, որ միջազգային համագործակցության որոշ նախաձեռնություններ դեռևս պլանավորման փուլում են և հստակ արդյունքներ չեն արձանագրվել, փորձագիտական խումբը արձանագրում է, որ ստեղծված հիմքը կարող է խթանել միջազգայնացման գործընթացի զարգացումը։

Դրական քայլ է, որ քոլեջը փորձ է ձեռք բերել միջազգային ծրագրերին մասնակցության գործում, և որ ընթացքի մեջ են գործընկերային նոր ծրագրերի մշակման և ներկայացման գործընթացներ։ Մասնագիտական կրթության եվրոպական կառույցների, ինչպես նաև արտասահմանյան քոլեջների հետ նոր կապերի ստեղծումը հնարավորություն է տալիս միջազգայնացման տեսանկյունից նոր հարթակներում հանդես գալու տեսանկյունից։

Այնուամենայնիվ, փորձագիտական խումբը շեշտում է, որ, չնայած առկա արտաքին կապերի զարգացվածությանը, միջազգային համագործակցության արդյունքների գործնական արտահայտումը դեռևս տեսանելի չէ։ Առանձին նախաձեռնություններ դեռ գտնվում են պլանավորման փուլում և չունեն արդյունքներ։ Խումբը կարևորում է այդ նախաձեռնությունների շարունակական զարգացումը և ծրագրային փուլից գործնական իրագործման անցումը։

Փորձագիտական խումբը արձանագրում է, որ միջազգային ծրագրերին ու գործընկերությանը լիարժեք մասնակցության համար անհրաժեշտ է բարելավել թե՛ ուսանողների, թե՛ դասախոսական և վարչական կազմի օտար լեզուների իմացության մակարդակը։ Սա հատկապես կարևոր է՝ համաչափ ինտեգրվելու համար համաշխարհային կրթական միջավայրին, ինչպես նաև արտասահմանյան փորձի և նորարարական լուծումների առավելագույն ներգրավվածության ապահովման տեսանկյունից։

Եզրահանգում։ Հաշվի առնելով, որ ՎԲՊՔ-ն արտաքին կապերի և միջազգայնացման զարգացման ուղղությամբ ձևավորել է ռազմավարական մոտեցում, հաստատությունում մշակվել են արտաքին կապերի քաղաքականություն և ընթացակարգեր, ձևավորվել են գործընկերային հարաբերություններ թե՛ տեղական, թե՛ միջազգային մի շարք կառույցների ու կազմակերպությունների հետ, ինչպես նաև ձեռնարկվում են քայլեր միջազգային ծրագրերին մասնակցության համար՝ փորձագիտական խումբը գտնում է, որ հաստատությունը համապատասխանում է չափանիշ 9-ի հիմնական պահանջներին։

Եզրակացություն: Փորձագիտական խումբը ՎԲՊՔ-ի ինստիտուցիոնալ կարողությունների համապատասխանությունը չափանիշ 9-ի պահանջներին գնահատում է **բավարար**:

X. ՈՐԱԿԻ ՆԵՐՔԻՆ ԱՊԱՀՈՎՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԸ

ՉԱՓԱՆԻՇ: ՄՈՒՀ-ն ունի որակի ապահովման ներքին համակարգ, որը նպաստում է հաստատության բոլոր գործընթացների շարունակական բարելավմանը և որակի մշակույթի ձևավորմանը:

Փաստեր

Որակի ապահովման գործընթացները ամրագրված են Քոլեջի 2025-2030թթ ՌԾ-ի նպատակում՝ Քոլեջի բոլոր գործընթացների շարունակական բարելավմանն ու որակի մշակույթի ձևավորման ապահովում, որի համար սահմանվել են համապատասխան խնդիրներ:

Չնայած այն հանգամանքին, որ քոլեջում կրթության որակի պատասխանատուի հաստիքը ներդրվել է դեռևս 2015 թվականին, իրական գործընթացների և համակարգված մեխանիզմների ներդրումը տեղի է ունեցել միայն 2023 թվականից: Մասնավորապես, նույն թվականի սեպտեմբերին մշակվել է կրթության որակի պատասխանատուի պաշտոնի անձնագիրը, որն էլ դարձել է որակի ներքին ապահովման համակարգի ձևավորման առաջին կարևոր քայլը:

Այնուհետև, 2024թ-ին որակի ապահովման գործընթացների կանոնակարգման նպատակով ստեղծվել է Որակի ներքին ապահովման հանձնաժողով (ՈՆԱ հանձնաժողով)՝ ընդգրկելով թե՛ ներքին շահակիցներ՝ վարչական, ուսումնաօժանդակ, մանկավարժական անձնակազմ և ուսանողներ, և թե՛ արտաքին շահակիցներ՝ գործատուներ, ծնողներ, համայնքի կառույցների ներկայացուցիչներ (20 անդամ): Մշակվել է հանձնաժողովի աշխատակարգը, որում սահմանված են գնահատման ոլորտները՝ ՄԿԾ-եր, դասախոսներ և արտադրական ուսուցման վարպետներ և այլն, հանձնաժողովի գնահատման մեթոդները, սկզբունքները և գործառույթները: Այդուհանդերձ, հանձնաժողովի գործունեությունը ներկայումս լիարժեք համակարգված և կայուն բնույթ չունի: Փորձագիտական հանդիպումներից պարզ դարձավ, որ ՈՆԱ հանձնաժողովի գործունեության և նպատակների վերաբերյալ իրազեկվածությունը ներքին և արտաքին շահակիցների շրջանում դեռևս ամբողջական չէ:

Քոլեջում որակի ներքին ապահովման մշակույթն ամրապնդելու նպատակով 2024 թվականին մշակվել ու ներդրվել են հիմնարար փաստաթղթեր՝ «Կրթության որակի ապահովման քաղաքականություն», «ՈՆԱ հանձնաժողովի աշխատակարգ», «Ներքին ու արտաքին շահակիցների ներգրավման քաղաքականություն և կարգ»: Այս փաստաթղթերը սահմանում են որակի ապահովման հիմնական նպատակներն ու չափանիշները, հանձնաժողովի գործառույթներն ու կառավարման սկզբունքները, ինչպես նաև շահակիցների ներգրավման և նրանց կարիքների բացահայտման մեխանիզմները:

Կրթության որակի ապահովման պատասխանատուի տարեկան աշխատանքային պլանի ուսումնասիրության արդյունքում պարզ դարձավ, որ որակի ապահովման գործողությունները հիմնականում կենտրոնացված են փաստաթղթերի մշակման, ինչպես նաև ներքին և արտաքին շահակիցների կարիքների բացահայտման վրա: Միաժամանակ, նախատեսված գործողությունների իրականացման համար բացակայում է հստակ ժամանակային պլանավորում: Գործիքակազմը սահմանափակված է միայն

հարցաթերթիկների կիրառմամբ, իսկ պատասխանատվությունների բաշխումն ըստ կառուցվածքային ստորաբաժանումների դեռևս սահմանված չէ։

Փորձագիտական այցից պարզ դարձավ, որ որակի ապահովման պատասխանատուն ունի մեկ դրույքաչափ հաստիքային զբաղվածություն։ Որակի պատասխանատուի աշխատանքներն իրականացնելու համար տրամադրվել է առանձին աշխատասենյակ։

2024 թվականին քոլեջում ներդրվել է «ՈՆԱ հանձնաժողովի կողմից հարցումների անցկացման կանոնակարգ» փաստաթուղթը, որը սահմանում է հարցումների կազմակերպման, անցկացման, արդյունքների վերլուծության և կիրառման կարգը։ Կանոնակարգի համաձայն՝ յուրաքանչյուր հարցում պետք է իրականացվի նախապես սահմանված ժամանակացույցով՝ ուսումնական տարվա ընթացքում առնվազն մեկ անգամ։ Սակայն, ինչպես փաստում են փորձագիտական այցի արդյունքները, այս հարցումների իրականացումը չունի հստակ ժամանակացույց, և որոշ կարևոր ուղղությունների ուսումնասիրություն (օրինակ՝ շրջանավարտների գոհունակության, պրակտիկայի արդյունավետության, ուսանողների կարիքների վերհանման) ներառված չէ որակի պատասխանատուի աշխատանքային պլանում։

Փորձագիտական այցի ընթացքում արձանագրվեց, որ իրականացվել են հարցումներ հետևյալ ուղղություններով՝ դասավանդման որակի և արդյունավետության, կրթության որակից ծնողի բավարարվածության, շրջանավարտների քոլեջում ստացած կրթությունից գոհունակության, պրակտիկայի արդյունավետության և որակի, քոլեջում առկա ռեսուրսներից բավարարվածության և կարիքների գնահատման, դասախոսների կոմպետենցիաների, դասախոսների կողմից վարչական և ուսումնաօժանդակ անձնակազմի գնահատման, ինչպես նաև ուսանողների կրթական կարիքների վերհանման։ Փաստաթղթային ուսումնասիրությունների արդյունքում արձանագրվել է, որ հարցումների հավաստիության և հուսալիության գնահատման չափանիշները լիովին ձևակերպված չեն։ Մասնավորապես՝ հստակ սահմանված չեն ուսանողների մասնակցության նվազագույն շեմի սահմանաչափերը։

Հարցումների վերլուծության արդյունքում ի հայտ են եկել մի շարք խնդիրներ, որոնց հիման վրա մշակվել և ներկայացվել են բարելավման մի շարք առաջարկություններ։ Այսպես, «Շրջանավարտների ստացած կրթությունից գոհունակության և կրթական ծառայությունների արդյունավետության գնահատման» հարցման արդյունքներով առաջարկվել է ավելացնել գործնական պարապմունքների ժամաքանակը, վերանայել դասավանդման մեթոդներն ու ուսումնառության նյութերը, արդիականացնել քոլեջի տեխնիկական միջոցները, ինչպես նաև ապահովել վարսավիրական գույքի տրամադրում։

«Դասախոսական կազմի կարիքների վերհանման» հարցման արդյունքում արձանագրվել է, որ դասախոսներն ունեն մասնագիտական գրականության, էլեկտրոնային գրատախտակների, քարտեզների և մուլյաժների կարիք։ «Վարչական և ուսումնաօժանդակ աշխատակազմի կարիքների գնահատման» արդյունքում արձանագրվել է համակարգիչների, տպող սարքերի և շերտավարագույրների համալրման, ինչպես նաև ինտերնետային կապի բարելավման անհրաժեշտություն։ Ծնողների մասնակցության ապահովման նպատակով անցկացված հարցման արդյունքներով առաջարկվել է արդիականացնել լաբորատոր բազան և առավել հաճախ կազմակերպել կրթական ու սոցիալական միջոցառումներ։ «Ուսանողների կրթական կարիքների վերհանման» հարցման արդյունքներով արձանագրվել է արդար և թափանցիկ գնահատման մեխանիզմների, ուսումնառության նյութերի մատչելիության և հասանելիության ապահովման պահանջ։

Արդյունքում բացահայտված որոշ խնդիրներ ստացել են համապատասխան լուծումներ։ Մասնավորապես, ռեսուրսների ապահովման ուղղությամբ համալրվել են աշխատասենյակները, գրադարանը և ուսուցչանոցը՝ նոր համակարգիչներով և տպիչ սարքերով, ինչպես նաև բոլոր անհրաժեշտ վայրերում ապահովվել է ինտերնետային հասանելիություն։ Վերանորոգվել է նիստերի դահլիճը։ Քոլեջը, արձագանքելով ուսանողների կողմից բարձրացված օբյեկտիվ և թափանցիկ գնահատման մեխանիզմների ներդրման անհրաժեշտությանը, 2024–2025 ուսումնական տարում սկսել է գործարկել գիտելիքի ստուգման և գնահատման տարբերակված համակարգ։

Նշենք, որ հարցումների արդյունքները հիմնականում քննարկվում են Մանկավարժական և Տնօրինական խորհուրդների նիստերին։

Արտաքին շահակիցների կարիքները գնահատելու նպատակով քոլեջում հանձնաժողովի առաջարկությամբ 2025 թվականին կազմակերպվել է ֆոկուս-խմբային քննարկում, որին մասնակցել են մասնագիտական կրթական ծրագրերի գործատու գործընկերները, ինչպես նաև համայնքի շահագրգիռ պետական կառույցների ներկայացուցիչները։ Քննարկվել են մասնագիտական ծրագրերի ակնկալվող արդյունքների համապատասխանությունը ոլորտային պահանջներին, ուսանողների պրակտիկայի ընթացքում դրսևորվող մասնագիտական կարողությունները և վարքագիծը, ինչպես նաև քոլեջ-գործատու-համայնք համագործակցության զարգացման հնարավորությունները։ Քննարկումների արդյունքում որոշվել է, օրինակ, ամրապնդել կապը քոլեջի և գործատուների միջև, իրականացնել ՄԿԾ-երի արդիականացում՝ հաշվի առնելով ժամանակակից տեխնոլոգիաները, և ընդլայնել համագործակցության շրջանակները։ Այնուամենայնիվ, հարկ է նշել, որ հանդիպման արդյունքում բարձրաձայնված առաջարկությունները դեռևս չունեն հստակ պլանավորում։

Չնայած քոլեջում մշակվել է որակի ապահովման համակարգի վերանայման քաղաքականություն, սակայն քանի որ համակարգը վերջերս է ներդրվել, դրա վերանայման գործընթացը դեռևս չի իրականացվել։

Անդրադառնալով քոլեջի ներկայացրած ինստիտուցիոնալ ինքնավերլուծությանը՝ կարելի է արձանագրել, որ փաստաթղթում հիմնականում ներկայացված են անհրաժեշտ հիմքերը և կատարված վերլուծությունների արդյունքները։ Ինստիտուցիոնալ կարողությունների ինքնավերլուծության գործընթացը կազմակերպվել և համակարգվել է տնօրենի կողմից, որի համար ձևավորվել է աշխատանքային խումբ և կատարվել է աշխատանքների բաժանում։ Ինքնավերլուծությունը տարածվել է շահակիցների շրջանում։ Փորձագիտական ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ գործատուների և ներքին շահակիցների կարիքները ընդհանուր առմամբ արտացոլված են ինքնավերլուծության մեջ։

Դատողություններ: Փորձագիտական խումբը դրական է գնահատում այն հանգամանքը, որ վերջին մեկուկես տարվա ընթացքում քոլեջում մեկնարկվել է կրթության որակի ներքին ապահովման համակարգի ներդրման գործընթացը։ Հիմնարար փաստաթղթերի մշակումը, պատասխանատու անձի գործառույթների հստակեցումը, ինչպես նաև ՈՆԱ հանձնաժողովի ձևավորումը վկայում են հաստատության՝ որակի ապահովման համակարգի ձևավորման պատրաստակամության մասին։

Միևնույն ժամանակ, խումբը արձանագրում է, որ որակի ապահովման համակարգը դեռևս գտնվում է ձևավորման մեկնարկային փուլում, և համակարգային կիրառման համար անհրաժեշտ է հստակեցնել դրա դերը և գործառույթները կրթական և կառավարման բոլոր գործընթացներում՝ ապահովելով որակի ապահովման համակարգի ներառումը հաստատության ռազմավարական ու օպերատիվ կառավարման շրջանակներում։

ՈՆԱ հանձնաժողովի ստեղծումը գնահատվում է որպես կարևոր քայլ, որը կարող է նպաստել մասնակցային և թափանցիկ գործընթացների ձևավորմանը։ Այնուամենայնիվ,

հանձնաժողովի գործունեությունն առայժմ կրում է կանոնակարգային բնույթ՝ չունենալով բավարար գործնական ներգրավվածություն շահակիցների շրջանում: Խումբը նպատակահարմար է համարում իրականացնել կարողությունների զարգացման միջոցառումներ՝ հանձնաժողովի անդամների համար, խթանել շահակիցների իրազեկվածությունը հանձնաժողովի դերի վերաբերյալ և ապահովել հանձնաժողովի՝ որպես համակարգում ներգրավված բազմաձայն, վստահելի և գործառնական կառույցի լիարժեք գործարկումը: Քննարկման արժանի է նաև տնօրենի ներգրավման ձևաչափը՝ հանձնաժողովի հնարավոր անկախության ու հավասարակշռության ապահովման տեսանկյունից:

Խումբը դրական է գնահատում, որ հարցումների մեխանիզմի միջոցով քոլեջը նախաձեռնել է կարիքների գնահատում և որոշ բարելավումների իրականացում: Նպատակահարմար է, որ հարցումները շարունակվեն՝ ապահովելով հստակ պլանավորված ժամանակացույց, մասնակցության նվազագույն շեմեր, ինչպես նաև տվյալների հուսալիության մեթոդական չափանիշներ: Սա թույլ կտա բարձրացնել արդյունքների վստահելիությունը և օգտագործել վերլուծությունը՝ որպես տվյալահեն որոշումների կայացման գործիք:

Քոլեջում որակի ապահովման նախաձեռնություններն առայժմ կենտրոնացած են հիմնականում փաստաթղթերի մշակման և հարցումների իրականացման վրա: Խումբը նպատակահարմար է համարում զարգացնել համակարգի գործառնական կողմերը՝ իրականացնելով.

- համակարգված պլանավորում,
- գործընթացների վրա հիմնված մոտեցում՝ ներառելով ուսուցում, ուսանողների առաջադիմություն, դասավանդում և կառավարման բաղադրիչները,
- բազմազան և համարժեք գործիքակազմի կիրառում՝ ներառյալ որակի ցուցանիշների սահմանում,
- մշտադիտարկման և արդյունքների գնահատման մեխանիզմների ներդրում:

Այս միջոցառումները կնպաստեն ոչ միայն գործողությունների արդյունքների վերահսկմանը և առաջընթացի գնահատմանը, այլ նաև կձևավորեն որակի ապահովման համակարգի կայունություն, գործնական կիրառելիություն և շարունակական բարելավման մշակույթ հաստատությունում:

Եզրահանգում: Հաշվի առնելով, որ Քոլեջում որակի ապահովման համակարգը դեռևս գտնվում է ձևավորման նախնական փուլում, դերն ու գործառույթները հստակեցված չեն, հանձնաժողովի գործունեությունն ամբողջական և կայուն բնույթ չունի, շահակիցների ներգրավվածությունն ու մասնակցությունը սահմանափակ են, գործիքակազմը դեռևս բազմազան չէ և չի ընդգրկում մշտադիտարկման ու գնահատման հստակ մեխանիզմներ, ինչպես նաև որակի ապահովման գործընթացները հիմնականում սահմանափակվում են փաստաթղթերի մշակմամբ ու հարցումների անցկացման մակարդակով, փորձագիտական խումբը գտնում է, որ Քոլեջը չի համապատասխանում չափանիշ 10-ի պահանջներին:

Եզրակացություն: Փորձագիտական խումբը ՎԶՊՔ-ի ինստիտուցիոնալ կարողությունների համապատասխանությունը չափանիշ 10-ի պահանջներին գնահատում է **անբավարար:**

ՉԱՓԱՆԻՇ	*ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ*
1. Առաքելություն և նպատակներ	Բավարարում է
2. Կառավարում ու վարչարարություն	Բավարարում է
3.Մասնագիտության կրթական ծրագրեր	Բավարարում է
4. Ուսանողներ	Բավարարում է
5.Պրոֆեսորադասախոսական և ուսումնաօժանդակ կազմ	Բավարարում է
6. Հետազոտություն և զարգացում	Բավարարում է
7. Ենթակառուցվածք և ռեսուրսներ	Բավարարում է
8.Հասարակական պատասխանատվություն	Չի բավարարում
9. Արտաքին կապեր և միջազգայնացում	Բավարարում է
10. Որակի ներքին ապահովման համակարգ	Չի բավարարում



_____

Փորձագիտական խմբի ղեկավար
Գայանե Ավետիսյան

Օգոստոսի 15, 2025թ.

ՀԱՎԵԼՎԱԾՆԵՐ

ՀԱՎԵԼՎԱԾ 1. ՓՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ԽՄԲԻ ԱՆԴԱՄՆԵՐԻ ԻՆՔՆԱԿԵՆՍԱԳՐԱԿԱՆՆԵՐ

1. **Գայանե Ավետիսյան՝** 1987–1992 թթ. սովորել է Երևանի պետական համալսարանի աշխարհագրական ֆակուլտետում՝ ստանալով աշխարհագետի և աշխարհագրության ուսուցչի որակավորում: 2006 թ. պաշտպանել է թեկնածուական ատենախոսություն և ստացել աշխարհագրական գիտությունների թեկնածուի գիտական աստիճան, իսկ 2014 թ. արժանացել է դոցենտի գիտական կոչման: Գիտական հետաքրքրությունների շրջանակում ընդգրկված են աշխարհագրական կրթության, տարածական զարգացման և զբոսաշրջության հիմնախնդիրները: 25 գիտական հոդվածների հեղինակ է:

   Մասնագիտական գործունեությունը սկսել է 1991թ.՝ դասավանդելով աշխարհագրություն Գյումրու տարբեր հանրակրթական դպրոցներում (թիվ 26, թիվ 9 և թիվ 1 ավագ դպրոց)՝ մինչև 2020 թ. ներառյալ: 1994 թ.-ից մինչ օրս աշխատում է Շիրակի պետական համալսարանում՝ որպես աշխարհագրության և սերվիսի ամբիոնի դոցենտ: 2011–2012 թթ. դասախոսել է նաև ԵԿՏԱ համալսարանի Գյումրու մասնաճյուղում՝ զբոսաշրջության և սպասարկման նոր տեխնոլոգիաների ամբիոնում: 2019–2022 թթ. եղել է Շիրակի պետական համալսարանի ռեկտորի օգնականը: 2022–2023 թթ. զբաղեցրել է ՇՊՀ աշխարհագրության և սերվիսի ամբիոնի վարիչի պաշտոնը, իսկ 2023 թ.-ից ղեկավարում է ՇՊՀ Որակի ապահովման բաժինը:
2. **Մարինե Գալուբյան՝** 2004–2008 թթ. կրթությունը ստացել է Երևանի պետական տնտեսական համալսարանում՝ մաքսային գործ մասնագիտությամբ: 2010 թթ. ավարտել է Գիտությունների ազգային ակադեմիայի ֆինանսների բաժինը: 2023–2025 թթ. աշխատել է «Սանարե-Ֆարմ» ՍՊԸ-ում՝ որպես տնտեսագետ: 2025 թ.-ից մինչ օրս զբաղվում է Արտաշատի համայնքապետարանի ԿՄՍԵ բաժնի գլխավոր մասնագետի աշխատանքով: 2020–2022 թթ. աշխատել է Արարատի տարածքային պետական քոլեջում՝ կրթության որակի պատասխանատու: 2013–2020 թթ. դասավանդել է Արարատի տարածքային պետական քոլեջի սոցիալտնտեսագիտական և հաշվապահական հաշվառման ամբիոնում: 2024 թ. ստացել է ՀՀ ֆինանսների նախարարության կողմից որակավորված գնումների մասնագետի հավաստագիր: 2025 աշխատում է Արտաշատի համայնքապետարանի ԿՄՍԵ բաժնում, որպես գլխավոր մասնագետ:
3. **Մարինա Փոթիկյան՝** 2003թ. ավարտել է Հայաստանի պետական ճարտարագիտական համալսարանի Կիբեռնետիկայի դեպարտամենտի «Կառավարումը և տեղեկատվությունը տեխնիկական համակարգերում» մասնագիտությունը: Շարունակել է ուսումը նույն համալսարանի Կիբեռնետիկայի դեպարտամենտի «Ավտոմատացում և կառավարում» մասնագիտությամբ, ստացել մագիստրոսի աստիճան: 2012 թվականին ձևակերպվել է հայցորդ՝ Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանի «Տնտեսամաթեմատիկական մեթոդներ» ամբիոնում՝ «Տնտեսամաթեմատիկական մեթոդներ և մոդելավորում» մասնագիտությամբ: 2018 թվականին պաշտպանել է ատենախոսությունը «Մաթեմատիկական տնտեսագիտություն» մասնագիտությամբ և ստացել տնտեսագիտության թեկնածուի աստիճան: 2005-2009 թթ աշխատել է Հայաստանի պետական ագրարային համալսարանում՝ որպես օպերատոր, 2009 -2017 թթ.՝ Հայաստանի ազգային ագրարային համալսարանի ինֆորմատիկայի և մաթ. մեթոդների ամբիոնում՝ որպես ասիստենտ: 2017-2022թթ. նույն համալսարանում՝ որպես դասախոս: 2020-2022թթ. աշխատել է Խաչատուր Աբովյանի անվան հայկական

պետական մանկավարժական համասարանի ինֆորմատիկայի և դրա դասավանդման ամբիոնում՝ որպես ասիստենտ: 2022-2023թթ. աշխատել է ՀՀ ԱԻ նախարարության ճգնաժամային կառավարման պետական ակադեմիայում՝ որպես դասախոս: 2020թ.-ից առ այսօր աշխատում է Երևանի ինֆորմատիկայի պետական քոլեջի մեխատրոնիկայի ամբիոնում՝ որպես դասախոս: 2023թ.-ից առ այսօր աշխատում է ՀՀ ՆԳ նախարարության կրթահամալիրում՝ որպես դոցենտ:

4. **Դավիթ Հարությունյան՝** 2021–2024 թթ. սովորել է Հայաստանի Եվրոպական քոլեջում՝ «Հաշվապահական հաշվառում և աուդիտ» մասնագիտությամբ: 2024 թ.-ից մինչ օրս սովորում է Հայաստանի Եվրոպական համալսարանի Ֆինանսների և բանկային գործի ֆակուլտետում: Մասնակցել է «Մասնագիտական կրթության որակի ապահովման ազգային կենտրոն» հիմնադրամի «Ուսանողության ձայն» նախագծի ուսանող-փորձագետների պատրաստման դասընթացին:

ՀԱՎԵԼՎԱԾ 2. ՓՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ԱՅՑԻ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑԸ

N.	25.05.2025 թ.	Մեկնարկ	Ավարտ	Տևողություն
1.	Հետազոտական աշխատանքների պաշտպանություն	17:00	17:30	30 րոպե
2.	Ռեսուրսների դիտարկում	17:30	18:40	70 րոպե

N.	26.05.2025 թ.	Մեկնարկ	Ավարտ	Տևողություն
1.	Հանդիպում տնօրենի հետ	09:30	10:30	60 րոպե
2.	Հանդիպում ամբիոնի վարիչների հետ	10:40	11:30	50 րոպե
3.	Հանդիպում ինքնավերլուծություն իրականացրած խմբի անդամների հետ	11:40	12:30	50 րոպե
4.	Ընդմիջում, փորձագիտական խմբի քննարկումներ	12:40	13:30	50 րոպե
5.	Հանդիպում Կառավարման խորհրդի անդամների հետ	13:40	14:30	50 րոպե
6.	Հանդիպում շրջանավարտների (10-12 ներկայացուցիչ) հետ	14:40	15:30	50 րոպե
7.	Հանդիպում գործատուների հետ	15:40	16:30	50 րոպե
8.	Հետազոտական աշխատանքների պաշտպանություն	16:40	17:40	60 րոպե
9.	Փաստաթղթերի ուսումնասիրություն և փորձագիտական խմբի փակ հանդիպում	17:50	18:30	40 րոպե

N.	27.05.2025 թ.			Մեկնարկ	Ավարտ	Տևողություն
1.	Հանդիպում դասախոսական կազմի ներկայացուցիչների (10-12 ներկայացուցիչ) հետ			09:30	10:20	50 րոպե
2.	Հանդիպում ուսանողների (10-12 ներկայացուցիչ) հետ			10:30	11:20	50 րոպե
3.	Պրակտիկաների դիտարկում			11:30	12:30	60 րոպե
4.	Հանդիպում ՈւԽ ներկայացուցիչների հետ			12:40	13:20	40 րոպե
5.	Ընդմիջում, փորձագիտական խմբի քննարկումներ			13:30	14:20	50 րոպե
6.	Զուգահեռ հանդիպում «Բանկային Գործ» մասնագիտության կրթական ծրագրի պատասխանատուների և դասախոսների հետ	Զուգահեռ հանդիպում «Համայարգչային գեղարվեստական նախագծում» մասնագիտության կրթական ծրագրի պատասխանատուների և դասախոսների հետ	Զուգահեռ հանդիպում «Գյուղացիական (ֆերմերային տնտեսության կազմակերպում)» մասնագիտության կրթական ծրագրի պատասխանատուների և դասախոսների հետ	14:30	15:30	60 րոպե
7.	Զուգահեռ հանդիպում «Բանկային Գործ» մասնագիտության	Զուգահեռ հանդիպում «Համայարգչային գեղարվեստական նախագծում»	Զուգահեռ հանդիպում «Գյուղացիական(ֆերմերային տնտեսության	15:40	16:30	50 րոպե

	և կրթական ծրագրերի ուսանողների հետ	մասնագիտության կրթական ծրագրի ուսանողների հետ	կազմակերպում)» մասնագիտության կրթական ծրագրի ուսանողների հետ			
8.	Հանդիպում ստորաբաժանումների հետ (ուսումնական մաս, կարերայի կենտրոն, գրադարան, միջազգային ծրագրերի բաժին, բուժկետ, արխիվ, կադրերի բաժին, հաշվապահություն, պրակտիկայի բաժին)			16:40	17:40	60 րոպե
9.	Բաց հանդիպում			17:50	18:30	40 րոպե
10.	Փաստաթղթերի ուսումնասիրություն և փորձագիտական խմբի փակ հանդիպում			18:30	19:00	30 րոպե

N.	28.05.2025թ.	Մեկնարկ	Ավարտ	Տևողություն
1.	Հանդիպում Որակի ապահովման պատասխանատուի հետ	09:30	10:30	60 րոպե
2.	Փաստաթղթերի ուսումնասիրություն և փորձագիտական խմբի փակ հանդիպում	10:40	12:20	110 րոպե
3.	Ընդմիջում, փորձագիտական խմբի քննարկումներ	12:30	13:20	50 րոպե
4.	Փաստաթղթերի ուսումնասիրություն և փորձագիտական խմբի փակ հանդիպում	13:30	14:30	60 րոպե
5.	Ամփոփիչ հանդիպում ղեկավար կազմի հետ	14:40	15:00	20 րոպե

ՀԱՎԵԼՎԱԾ 3. ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՎԱԾ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԻ ՑԱՆԿ


N	Փաստաթղթի անվանում	Չափանիշ
1.	ԿԽ նիստերի արձանագրություններ	2
2.	Ամբիոնների նիստերի արձանագրություններ	2
3.	Իրավակարգապահական հանձնաժողովի նիստերի արձանագրություններ	2
4.	Մանկավարժական խորհրդի նիստերի արձանագրություններ	2
5.	«Համակարգչային գեղարվեստական նախագծում» ՄԿԾ-ի ուսումնական պլան	3
6.	Պրակտիկաների անցկացման հաճախականությունը, ներառյալ ներգրավվող գործատուների թվաքանակը /ըստ կրթական ծրագրերի՝ ամփոփ աղյուսակի տեսքով/	3
7.	Պրակտիկայի օրագրի լրացված օրինակներ բոլոր կրթական ծրագրերից	3
8.	Հետազոտական աշխատանքների, ռեֆերատների, կուրսային աշխատանքների օրինակներ	3
9.	Հետազոտական, ռեֆերատների, կուրսային և ինքնուրույն աշխատանքների կատարման ուղեցույցներ	3
10.	Պետական քննական հարցաշարեր	3
11.	Քննական հարցատոմսերի նմուշներ	3
12.	ՈւԽ նիստերի արձանագրություններ	4
13.	ՈւԽ աշխատանքային պլան	4
14.	Դասախոսների փաթեթներ /3 ՄԿԾ-ներից/	5
15.	Դասալսումների ժամանակացույց	5
16.	Դասալսումների փաթեթներ	5
17.	Հետազոտական առաջադրանքների կամ աշխատանքների հաստատված ցանկ կրթական ծրագրերի շրջանակում	6
18.	Ֆինանսական ռեսուրսների կառավարում (%-ով ամբողջ բյուջեի նկատմամբ) /Էլ. հարցաշար/	7
19.	Հաստիքացուցակ/տարիֆիկացիա	7
20.	Համագործակցության պայմանագրեր, հուշագրեր	9
21.	Օտար լեզուների իմացության մակարդակի վերաբերյալ հիմքեր /դասախոսներ և ուսանողներ/	9
22.	Կարիքների վերհանմանն ուղղված հարցաթերթիկի ձևանմուշ	10
23.	Կարիքների վերհանմանն ուղղված հարցաթերթիկների վերլուծություն	10
24.	Որակի պատասխանատուի տարեկան աշխատանքային պլան	10
25.	Ֆոկուս խմբերի ու բաց քննարկումի արձանագրություն	10
26.	Հարցումների հարցաշարեր	10
27.	Հարցումների ընդհանուր վերլուծություններ	10

- Առարկայական կաբինետներ
- Մասնագիտական լաբորատորիաներ
- Գրադարան
- Ընթերցասրահ
- Համակարգչային լսարաններ
- Բուժկետ
- Հանդիսությունների դահլիճ

ՀԱՎԵԼՎԱԾ 5. ՄՈՒՀ-Ի ԿԱԶՄԱԿԵՐՊԱԿԱՆ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ

Հաստատում եմ՝
«Վարդենիսի «Բաղնյան» պետական քոլեջ» ՊՈԱԿ-ի տնօրեն՝ Ա.Ս.Սիրադեղյան
«__» ____ 2024թ.

ԿԱԶՄԱԿԵՐՊԱԿԱՆ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԻ ՍԽԵՄԱՏԻԿ ՊԱՏԿԵՐԸ՝ ԸՍՏ ԵՆԹԱԿԱՑՈՒԹՅԱՆ ԵՎ ՀԱՂՈՐԴԱԿՑՈՒԹՅԱՆ ԿԱՊԵՐԻ



ԿԳՄՄՆ - Կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություն

ՈԱԱԿ - Մանագիտական կրթության որակի ապահովման ազգային կենտրոն

ՎԲՊՔ - Վարդենիսի «Բաղեյան» պետական քոլեջ

ՄԿԾ - մասնագիտության կրթական ծրագիր

ՄԿՈւ - Մասնագիտական կրթություն և ուսուցում

ՄՈւՀ - մասնագիտական ուսումնական հաստատություն

ՈԱ - որակի ապահովում

ՈԱՇ - որակավորումների ազգային շրջանակ

ՊԿՉ - պետական կրթական չափորոշիչ

ՌԾ - ռազմավարական ծրագիր

ՈւԽ - ուսանողական խորհուրդ

ՈւՕ կազմ -ուսումնաօժանդակ կազմ